Եվրոպայի Խորհուրդ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագիր

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհուրդ

Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագիր

CM (2022) 121-վերջնական

Փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2022թ.-ի նոյեմբերի 3-ին

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Եվրոպայի խորհրդի «Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026 թվականների ծրագիրը» ռազմավարական ծրագրային փաստաթուղթ է, որն ուղղված է Հայաստանի օրենսդրության, հաստատությունների ու գործելակերպի՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության եւ ժողովրդավարության ոլորտներում եվրոպական չափանիշներին հետագա համապատասխանեցմանը: Սույն գործողությունների ծրագրով նախատեսվում է օժանդակել Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված ջանքերին:

Սույն գործողությունների ծրագրի առաջնահերթություններով հաշվի են առնվում մի շարք կառույցների, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (ՆԿ), Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ), Եվրոպայի խորհրդի Տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես), Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի (Հանձնակատար), «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) որոշումները, բանաձեւերը, հանձնարարականները, զեկույցների եզրակացություններն ու կարծիքները, ինչպես նաեւ Հայաստանի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռները: Փաստաթղթում հաշվի է առնվում նաեւ Հայաստանի Հանրապետության բարեփոխումների ազգային օրակարգը, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը, 2019–2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը, 2020 թվականին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության 6-րդ գլուխը՝ «Ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության ապահովումը», Հայաստանի Հանրապետության քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը եւ այլն:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը եւ Հայաստանի իշխանությունները համաձայնել են շարունակել համատեղ աշխատանքը համագործակցային ծրագրերի, բարեփոխումների միջոցով, որոնք նպատակաուղղված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) համակարգի եւ կենսաբժշկական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ մամուլի ազատության արդյունավետության բարձրացմանը, կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին եւ երեխաների իրավունքների բարելավմանը, խտրականության դեմ պայքարին եւ փոքրամասնությունների իրավունքների խթանմանը, սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովմանը, արդարադատության անկախության եւ արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի եւ կիբեռհանցագործության դեմ պայքարին, բանտերում առողջապահական պայմանների բարելավմանը եւ դատական համակարգում պրոբացիայի դերի բարձրացմանը, լավ կառավարման եւ տեղական կառավարման բարեփոխումների խթանմանը:

Գործողությունների ծրագիրը հիմնվում է նաեւ նախորդ գործողությունների ծրագրերի (Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագիր, Հայաստանի համար իրականացվող 2015-2018 թվականների գործողությունների ծրագիր, Հայաստանի համար իրականացվող 2012-2014 թվականների գործողությունների ծրագիր) արդյունքների վրա: Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագիրը հանգեցրեց մասնավորապես նոր

Քրեական օրենսգրքի (ՔՕ) եւ Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) ընդունմանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարումը բարելավելուն նպատակաուղղված Միջգերատեսչական կոմիտեի ստեղծմանը, ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության հետ առնչվելիս սոցիալական աշխատողների, ոստիկանության ծառայողների, կրթության ոլորտի փորձագետների եւ լրագրողների մտածելակերպի եւ գործելակերպի փոփոխությանը, առողջապահության ոլորտի մասնագետների մասնագիտական էթիկայի կանոնների ընդունմանը, վերանայված դատական օրենսգրքի ընդունմանը եւ դատավորների գործունեության գնահատման նոր մեթոդաբանության եւ ընթացակարգերի ներդրմանը, Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների ընդլայնմանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը: Հայաստանի համար իրականացվող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրն առավելապես հիմնվում է նախորդ գործողությունների ծրագրերի եւ դրանց վերաբերյալ գնահատումների շրջանակում սերտած դասերի վրա: Այն կպահպանի արդեն իսկ ձեռք բերված արդյունքները, ինչպես նաեւ այն 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շարունակությունն է:

Գործողությունների ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի ջանքերին՝ ուղղված *ՄԱԿ-ի Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգի՝ Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ)* իրականացմանը, մասնավորապես՝ 3-րդ նպատակի՝ «Ամուր առողջություն եւ բարեկեցություն», 4-րդ նպատակի՝ «Որակյալ կրթություն», 5-րդ նպատակի՝ «Գենդերային հավասարություն», 8-րդ նպատակի՝ «Արժանապատիվ աշխատանք եւ տնտեսական աճ», 10-րդ նպատակի՝ «Անհավասարությունների կրճատում», 11-րդ նպատակի՝ «Կայուն քաղաքներ եւ համայնքներ», 13-րդ նպատակի՝ «Գործողություն հանուն կլիմայի» եւ 16-րդ նպատակի՝ «Խաղաղություն, արդարություն եւ ամուր հաստատություններ», իրականացմանը:

Սույն գործողությունների ծրագրի ընդհանուր բյուջեն 19 միլիոն եվրո է: Թեեւ 0.9 միլիոն եվրոյի չափով ֆինանսավորումն ապահովված է, 2023-2026 թվականների համար սահմանված առաջնահերթ գործողություններն ամբողջությամբ իրականացնելու համար լրացուցիչ ֆինանսավորում է անհրաժեշտ:

Եվրոպայի խորհուրդը եւ Հայաստանը կշարունակեն համագործակցությունը՝ առկա օրենսդրական դաշտը բարելավելու, դրա արդյունավետ կիրառումն ապահովելու եւ երկրի օրենսդրությունն ու գործելակերպը եվրոպական չափանիշներին մոտարկելու՝ ազգային կառույցների կարողությունները զարգացնելու ուղղությամբ՝ մարդու իրավունքները խթանելու, իրավունքի գերակայությունն ամրապնդելու եւ կառավարման ժողովրդավարական սկզբունքներն ապահովելու նպատակով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 2
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 4
ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5
ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8
1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 8
1.1.1. Հայաստանը եւ Եվրոպայի խորհուրդը 8
1.1.2. Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության ծրագրերի առավելությունը 9
1.1.3. Նախորդ Գործողությունների ծրագրի հիմնական արդյունքները 10
1.2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 12
ՄԱՍ II. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
2.1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 14
2.1.1. ՄԻԵԿ-Ի ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 16
2.1.2. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ 31
2.1.3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ, ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌՈՒՄ 36
2.1.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 39
2.2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 40
2.2.1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ 41
2.2.2. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 44
2.3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 54
2.3.1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 55
ՄԱՍ III. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 60
3.1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 60
3.2. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ 64
3.3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ 70
3.4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 71
3.5. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 72
ՀԱՎԵԼՎԱԾ I. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 74
ՀԱՎԵԼՎԱԾ II. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 84
ՀԱՎԵԼՎԱԾ III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 88
ՀԱՎԵԼՎԱԾ IV. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ/ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 89

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇԿԽԿ	Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե
Գործողությունների ծրագիր	Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների ծրագիր
ԱԶԳ	Ավստրիական զարգացման գործակալություն
ՎԱԼ	Վեճերի այլընտրանքային լուծում
ՓԼԴՊ	Փողերի լվացման դեմ պայքար
Բեռնի կոնվենցիա	«Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա
Բուդապեշտի կոնվենցիա	Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիա
ՀՀՄ	Հայաստանի համայնքների միություն
ՔՕ	Քրեական օրենսգիրք
ԵԴԽԽ	Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ
ՀԸԳՀ	Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ԱԱԵՀ	Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով
ԱՖԴՊ	Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար
ՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե
ՔԴՕ	Քրեական դատավարության օրենսգիրք
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՏԻԵԽ	Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
ՌԱԵՀ	Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով
ՏՓԼԵԽ	Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա
ԸՎԼ	Ընտրությունների հետ կապված վեճերի լուծում
ԽԿԿ	Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
ՄԻԳՏ	Մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինություն
ՍԻԵԿ	Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի	Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի

ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ԱՓՇԿ	«Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիա
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԺՀԶԽ	Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խումբ
ԳՐԵԿՈ	Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ
ԳՐԵՏԱ	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների հարցերով փորձագիտական խումբ
«HELP»	Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության եվրոպական ծրագիր
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԻՊ գրասենյակ	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
Ստամբուլի կոնվենցիա	«Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
Լանզարոտեի կոնվենցիա	«Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
ԼԳԲՏԻ	Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս
Լուգանոյի կոնվենցիա	«Շրջակա միջավայրի համար վտանգավոր գործունեության հետեւանքով առաջացած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» կոնվենցիա
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ՄԱՆԻՎԱԼ	Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների կոմիտե
ԽԱ	Խորհրդարանի անդամներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՍԲ	Սովորական բյուջե
ԱԵՍՇՈ	Առցանց եղանակով երեխայի սեռական շահագործում եւ նրա նկատմամբ սեռական ոտնձգություն
ԾԳՏԳ	Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակ
ԺՀՄԻԳ	ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակ
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
Օվիեդոյի կոնվենցիա	«Կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների եւ արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիա («Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին» կոնվենցիա)

ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ՀԿՀԲ	Հանրային կառավարման համակարգի բարեփոխումներ
ԼԿԳ	Եվրոպայի խորհրդի եւ Եվրոպական միության լավ կառավարման համատեղ ծրագրային գործընկերություն. նախկինում՝ ծրագրային համագործակցության կառուցակարգ (ԾՀԿ)
ՔԲԿ	Քրեակատարողական բժշկության կենտրոն
Վարչապետի աշխատակազմ	Վարչապետի աշխատակազմ
ԾԿՄ	Ծրագրի կառավարման մեթոդաբանություն
ՇԶՀԳ	Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալություն
ՇՄԶՀԳ	Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում եւ գենդերային ինքնություն
ՎԲ	Վարչատարածքային բարեփոխում
Հանձնակատար	Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար
Կոնգրես	Եվրոպայի խորհրդի Տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրես
Թրոմսո կոնվենցիա	«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիա
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ԵԻԿ	«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՄԱԿ ԿԶՆ	Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակ
Վենետիկի հանձնաժողով	«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողով

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

1.1.1. Հայաստանը եւ Եվրոպայի խորհուրդը

Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի 42-րդ անդամ պետությունը 2001 թվականի հունվարի 25-ին: Ըստ այդմ, Հայաստանը ստանձնել եւ համաձայնել է կատարել մի շարք կոնկրետ պարտավորություններ, որոնք թվարկված են Խորհրդարանական վեհաժողովի թիվ 221(2000) կարծիքում:

Հայաստանն ընդունել է Կանոնադրության 3-րդ հոդվածով բոլոր անդամ պետությունների համար նախատեսված պարտավորությունները. դրանք են[1]՝ հետեւել բազմակարծիք ժողովրդավարության եւ իրավունքի գերակայության սկզբունքներին, ինչպես նաեւ հարգել իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Առ այսօր Հայաստանը ստորագրել է Եվրոպայի խորհրդի 83 համաձայնագիր, որոնցից 69-ը վավերացվել են,[2] եւ ենթարկվում է Եվրոպայի խորհրդի մի շարք մեխանիզմների, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ), Նախարարների կոմիտեի (ՆԿ), Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ), Տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես), Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի (Հանձնակատար), «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ), Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ), Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ), Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների կոմիտեի (ՄԱՆԻՎԱԼ), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ), «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի (ԱՓՇԿ), «Սեռական շահագործումից եւ սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի Կողմերի կոմիտեի (Լանզարոտեի կոմիտե), Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների հարցերով փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ), Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ՏՓԼԵԽ) մեխանիզմները: Հայաստանը «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) ստորագրել է 2018 թվականի հունվարի 18-ին. դրա վավերացման գործընթացն ընթացքի մեջ է:

2002 թվականից Հայաստանն օգտվել է նաեւ Եվրոպայի խորհրդի համագործակցային ծրագրերից: 2012-2014, 2015-2018 եւ 2019-2022 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումներին աջակցելու նպատակով կազմված՝ գործողությունների ծրագրի մի քանի փաստաթղթեր այդ ժամանակից սկսած ապահովել են Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության ավելի ռազմավարական շրջանակ: Նախորդ ծրագրերը, որոնց աջակցել է Եվրոպական

[1] Եվրոպայի խորհրդի հիմնադիր փաստաթուղթ:
[2] Եվրոպայի խորհրդի համաձայնագրերի գրասենյակ, Հայաստան:

միությունը, իրականացվել են աջակցելու երկրին Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխանելու հարցում, հատկապես քրեական արդարադատության եւ քրեակատարողական բարեփոխումներին աջակցելու, արդարադատության համակարգի անկախությունը, պրոֆեսիոնալիզմը եւ հաշվետվողականությունն ամրապնդելու, կանանց համար արդարադատության մատչելիությունը բարձրացնելու, բարեվարքությունը եւ կոռուպցիայի ու տնտեսական հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու, ընտրական օրենսդրության եւ գործելակերպի ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով: Նույն կերպ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կամավոր ներդրումները հնարավոր են դարձրել իրականացնելու ծրագրեր՝ զինված ուժերում մարդու իրավունքների չափանիշների կիրառումն ամրապնդելու, դատական ոլորտի բարեփոխումներին եւ պրոբացիայի ծառայության ստեղծմանն աջակցելու, սահմանադրական բարեփոխումներին, տեղական ժողովրդավարության ամրապնդմանը, ապակենտրոնացմանը եւ լավ կառավարմանը, ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին աջակցելու բնագավառներում:

1.1.2. Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության ծրագրերի առավելությունը

Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության ծրագրերը չափանիշների սահմանման, մոնիթորինգի եւ համագործակցության յուրօրինակ ռազմավարական եռանկյունու անբաժան մասն են կազմում. իրավական առումով պարտադիր չափանիշների մշակումը կապվում է դրանց՝ անկախ մեխանիզմների միջոցով իրականացվող մոնիթորինգին, եւ լրացվում են տեխնիկական համագործակցությամբ՝ հեշտացնելու դրանց կիրառումը: Կազմակերպության գործողությունները մշակվում եւ իրականացվում են այն բնագավառներում, որոնցում Եվրոպայի խորհուրդն ունի ամուր փորձառություն եւ լրացուցիչ առավելություններ:



Գծապատկեր 1. Եվրոպայի խորհրդի ռազմավարական եռանկյունի

Սույն գործողությունների ծրագիրը մեծամասամբ հիմնված է Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի եւ փորձագիտական խորհրդատվական մարմինների՝ երկրի վերաբերյալ վերջերս ընդունած որոշումների, բանաձեւերի, հանձնարարականների, եզրահանգումների, զեկույցների եզրակացությունների ու կարծիքների, ինչպես նաեւ Հայաստանի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների վրա: Դրանում հաշվի են առնվում նաեւ Գլխավոր քարտուղարի վերջին

տարեկան զեկույցներում վերհանված մարտահրավերները[3]: Բացի այդ, այն կազմվել է Եվրոպայի խորհրդի հետ՝ հիմնվելով նախորդ գործողությունների ծրագրի արդյունքների վրա, եւ արտացոլում է երկրի առաջնահերթ բարեփոխումները, հատկապես Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության, Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մեջ, 2020 թվականին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության 6-րդ գլխում՝ «Ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության ապահովումը», Հայաստանի Հանրապետության քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության մեջ նշվածները:

Սույն գործողությունների ծրագիրը մշակելիս եւ մասնավորապես՝ բարեփոխումներին ուղղված համագործակցային տեխնիկական աջակցության ծրագրերը կազմելիս հաշվի են առնվել Եվրոպայի խորհրդի հետեւյալ կառույցների, մոնիթորինգային մեխանիզմների եւ փորձագիտական խորհրդատվական մարմինների վերհանած բացերը. համապատասխան ելակետային փաստաթղթերն ընդգրկված են IV հավելվածում:

Սույն գործողությունների ծրագրում ներառված համագործակցային գործողությունների համար որպես օժանդակ նյութեր օգտագործվել են նաեւ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաներ եւ Կազմակերպության այլ փաստաթղթեր:

1.1.3. Նախորդ Գործողությունների ծրագրի հիմնական արդյունքները

Քովիդ-19 համավարակի համատեքստում Եվրոպայի խորհուրդը ձգտել է ապահովել գործունեության շարունակականությունը նախորդ գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում՝ միեւնույն ժամանակ հարգելով հանրային առողջապահության ազգային միջոցառումները: Եվրոպայի խորհուրդն իր համագործակցային գործունեության ամբողջ ընթացքում դոնորների եւ շահառուների հետ սերտ համագործակցությամբ շարունակաբար ընդունել եւ իրականացրել է մեղմացմանն ուղղված միջոցառումներ: Դրանք ներառում էին ծրագրային հարմարեցումներ եւ տեխնիկական լուծումների որոնում: Հանգամանքներից ելնելով՝ նույն մոտեցումը կկիրառվի սույն գործողությունների ծրագիրն իրականացնելիս:

Սույն գործողությունների ծրագրում հաշվի են առնվում Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի արդյունքները, ինչպիսիք են՝

<u>Մարդու իրավունքներ.</u>

- նոր Քրեական օրենսգրքի (ՔՕ) ընդունումը, որով նախատեսվում են պատժիչ մոտեցումից անցում կատարել վերասոցիալականացման մոտեցման, կոռուպցիայի դեմ պայքարի ավելի արդյունավետ մեխանիզմներ, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը.

- նոր Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) ընդունումը, որով

[3] Գլխավոր քարտուղարի 2022 թվականի տարեկան զեկույցը՝ *«Շարժվելով դեպի 2022 թվական»*, և Գլխավոր քարտուղարի 2021 թվականի տարեկան զեկույցը՝ *«Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության վիճակի մասին»*:

նախատեսվում են քրեական վարույթի ընթացքում հանրային եւ մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանություն եւ քրեական վարույթում ներգրավված անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության ավելի լավ երաշխիքներ, համաձայնության եւ համագործակցության ընթացակարգեր.

- միջգերատեսչական կոմիտեի ստեղծումը՝ նպատակաուղղված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարման բարելավմանը.

- Հայաստանի գլխավոր ռազմական համալսարանի կրթական ծրագրերի շրջանակներում կանանց իրավունքների վերաբերյալ վերապատրաստման դասընթացի ինստիտուցիոնալացումը եւ մարդու իրավունքների խախտումների հետ առնչվելիս ռազմական ոստիկանության անձնակազմի ավելի լավ կարողություններ.

- ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության հետ առնչվելիս սոցիալական աշխատողների, ոստիկանության ծառայողների, կրթության ոլորտի փորձագետների եւ լրագրողների մտածելակերպի եւ գործելակերպերի փոփոխությունը.

- «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Լանզարոտեի կոնվենցիա) վավերացումը՝ այդպիսով բարձրացնելով բռնության տարբեր ձեւերից երեխաների պաշտպանության մասով իրավական դաշտի եւ քաղաքականության համապատասխանությունը.

- առողջապահության ոլորտի մասնագետների մասնագիտական էթիկայի կանոնների ընդունումը՝ ստեղծելով առողջապահության ոլորտի մասնագետների համար մի շրջանակ, որի նպատակն է կարգավորել բուժաշխատողների եւ պացիենտների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ առողջապահության ոլորտի մասնագետներին ներկայացվող էթիկական պահանջները հանրային առողջության պաշտպանության ոլորտում։

<u>Իրավունքի գերակայություն.</u>

- վերանայված դատական օրենսգրքի ընդունումը եւ Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի շրջանակում նոր մեթոդաբանության եւ ընթացակարգերի ներդրումը՝ ապահովելով հավաստի եւ անկողմնակալ տեղեկություններ՝ դատական գործունեության վերաբերյալ.

- ավելի համակարգված մոտեցում Պրոբացիայի ծառայությանը՝ հեշտացնելով հանցագործություն կատարած անձանց վերաինտեգրումը հասարակությանը.

- քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների եւ ինքնավնասումների կանխարգելման եւ հոգեկան առողջության գնահատման կարողությունների ընդլայնումը՝ նպաստելով քրեակատարողական հիմնարկներում սուիցիդալ վարքագծի եւ հոգեկան առողջության խնդիրների նվազեցմանը.

- Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների ընդլայնումը հանրային պաշտոնատար անձանց եկամուտների, ակտիվների տոկոսների եւ ծախսերի հայտարարագրերի ստուգման եւ վերլուծության ոլորտում.

- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում գործող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով զբաղվող վարչության

ստեղծումը[4].

- Հակակոռուպցիոն կոմիտեի՝ մասնագիտացված քննչական մարմնի ստեղծումը, որի նպատակն է բարձրացնել կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը.

- Գլխավոր դատախազությունում մասնագիտացված վարչության ստեղծումը, որը դատախազական վերահսկողություն է իրականացնում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննվող կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ.

- Հակակոռուպցիոն դատարանների ստեղծումը, որոնք պետք է սկսեն գործել մինչեւ 2022 թվականի ավարտը։

Ժողովրդավարություն.

- Հայաստանի համայնքների միության կայացումը որպես պաշտոնական, վստահելի եւ կայուն մարմին՝ տեղական եւ ազգային իշխանությունների միջեւ փոխգործակցությունը հեշտացնելու եւ իր անդամներին աջակցություն ցուցաբերելու գործում.

- արդյունավետ խորհրդատվական մեխանիզմներ ընտրված համայնքներում՝ ամրապնդելով մասնակցային գործընթացները եւ խթանելով տեղական կառավարման մարմինների եւ որոշումների կայացման գործընթացի բաց, թափանցիկ եւ հաշվետվողական լինելը։

Խորհրդակցական գործընթաց

Սույն գործողությունների ծրագիրը կազմվել է Հայաստանի իշխանությունների հետ խորհրդակցությունների արդյունքում։

2022 թվականի մարտի 2-ին Եվրոպայի խորհրդի քարտուղարության ներկայացուցիչները եւ Հայաստանի իշխանությունները Երեւանում անցկացրեցին համակարգող կոմիտեի նիստ՝ նախորդ գործողությունների ծրագրի իրականացումը գնահատելու նպատակով։ 2022 թվականի մարտի 18-ին տեխնիկական մակարդակում տեղի ունեցան թեմատիկ խորհրդակցություններ՝ համագործակցության հնարավոր կոնկրետ ոլորտների առաջնահերթությունների վերաբերյալ, ազգային իշխանությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ Եվրոպայի խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչների հետ։

1.2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն գործողությունների ծրագիրը ռազմավարական ծրագրային փաստաթուղթ է 2023-2026 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածի համար։ Դրա նպատակն է շարունակել օժանդակելու Հայաստանում բարեփոխումների իրականացմանը, որոնք ուղղված են Հայաստանի օրենսդրության, հաստատությունների եւ գործելակերպի՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության եւ ժողովրդավարության ոլորտներում եվրոպական չափանիշներին հետագա համապատասխանեցմանը, եւ այսպիսով օժանդակել երկրի՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն ստանձնած

[4] Ավելի քան 340 գործերով քննությունը ներկայումս ընթացքի մեջ է (2022 թվականի հուլիս)։

պարտավորությունների կատարմանն ուղղված ջանքերին:

Գործողությունների ծրագրում ներառված համագործակցության ոլորտները հետեւյալն են:

➢ Եվրոպայի խորհուրդը կշարունակի օժանդակել Հայաստանի իշխանություններին ռազմավարական նշանակության բնագավառներում ձեռնարկված բարեփոխումներն առաջ տանելու (եւ հնարավորության դեպքում՝ ավարտին հասցնելու) գործում, մասնավորապես՝

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) համակարգի արդյունավետության բարձրացում ազգային եւ եվրոպական մակարդակում.
- օժանդակություն՝ ուղղված քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին.
- զինված ուժերում մարդու իրավունքների կիրառման ընդլայնում եւ Հայաստանում զինվորական ծառայության ոլորտում կանանց իրավունքների եւ դերի ամրապնդում.
- գենդերային հավասարության խթանում, կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքար եւ կանանց համար արդարադատության մատչելիության բարելավում.
- խտրականության դեմ պայքար.
- երեխաների իրավունքներ.
- մարդու իրավունքների պաշտպանություն կենսաբժշկության ոլորտում.
- արդարադատության համակարգի անկախության եւ արդյունավետության բարձրացում.
- քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների տրամադրման ընդլայնում.
- աջակցություն լիարժեք պրոբացիոն ծառայության զարգացմանը.
- կոռուպցիայի դեմ պայքար.
- կիբեռհանցագործության դեմ պայքար.
- տեղական ժողովրդավարության եւ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության ամրապնդում:

➢ Բացի այդ, սույն գործողությունների ծրագրի շրջանակներում առաջարկվող համագործակցության ոլորտները ներառում են 2019-2023 թվականների գործողությունների ծրագրով սահմանված որոշ ոլորտներ, որոնք հնարավոր չի եղել ֆինանսավորել, եւ որոնք դեռ արդիական են, կամ Հայաստանի իշխանությունների հետ համատեղ սահմանված համագործակցության նոր ոլորտներ՝ հիմնվելով Եվրոպայի խորհրդի կառույցների, մոնիթորինգի մեխանիզմների եւ փորձագիտական խորհրդատվական մարմինների՝ վերջերս կատարած աշխատանքների վրա: Դրանք մասնավորապես ներառում են՝

- տեղահանված անձանց մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանում.
- իրավական ոլորտի մասնագետների կարողությունների ամրապնդումը՝ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով.
- արտահայտվելու ազատության եւ լրատվամիջոցների ազատության ապահովումը.
- ատելության խոսքի եւ ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարը.
- փոքրամասնությունների եւ փոքրամասնությունների լեզուների

պաշտպանությունը.
- տվյալների պաշտպանությունը.

սոցիալական իրավունքների, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների եւ զբաղվածության ապահովումը.
- սոցիալական աշխատողների կարողությունների ընդլայնումը.
- ոստիկանության բարեփոխումներին աջակցելը՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան.
- ընտրությունները։

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը կիրառում է իր գործունեության բոլոր մակարդակներում եւ փուլերում։ Այս մոտեցումը ներառում է մարդու իրավունքների նորմերը եւ գործընթացները ծրագրի կառավարման մեջ։ Միեւնույն ժամանակ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը փորձում է խուսափել մարդու իրավունքներին ուղղված ցանկացած ոչ միտումնավոր վնասից, իր աշխատանքում անհավասարակշռությունից կամ բացասական ազդեցությունից։ Այս մոտեցումը համալիր առաջնահերթություն է գործողությունների ծրագրի համար։ Գենդերային հավասարության եւ հետեւաբար համալիր գենդերային մոտեցման խթանումը՝ որպես մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման մաս, շարունակում է լինել սույն գործողությունների ծրագրի առանցքային բաղադրիչ։ Համալիր գենդերային մոտեցումը կօգնի ավելի արդյունավետորեն հասցեագրել Հայաստանում ապրող անհատների կարիքները՝ առանց խտրականության, եւ ընդլայնել գործողությունների ծրագրի իրականացման որակն ու արդյունավետությունը։ Նոր գործողությունների ծրագիրը կաջակցի Հայաստանի հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության որոշ գերակա ոլորտների իրականացմանը՝ իր եռամյա ճանապարհային քարտեզի շրջանակում սահմանված կարիքներին համապատասխան։

Իր նպատակներին հասնելու ճանապարհին սույն գործողությունների ծրագիրը կաջակցի նաեւ *Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 2030 օրակարգի* իրագործմանն ուղղված Հայաստանի ջանքերին։

ՄԱՍ II. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորեւ թվարկվում են գործողությունները՝ ըստ 2022-2025 թվականների ծրագրում եւ բյուջեում սահմանված հենասյուների։

2.1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2015 թվականին ընդունված փոփոխված Սահմանադրությունը հանգեցրել է մարդու իրավունքներին վերաբերող սահմանադրական դրույթների զգալի վերանայումների, եւ դրանով ընդլայնվել է Հայաստանում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության եւ խթանման իրավական եւ ինստիտուցիոնալ դաշտը։ Նոր սահմանադրությամբ տարբերակում է մտցվել եւ հիմնական իրավունքների ու ազատությունների կարգավորումն առանձնացվել է տնտեսական, սոցիալական եւ մշակութային տիրույթներում առկա օրենսդրական երաշխիքներից, եւ ընդհանուր առմամբ ընդլայնվել է մարդու իրավունքների շրջանակը եւ սահմանումը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան։

2019 թվականի դեկտեմբերին Կառավարության որոշմամբ ընդունված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող գործողությունների ծրագիրը վերաբերում են «լուրջ թերություններին, որոնց բախվում են կառավարություններն իրավունքների վրա հիմնված իրենց քաղաքականությունների մշակման եւ իրականացման գործում, որոնք հաճախ հանգեցնում են մարդու քաղաքական, քաղաքացիական, տնտեսական եւ սոցիալական իրավունքների կոպիտ խախտումների»՝ որպես Հայաստանի առջեւ ծառացած հիմնական մարտահրավերներից մեկը: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության նախապատրաստման շրջանակներում մարդու իրավունքների հարցերով հիմնական միջազգային կազմակերպությունների վերհանած խնդիրների վերլուծության արդյունքում Հայաստանի իշխանություններն առանձնացրել են հետեւյալ հարցերը.

1. զինված ուժերում եւ ուղղիչ հիմնարկներում մահացու դեպքեր եւ վատ վերաբերմունք (խոշտանգումներ, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք). նման միջադեպերի ոչ արդյունավետ քննություն.

2. արդար դատաքննության իրավունքի իրացման ոչ համարժեք պայմաններ, դատական համակարգի անկախության եւ անաչառության հետ կապված լուրջ կասկածներ, դատարանների նկատմամբ հանրության անվստահություն.

3. ոչ համարժեք քայլեր՝ ուղղված հավասար իրավունքների եւ համապատասխան գործելակերպերի մթնոլորտի ապահովմանը եւ բոլոր հիմքերով խտրականության դեմ պայքարին.

4. հավաքների ազատության իրացման մասով անհամաչափ սահմանափակումներ եւ իշխանությունների կողմից չափազանց կոշտ արձագանք.

5. պետության կողմից ոչ պատշաճ արձագանք՝ կապված առանձին խոցելի խմբերի նկատմամբ, ինչպիսիք են երեխաները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները եւ փոքրամասնությունները, բռնության եւ մարդու իրավունքների այլ խախտումների հետ[5]:

Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել Հայաստանին՝ բարեփոխումներ ձեռնարկելու եւ դրանք իրագործելու ներպետական կարողությունների ամրապնդման հարցում՝ «Մարդու իրավունքներ» հենասյան շրջանակում սահմանված հետեւյալ ոլորտներում՝ քրեական եւ քրեական դատավարության օրենսդրության մեջ մարդու իրավունքների համապատասխան երաշխիքների ապահովում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների պատշաճ կատարման միջոցով, մարդու իրավունքների պաշտպանության եւ գենդերային հավասարության հետագա ընդլայնում զինված ուժերում, տեղահանված անձանց մարդու իրավունքների պաշտպանություն, խտրականության, գենդերային հիմքով բռնության եւ երեխաների նկատմամբ սեռական բռնության եւ շահագործման կանխարգելում եւ դրանց դեմ պայքար, արտահայտվելու ազատության եւ տեղեկատվության, լրատվամիջոցների եւ տվյալների պաշտպանության խթանում, մարդու իրավունքների պաշտպանություն կենսաբժշկության բնագավառում եւ իրավական ոլորտի մասնագետների՝ շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված կարողությունների ամրապնդում:

Այս գործողությունները կնպաստեն Հայաստանի կողմից *Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման* հետեւյալ *նպատակների* (ԿԶՆ-ներ)՝ ամուր

[5] Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն:

առողջության եւ բարեկեցության վերաբերյալ 3-րդ նպատակի (թիրախ Դ), գենդերային հավասարության վերաբերյալ 5-րդ նպատակի (ավելի կոնկրետ՝ 1-ին, 2-րդ եւ Գ թիրախներ), ներառական եւ կայուն տնտեսական աճի վերաբերյալ 8-րդ նպատակի (8-րդ թիրախ), ներառական, ապահով, ճկուն եւ կայուն քաղաքների եւ մարդկային բնակավայրերի վերաբերյալ 11-րդ նպատակի (3-րդ, 6-րդ թիրախներ), կլիմայական փոփոխությունների եւ դրա ազդեցության վերաբերյալ 13-րդ նպատակի (1-ին, 2-րդ, 3-րդ, Ա, Բ թիրախներ), ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործման վերաբերյալ 15-րդ նպատակի (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ թիրախներ) եւ խաղաղության, արդարադատության եւ ամուր հաստատությունների վերաբերյալ 16-րդ նպատակի (3-րդ, 7-րդ, 10-րդ եւ Բ թիրախներ) իրականացմանը:

2.1.1. ՄԻԵԿ-Ի ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Չնայած ներկայումս ՄԻԵԴ-ում քննվում են համեմատաբար փոքր թվով գործեր (2022 թվականի ապրիլի դրությամբ՝ 50 գործ)[6], Նախարարների կոմիտեի կողմից հատուկ եւ ստանդարտ հսկողության ենթակա հարցերը հետեւողական ջանքեր են պահանջում: Հատուկ հսկողության տակ գտնվող գործերը[7] ներառում են ոստիկանության կողմից արգելանքի տակ գտնվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի եւ (կամ) խոշտանգումների դեպքերը, ժամկետային զինծառայողների մահվան դեպքերի արդյունավետ քննության բացակայությունը, ազատազրկման մեջ գտնվող անձանց համապատասխան բժշկական օգնություն չտրամադրելը, հավաքների ազատության իրավունքի խախտումը եւ ցույցերի կարգի պահպանմանն առնչվող այլ խախտումներ: Ստանդարտ հսկողության տակ գտնվող գործերը ներառում են մասնավորապես ներպետական իրավունքում եւ ապօրինի նախնական կալանք եւ նման կալանքների երկարաձգումներ ընդգրկող դատական գործելակերպի թերություններին, ներպետական դատարանների վճիռների ուշացած կատարմանը կամ չկատարմանը, դատական վարույթի չափազանց երկար տեւելուն վերաբերող գործերը[8]: Իշխանությունները զգալի միջոցներ են ձեռնարկել այս հարցերի լուծման ուղղությամբ՝ որոշ դեպքերում Եվրոպայի խորհրդի աջակցությամբ: Այնուամենայնիվ, ազգային մակարդակում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) կիրառումը բարելավելու նպատակով անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելիս իշխանություններին լրացուցիչ օժանդակություն է անհրաժեշտ:

- **ՄԻԵԿ համակարգի արդյունավետության բարձրացումն ազգային մակարդակում**

ՄԻԵԿ-ի իրականացումն ազգային մակարդակում

ՄԻԵԿ-ի եւ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի արդյունավետ իրականացման ապահովումն ազգային մակարդակում բոլոր անդամ պետությունների վրա դրված առաջնային պարտականություն է: Դրա համար անհրաժեշտ է ավելի բարելավել Կոնվենցիայի հիմնական սկզբունքների ու չափանիշների հասանելիությունն

[6] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման բաժին (HUDOC EXEC):
[7] Վիրաբյան խումբ, Մուրադյանի գործ, Մուշեղ Սաղաթելյանի գործ, Աշոտ Հարությունյան խումբ:
[8] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման բաժին, Armenia Country Factsheet:

արդարադատության շղթայի շահառուների, համապատասխան պետական հաստատությունների, այդ թվում՝ իրավական ոլորտի մասնագետներ պատրաստող ուսումնական հաստատությունների, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության դերակատարների համար, եւ վերջիններիս կողմից այդ չափանիշների եւ սկզբունքների իմացությունը, որպեսզի իրենք կարողանան ազգային մակարդակում ՄԻԵԿ-ի եւ մարդու իրավունքների մյուս չափանիշները վկայակոչել, մոնիթորինգի ենթարկել եւ գործնականում կիրառել:

Հայաստանի համար իրականացվող՝ Եվրոպայի խորհրդի 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում ինստիտուցիոնալ զարգացման աջակցություն է տրամադրվել Հայաստանի Հանրապետության՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակին (Կառավարության լիազոր ներկայացուցչի գրասենյակ): Հատուկ ուշադրություն է դարձվել ՄԻԵԴ-ի վճիռների կատարման հարցում Հայաստանին աջակցություն տրամադրելուն՝ ուղղված արդարադատության մատչելիության բարելավմանը, ազգային դատարանների վճիռների չկատարման կամ հետաձգված կատարման կանխարգելմանը, դատական վարույթի չափազանց երկար տեւողության հետ կապված իրավական պաշտպանության միջոցների մշակմանը, ՄԻԵԴ-ի վճռից հետո դատական վարույթի վերաբացմանը: Փոխգործակցության ռազմավարության իրականացումը եւ նորաստեղծ Միջգերատեսչական կոմիտեի արդյունավետ գործունեությունը կնպաստեն կարիքների ավելի լավ ըմբռնմանը եւ Եվրոպայի խորհրդի չափանիշների եւ այս տիրույթում այլ անդամ պետությունների փորձի վերաբերյալ համապատասխան շահառուների գիտելիքների ընդլայնմանը:

ՄԻԵԿ-ի իրականացումն ազգային մակարդակում գործողությունների ծրագրի կարեւոր առաջնահերթություն է եւ որպես այդպիսին ներառված է դրա բոլոր բաժիններում: Շարունակելով Կառավարության լիազոր ներկայացուցչի գրասենյակի, Արդարադատության նախարարության, Վճռաբեկ դատարանի, Սահմանադրական դատարանի, Արդարադատության ակադեմիայի եւ այլ շահառուների հետ ձեւավորված կառուցողական համագործակցության ավանդույթը՝ Եվրոպայի խորհուրդը կշարունակի ուժեղացնել նրանց կարողությունները տեխնիկական աջակցության օժանդակության, ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպային իրավունքի վերաբերյալ աշխատաժողովների, սեմինարների եւ վերապատրաստումների, ինչպես նաեւ համապատասխան ուսումնական այցերի միջոցով, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն իրականացնել Հայաստանի կողմից ՄԻԵԴ-ի վճիռների կատարման գործընթացում իրենց դերը, եւ որպեսզի ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքն ավելի ներդաշնակ կերպով կիրառվի ազգային մակարդակում:

Դիագնոստիկ գործիքների, մեթոդաբանական ձեռնարկների եւ ուղեցույցների մշակումը թույլ կտա վերհանել խնդիրները եւ առաջարկել լուծումներ՝ շահառուների կարողությունները զարգացնելու նպատակով: Հատուկ ուշադրություն կդարձվի ազգային իշխանությունների եւ Եվրոպայի խորհրդի միջեւ համագործակցությանը՝ ուղղված ՄԻԵԴ-ի վճիռներից բխող ընդհանուր եւ առանձին միջոցների ճշգրիտ նույնականացմանը եւ դրանց հետագա իրականացմանը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի (ՄԻՊ գրասենյակ) կարողությունների ընդլայնմանը՝ ՄԻԵԴ-ի վճիռների կատարումն արդյունավետորեն մոնիթորինգի ենթարկելու, ինչպես նաեւ վարույթին երրորդ կողմի արդյունավետ ներգրավումն ապահովելու նպատակով: Աջակցություն կտրամադրվի նաեւ արդարադատության թվայնացմանը եւ Արդարադատության նախարարության (ԱՆ) հարկադիր կատարման ծառայության կողմից դատական ակտերի կատարմանը: Խորհրդարանի դերը ՄԻԵԴ-ի վճիռների կատարման եւ ընդհանուր առմամբ

ազգային մակարդակում եվրոպական չափանիշների իրականացման գործում պետք է բարձրացվի փոխգործակցության եւ հաշվետվությունների, ինչպես նաեւ խորհրդարանի անդամների եւ աշխատակազմի կարողությունների բարելավման միջոցով:

Այս համատեքստում Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության եվրոպական ծրագիրը (HELP) կշարունակի էական դեր խաղալ ՄԻԵԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի այլ չափանիշների, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի կառույցների առաջարկությունների եւ մոնիթորինգի մեխանիզմների իրականացման հարցում Հայաստանի կարողություններին աջակցելու գործում՝ համագործակցելով տեղական հաստատությունների հետ եւ հիմնվելով Կազմակերպության՝ տարբեր ոլորտներում մշակված փորձի վրա: Այս հենասյան եւ թեմայի, ինչպես նաեւ մյուս հենասյուների եւ ստորեւ նշված բոլոր համապատասխան բաժինների շրջանակում համապատասխան «HELP» թեմատիկ առցանց դասընթացները լայնակի կերպով կինտեգրվեն կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններում:

ՄԻԵԿ-ի թիվ 15 արձանագրությունն ուժի մեջ մտնելուց եւ Կոնվենցիայի նախաբանում սուբսիդիարության սկզբունքին արված հղում ավելացնելուց հետո Կազմակերպությունն աշխատում է որոշ անդամ պետությունների հետ՝ իրականացնելու համագործակցային նախաձեռնություններ, որոնցով առաջարկվում է բազմատեսակ աջակցություն, այդ թվում՝ վերապատրաստում, մեթոդական եւ փորձագիտական խորհրդատվություն, թվային գործիքների ներդրում դատական գործընթացներում՝ հնարավոր դարձնելով ազգային մակարդակում այս սկզբունքի ավելի ամուր կիրառումը: Ֆինանսավորման դեպքում նոր, բազմաթիվ երկրների ներգրավմամբ նախաձեռնությունը կաջակցի ազգային դատական մարմինները կապող հարթակի ստեղծմանը, որը նպատակաուղղված է Կոնվենցիայի չափանիշներն ավելի լավ հասկանալու եւ ամենօրյա պրակտիկայում կիրառելու նրանց կարողությունների զարգացմանը, ինչը կարող է օգտակար լինել Հայաստանի համար: Հարթակը հնարավորություն կտա հասանելիություն ունենալ ՄԻԵԿ-ի վերաբերյալ մի քանի լեզուներով, լավ կառուցված եւ արդի գիտելիքներին, ներդաշնակեցնել ազգային մակարդակում Կոնվենցիայի կիրառումը, ավելացնել ազգային մակարդակում լուծվող՝ Կոնվենցիայի հետ կապված գործերի թիվը, ինչպես նաեւ հասնել դատական ժամանակի առավել արդյունավետ օգտագործման արդյունքի:

Աջակցություն ուղղված քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Քրեական արդարադատությունը մարդու իրավունքների պաշտպանության ցանկացած ազգային համակարգի կենտրոնական տարրն է: Վերջին տարիներին ամբողջ Եվրոպայում քրեական արդարադատության ազգային համակարգերը բախվել են նոր տեսակի մարտահրավերների՝ ավելի բարդ գործեր՝ կապված հասարակական փոփոխությունների, նոր տեխնոլոգիաների զարգացման եւ հանցավորության միջազգայնացման, բյուջետային սահմանափակումների, աշխատանքային ծանրաբեռնվածության ավելացման եւ միեւնույն ժամանակ հանրության աճող ակնկալիքների հետ:

Եվրոպայի խորհրդի հետ մի քանի տարվա սերտ համագործակցությունից հետո՝ 2021 թվականին, Հայաստանն ընդունեց նոր Քրեական օրենսգիրք (ՔՕ) եւ Քրեական դատավարության օրենսգիրք (ՔԴՕ): Օրենսգրքերի նոր տեքստերով նախատեսվում է պատժիչ մոտեցումից անցում վերասոցիալականացման մոտեցման եւ քրեական վարույթի ընթացքում հանրային եւ մասնավոր շահերի ավելի հավասարակշռված պաշտպանություն, քրեական վարույթում ներգրավված անձանց իրավունքների եւ օրինական շահերի

պաշտպանության ավելի լավ երաշխիքներ (պատասխանատվությունը կրողի սկզբունք): Քրեական արդարադատության համակարգի բարեփոխումները համահունչ են *Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի* (ԽԿԿ)՝ Հայաստան կատարած վերջին այցի պարբերական զեկույցների որոշ առաջարկություններին, որոնք վերաբերում են ոստիկանական հիմնարկներում կամ բանտերում խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի կանխարգելմանը, Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) դերին, հատուկ կարիքներ եւ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքին, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ազգային ռազմավարությանը եւ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությանը: Նախաձեռնված բարեփոխումներըբխում են նաեւ ՄԻԵԴ-ի կողմից կայացրած վճիռներում վատ վերաբերմունքի եւ (կամ) խոշտանգումների քննության արդյունավետության, ինչպես նաեւ կալանավորման օրինականության եւ հարակից հարցերի վերաբերյալ հայտնաբերված թերություններից: Հետեւաբար նոր ՔԴՕ-ի եւ ՔՕ-ի կիրառումը կնպաստի նաեւ Նախարարների կոմիտեի ուժեղացված վերահսկողության ներքո գտնվող՝ խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի հետ կապված Հայաստանի դեմ ՄԻԵԴ վճիռների կատարման առաջընթացին:

Նոր օրենսգրքերն ուժի մեջ են մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, եւ դրանց միջոցով ներդրվող փոփոխություններըէական նշանակություն ունեն եւ պետք է ուղեկցվեն ազգային իրավասու մարմիններին ցուցաբերվող կոնկրետ աջակցությամբ՝ ուղղված համապատասխան քաղաքականություն եւ կարգավորող շրջանակներ ներդնելուն, ինչպես նաեւ քրեական արդարադատության դերակատարների մասնագիտական հմտություններն ամրապնդման եւ նրանց մտածելակերպի զարգացման միջոցով նրանց շրջանում նոր գործելակերպերի ներդրման խթանմանը՝ նոր ՔՕ-ին եւ ՔԴՕ-ին համապատասխան:

Եվրոպայի խորհրդի կողմից կտրամադրվի աջակցություն՝ ուղղված քաղաքականությունների, դատական եւ ներքին կարգավորող մեխանիզմների ներդաշնակեցմանը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ, այսպիսով ապահովելով քրեական արդարադատության նոր ընդունված օրենսդրության արդյունավետ կիրառումը եւ նպաստելով քաղաքականություն եւ օրենսդրություն մշակողների, քրեական արդարադատության ոլորտի իրավակիրառ մարմինների, ՄԻՊ գրասենյակի, ինչպես նաեւ Կառավարության լիազոր ներկայացուցչի գրասենյակի կարողությունների զարգացմանը: Ուշադրության կենտրոնում կլինեն նաեւ նոր օրենսգրքերի կիրառման մշտադիտարկմանը եւ դատահիրավական բարեփոխումների իրականացման գործում դրանց կողմից ցուցաբերած աջակցությանը: Հատուկ քննչական ծառայության գործունեության դադարեցումից հետո, որը պատասխանատու էր խոշտանգումների հետ կապված դեպքերի քննության համար, աջակցություն կտրամադրվի[9]՝ այն նոր ինստիտուցիոնալ կառույցի կարողությունների զարգացման համար, որը կզբաղվի վատ վերաբերմունքի հետ կապված գործերի քննությամբ:

Հայաստանի դատական օրենսգրքով նախատեսվում է մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող առանձին մասնագիտացված դատավորների առկայություն: Ելնելով Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ-ի վճիռներից, ինչպես նաեւ ընդհանուր առմամբ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից՝ Եվրոպայի

[9] Սրա անհրաժեշտության վերաբերյալ Նախարարների կոմիտեն մասնավորապես ընդգծել է Վիրաբյանի խմբի գործերի քննության հետ կապված իր վերջին որոշման մեջ և նշումներում (տե՛ս *CM/Del/Dec(2022)1428/H46-3*, բաժին 7, ինչպես նաև *CM/Notes/1428/H46-3*, Քարտուղարության վերլուծություն, Քննությունների արդյունավետություն):

խորհուրդն համապատասխան ազգային շահառուներին կտրամադրի աջակցություն՝ այս ոլորտում արդարադատության որակի բարելավման նպատակով։

Զինված ուժերում մարդու իրավունքների կիրառման ընդլայնում եւ Հայաստանում զինվորական ծառայության ոլորտում կանանց իրավունքների եւ դերի ամրապնդում

Մարդու իրավունքների պաշտպանությունն ամրապնդելը եւ զինված ուժերում կանանց ներգրավվածությունը խթանելը մարդու իրավունքների հետ կապված Հայաստանի կառավարության ռազմավարական օրակարգի մաս են։ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մեջ «զինված ուժերում մահացու դեպքերը եւ վատ վերաբերմունքը (խոշտանգումներ, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք)», ինչպես նաեւ «նման միջադեպերի ոչ արդյունավետ քննությունը» արդեն սահմանվել էին որպես «մարդու իրավունքների հետ կապված լուրջ խնդիրներ Հայաստանի Հանրապետությունում»։ Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում հաշվի են առնվել այս կարիքները եւ նախատեսվել են գործողություններ՝ նպատակաուղղված զինված ուժերում կանանց ներգրավվածության խթանմանը եւ նրանց իրավունքների պաշտպանությանը, զինված ուժերի, ռազմական ոստիկանության հրամանատարների, ինչպես նաեւ այլ շահառուների վերապատրաստմանը, զինվորական հրամանատարական շղթայում կանանց ավելի լայն ներկայացվածությունն ապահովելու նպատակով բանակում նրանց հզորացմանը նպաստելուն։ Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագրում[10] «զինված ուժերում մարդու իրավունքների եւ արժանապատվության պաշտպանության ամրապնդումը» ներառված է որպես դրա նպատակներից մեկը. դա նաեւ ենթադրում է զինված ուժերում կանանց ներգրավվածության աստիճանական աճ, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոններում։

Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանություն ապահովելու նպատակով Հայաստանի իշխանություններին տրամադրվող աջակցությունը հիմնված կլինի Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող նախորդ գործողությունների ծրագրերի ձեռքբերումների, մասնավորապես՝ 2016 եւ 2022 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում իրականացված կոնկրետ ծրագրերի արդյունքների վրա[11]։ Այս գործողությունները կարող են հիմնվել ՄԻԵԿ-ից բխող մարդու իրավունքների մեծ թվով չափանիշների վրա, որոնք հատուկ ուղղված են զինված ուժերին (Նախարարների կոմիտեի *CM/Rec(2010)4 հանձնարարականը*՝ ուղղված անդամ պետություններին՝ զինված ուժերի անդամների՝ մարդու իրավունքների վերաբերյալ, եւ դրա բացատրական հուշագիրը, Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) «Զինված ուժերի անդամների՝ մարդու իրավունքները» թիվ *1742 (2006) հանձնարարականը*), ինչպես նաեւ ՄԻԵԴ-ի վճիռների վրա (օրինակ, *Նանա Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* [*Nana Muradyan v. Armenia*], գանգատ թիվ 69517/11 եւ *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* [*Muradyan v. Armenia*], գանգատ թիվ 11275/07)։ Այս ոլորտում իրականացված նախորդ ծրագրերը

[10] Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ։

[11] Հայաստանի համար իրականացվող՝ Եվրոպայի խորհրդի 2015-2018 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացված «Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդում» ծրագրերը և «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի երկու փուլերն իրականացվել են Հայաստանի համար իրականացվող՝ Եվրոպայի խորհրդի 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում։

կարեւոր հիմք են դրել Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշներն ավելի լավ ներդնելու համար եւ նպաստել են քաղաքականության, ինստիտուցիոնալ եւ գործնական մակարդակներում կարեւոր փոփոխություններին՝ այդ թվում հատուկ ուշադրություն դարձնելով կին զինծառայողների իրավունքներին:

Սույն գործողությունների ծրագրի համաձայն՝ ձեռք բերված առաջընթացի շարունակականությունն ապահովելու եւ այն բազմապատկելու նպատակով Եվրոպայի խորհուրդը մտադիր է շարունակել համագործակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության (ՊՆ), ինչպես նաեւ այլ համապատասխան ազգային մարմինների հետ՝ հետեւյալի տրամադրման միջոցով.

- իրավաբանական խորհրդատվություն եւ կարողությունների զարգացմանն ուղղված աջակցություն՝ ապահովելու համար, որ պետական կառույցները նպատակաուղղված լինեն կանխարգելելու մարդու իրավունքների խախտումները բանակում՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան, եւ որոնց համար տրամադրվող աջակցության պարագայում հաշվի կառնվի ընթացքի մեջ գտնվող ՄԻԵԴ-ի գործերով կատարման գործընթացը.

- քարոզչություն եւ փորձագիտական աջակցություն ինչպես քաղաքականության, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակում՝ ապահովելու համար, որ զինված ուժերում գենդերային մեյնսթրիմինգի քաղաքականությունները շարունակեն ազգային եւ ինստիտուցիոնալ առաջնահերթություններ լինել, եւ որ Պաշտպանության նախարարության (ՊՆ) համապատասխան մարմինները, ինչպես նաեւ Կանանց խորհուրդներն արդյունավետ կերպով կատարեն իրենց դերը եւ որակյալ խորհրդատվություն ու ծառայություններ տրամադրեն՝ գենդերազգայուն չափանիշների մշակումն ապահովելու նպատակով.

- իրավաբանական խորհրդատվություն եւ կարողությունների զարգացմանն ուղղված աջակցություն՝ ապահովելու համար, որ ՊՆ համապատասխան վարչությունները նպատակաուղղված լինեն զինվորական անձնակազմին եւ վետերաններին մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան եւ գենդերազգայուն ձեւով սոցիալական աջակցություն, ինչպես նաեւ առողջապահական ծառայություններ տրամադրելուն.

- հետագա աջակցություն՝ ուղղված մարդու իրավունքների մոտեցումը ռազմական կրթության մեջ ներառելուն ինչպես ՊՆ քաղաքականությունների մակարդակով, այնպես էլ ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում՝ դրանով իսկ խթանելով մարդու իրավունքների մասին իրազեկությունն ապագա զինակոչիկների շրջանում եւ խթանելով գենդերազգայուն մշակույթը սպաների նոր սերնդի շրջանում.

- աջակցություն զինված ուժերում, ինչպես նաեւ ապագա զինակոչիկների եւ ընդհանուր առմամբ հանրության շրջանում իրազեկության բարձրացման ծրագրերի կայացմանը՝ հիմնվելով մարդու իրավունքների մոտեցման վրա:

Հարկադիր տեղահանման համատեքստում մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում

2020 թվականին ռազմական գործողությունների բռնկումը հանգեցրեց նրան, որ հազարավոր քաղաքացիներ հեռացան հակամարտության գոտիներից, բնակության

վայրերից եւ լքեցին իրենց ունեցվածքը։

Իր «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության/Լեռնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետեւանքները» թիվ 2209 (2021) հանձնարարականում Խորհրդարանական վեհաժողովը կոչ է արել Նախարարների կոմիտեին «հաշվի առնել հակամարտության հումանիտար հետեւանքները՝ Հայաստանի համար իրականացվող նոր գործողությունների ծրագիրը (2023-2026) նախապատրաստելիս»։ Խորհրդարանական վեհաժողովը նաեւ կոչ է արել Նախարարների կոմիտեին «հատուկ ուշադրություն դարձնել տեղահանված անձանց կարիքներին եւ իրավունքներին եւ նրանց վերադարձի հետ կապված հարցերին...»։

Միջոցառումները, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել, վերաբերում են մարդու իրավունքների մի շարք հարցերի եւ ներառում են բնակարանային եւ գույքային հարցեր, առողջապահություն եւ սոցիալական պաշտպանություն, կրթություն եւ երեխաների խնամք, աշխատանք եւ փոխհատուցումներ՝ կապված տան ապրուստը վաստակող անձանց կորցնելու հետ, ինչպես նաեւ ներառում են անվտանգության եւ ապահովության իրավունքը։ Դրանց համար անհրաժեշտ են համապատասխան, գենդերազգայուն օրենսդրական եւ քաղաքականության մասով լուծումներ, ինչպես նաեւ մեխանիզմներ՝ ապահովելու դրանց գործնական կիրառումը, մոնիթորինգը եւ հետագա քայլերը։

Կազմակերպության դերը եւ փորձը հարկադիր տեղահանման համատեքստում մարդու իրավունքների երկարաժամկետ խնդիրների լուծման գործում կարող են եզակի առավելություն ապահովել։

ՄԻԵԿ-ին, վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային եւ Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթերին համապատասխան՝ Եվրոպայի խորհրդի սկզբնական աջակցությունն ուղղված կլինի ոլորտում օրենսդրական եւ կարգավորող դաշտի բարելավմանը եւ տարբեր շահառուների՝ սոցիալական իրավունքները պաշտպանելու (բնակարան, առողջապահություն, կրթություն եւ այլն) հետ կապված կարողությունների հզորացմանը եւ արդարադատության արդյունավետ մատչելիության ապահովմանը։ Այդ անձանց համար արդարադատության եւ գույքային իրավունքների մատչելիության հետ կապված հարցերը նույնպես կարող են դիտարկվել ՄԻԵԿ-ի դրույթներին համապատասխան։

Իրավական ոլորտի մասնագետների՝ մարդու իրավունքների տեսանկյունից շրջակա միջավայրը պաշտպանելու կարողությունների ամրապնդումը

Շրջակա միջավայրի քայքայումը խիստ ազդում է մարդու կյանքի որակի վրա եւ բացասական կերպով խոչընդոտում է հիմնարար իրավունքների իրացումը։ Եվրոպայի խորհուրդը մի քանի կոնվենցիաներ[12] է մշակել՝ ընդունելով առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը, եւ թեեւ դա հստակորեն ամրագրված չէ ՄԻԵԿ-ում եւ Եվրոպական սոցիալական խարտիայում, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով եւ Եվրոպական սոցիալական խարտիայի կոմիտեի եզրակացություններով հաստատվում է շրջակա միջավայրի եւ մարդու իրավունքների միջեւ անհերքելի փոխկապակցվածությունը։ ՄԻԵԴ-

[12] *Inter alia*, «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիան (Բեռնի կոնվենցիա), «Շրջակա միջավայրի համար վտանգավոր գործունեության հետևանքով առաջացած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» կոնվենցիան (Լուգանոյի կոնվենցիա) և «Քրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին» կոնվենցիան։

ը քննել է «շրջակա միջավայրին սպառնացող ռիսկի եւ վնասի տարբեր ձեւերին վերաբերող մոտավորապես 300 գործ», որոնց պատճառները, ի թիվս այլնի, եղել են արդյունաբերական աղմուկը, օդի աղտոտումը, հողի, ստորգետնյա եւ մակերեւութային ջրերի աղտոտումը, արտանետումները թափոնների հեռացման վայրերից, փոշով աղտոտումը, նավթի աղտոտումը ծովափնյա տարածքներում, անտառահատումը, քաղաքաշինությունը, կենսաբազմազանության պահպանումը, բնական աղետները եւ որսորդությունը, ինչպես նաեւ պասիվ ծխելը: ՄԻԵԴ-ի կողմից դիտարկվել են բնապահպանական հարցեր՝ կապված կյանքի իրավունքի (Հոդված 2), անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի (Հոդված 3), արդար դատաքննության եւ դատարանի մատչելիության իրավունքի (Հոդված 6), անձնական եւ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի (Հոդված 8), ազատ արտահայտվելու իրավունքի (Հոդված 10), իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի (Հոդված 13) եւ ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքի (թիվ 1 Արձանագրության Հոդված 1) հետ: ՄԻԵԴ-ի իրավազորությունը մեծապես ամրապնդել է բնապահպանական հարցերի հետ կապված մասնակցային իրավունքները, ինչպիսիք են տեղեկատվության (այսինքն՝ ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները եւ ռիսկերի գնահատումը) մատչելիության իրավունքը, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության իրավունքը եւ բնապահպանական հարցերի հետ կապված արդարադատության մատչելիության իրավունքը:

2022 թվականին հրապարակված՝ «Շրջակա միջավայրի համապատասխանության ապահովման համակարգը Հայաստանում. արդի վիճակը եւ առաջարկություններ»[13] զեկույցում նշվում է, որ Հայաստանի աղտոտվածության վիճակը եւ աշխարհագրության ու տնտեսության որոշակի բնութագրերը շրջակա միջավայրի համապատասխանության ապահովումը դարձնում են երկրի համար առաջնահերթություն:

Եվրոպայի խորհուրդն աջակցություն կտրամադրի հետեւյալ ոլորտներում.

- շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ օրենսդրական եւ կարգավորող դաշտի բարելավում՝ եվրոպական եւ միջազգային չափանիշներին համապատասխան.

- շրջակա միջավայրին առնչվող գործերում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների համար դատական եւ այլ ընթացակարգերի արդյունավետ մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումների խթանում եւ այդ առնչությամբ առկա խոչընդոտների վերացում.

- շրջակա միջավայրին առնչվող հարցերի հետ կապված կրթության եւ հանրային իրազեկության զարգացման խթանում:

Գործողությունները կնպաստեն շահառուների արդյունավետ ներգրավմանը՝ նպատակ ունենալով խթանել տարածաշրջանում մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի ոլորտում կայուն փոփոխությունները:

[13] Զեկույցը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի, Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի, Միավորված ազգերի կազմակերպության Արդյունաբերական զարգացման կազմակերպության և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի» (ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի) ծրագրի շրջանակներում:

➢ **Մարդու իրավունքները կենսաբժշկության ոլորտում**

Այս ոլորտում Եվրոպայի խորհրդի աշխատանքն ուղղորդվում է «Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին» կոնվենցիայի (Օվիեդոյի կոնվենցիա) նորմերով, որը կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միակ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող միջազգային իրավական փաստաթուղթն է: Այն կազմվում է կենսաբանության եւ բժշկության ոլորտում ՄԻԵԿ-ի սահմանած սկզբունքների հիման վրա եւ դրա նպատակն է պաշտպանել բոլոր անձանց արժանապատվությունը եւ ինքնությունը եւ երաշխավորել նրանց անձեռնմխելիության եւ կենսաբանության ու բժշկության կիրառման հետ կապված այլ իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը՝ սահմանելով հիմնարար սկզբունքներ, որոնք կիրառելի են ամենօրյա բժշկական պրակտիկայի, ինչպես նաեւ կենսաբժշկական հետազոտությունների, գենետիկայի եւ օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման նկատմամբ:

Մարդու իրավունքների հանձնակատարը (Հանձնակատար) Հայաստան կատարած իր այցի վերաբերյալ վերջին *զեկույցում* կարեւորել է կենսաբժշկության ոլորտում մի շարք հարցեր, որոնք վերաբերում են բժշկական միջամտության հետ կապված խոցելի պացիենտների իրազեկ համաձայնությանը, հաշմանդամություն ունեցող անձանց պիտակավորմանը, կյանքի վերջին փուլերում իրականացվող խնամքին (քրոնիկ եւ անբուժելի հիվանդություններով տառապող անձանց համար պալիատիվ բուժման եւ ցավազրկման մատչելիությունը): Նույն կերպ Հայաստանի Հանրապետության ՄԻՊ գրասենյակը կարեւորել է այնպիսի հարցեր, ինչպիսիք են պարտադիր բժշկական զննումը եւ (կամ) բուժումը, բժշկական գաղտնիքի բացահայտումը, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը, բուժաշխատողների էթիկայի համապարփակ կանոնների բացակայությունը, պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքը եւ բուժման, օրգանների նվիրատվության եւ փոխպատվաստման վերաբերյալ իրազեկված համաձայնության հետ կապված այլ հարցեր:

Հաշվի առնելով անհատների եւ ընդհանուր առմամբ հասարակության համար Քովիդ-19 համավարակի աննախադեպ ազդեցությունն առողջության հետ կապված հայեցակետերի վրա՝ Եվրոպայի խորհրդի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ համագործակցությունն այս ոլորտում ավելի արդիական է դարձել: Ծանր դեպքերի մեծ մասն էթիկայի եւ մարդու իրավունքների լուրջ մարտահրավերներ են առաջ բերում, որոնք բուժաշխատողները եւ իրավասու մարմինները պետք է լուծեն համավարակը վերահսկելու եւ իրենց պացիենտների առողջության մասին հոգալու համար:

Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդն օժանդակել է ազգային իշխանություններին՝ կենսաբժշկության ոլորտի իրավական դաշտը եւ իրավակիրառ գործելակերպերը Օվիեդոյի կոնվենցիայում ամրագրված մարդու իրավունքների եւ էթիկային առնչվող եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված նրանց ջանքերում: Կենսաբժշկության ոլորտում Հայաստանի օրենսդրության վերլուծությունն իրականացվել է 2021 թվականին եւ 2022 թվականին ներկայացվել Հայաստանի իշխանություններին՝ որոշումների հիմնավորման եւ հետագա աշխատանքի կողմնորոշման նպատակով: 2022 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնները՝ ստեղծելով առողջապահության ոլորտի մասնագետների համար իրավական և

էթիկական շրջանակ եւ նպատակ ունենալով կարգավորել բուժաշխատողների եւ պացիենտների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ առողջապահության ոլորտի մասնագետների էթիկական պահանջները հանրային առողջության պաշտպանության ոլորտում՝ այդպիսով բարելավելով տրամադրվող բժշկական օգնության եւ ծառայությունների որակը։ Այս գործողություններն ուղեկցվել են կարեւոր ջանքերով՝ ուղղված առանձին շահառուների, այդ թվում՝ դատավորների, Առողջապահության նախարարության եւ Առողջապահության ազգային ինստիտուտի, Ազգային ժողովի, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչների, գիտաշխատողների, լրագրողների եւ առողջապահության ու իրավաբանական ոլորտի մասնագետների շրջանում կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների հետ կապված հարցերի եւ հիմնական էթիկական սկզբունքների, ինչպես նաեւ Օվիեդոյի կոնվենցիայի եւ դրա լրացուցիչ արձանագրությունների մասին գիտելիքների ընդլայնմանը։ Առողջապահության նախարարությունը հետաքրքրություն է ցուցաբերել Օվիեդոյի կոնվենցիայի հնարավոր վավերացման համար հող նախապատրաստելու հարցում։

Հիմնվելով Առողջապահության նախարարության հետ ստեղծված կառուցողական համագործակցության վրա՝ Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցություն տրամադրել Հայաստանին հետեւյալ ոլորտներում.

- համապատասխանեցնել օրենսդրական դաշտը եվրոպական չափանիշներին (ներառյալ, սակայն չսահմանափակվելով հանրային առողջության վերաբերյալ նոր օրենքով, բուժաշխատողների անհատական լիցենզավորմանը վերաբերող իրավական նորմերով, ինչպես նաեւ օրգանների եւ հյուսվածքների հետ կապված հնարավոր դիակային դոնորության իրավական մեթոդաբանությամբ եւ այլն).

- շարունակել էթիկայի հանձնաժողովի հետագա կատարելագործումը, ինչպես նաեւ ամրապնդել առողջապահության ոլորտի մասնագետների կարողություններն էթիկայի ընդունված կանոնների վերաբերյալ.

- զարգացնել համապատասխան մասնագիտական խմբերի կարողությունները՝ կապված օրգանների դոնորության եւ փոխպատվաստման ոլորտում մարդու իրավունքների սկզբունքների հետ.

- մշակել մասնագիտական էթիկայի կանոններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վերարտադրողական առողջությունը եւ գենետիկական տեղեկատվության տրամադրումը.

- հիմք նախապատրաստել Օվիեդոյի կոնվենցիայի վավերացման համար՝ ընդլայնելով խորհրդարանականների եւ (կամ) Սահմանադրական դատարանի դատավորների գիտելիքները Կոնվենցիայի վերաբերյալ՝ դրա հնարավոր վավերացման վերաբերյալ քննարկումներից առաջ.

- բարձրացնել հանրության իրազեկությունը կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների սկզբունքների վերաբերյալ.

- ընդլայնել գործնականում մարդու իրավունքների պաշտպանությունը, նաեւ արտակարգ իրավիճակներում գենդերազգայունության եւ մարդու իրավունքների հետ կապված հարցերի առնչությամբ.

- վերապատրաստել լրագրողներին մարդու իրավունքների եւ կենսաբժշկության ոլորտում եւ մշակել ուղեցույց, որը կօգնի նրանց իրենց պրակտիկայում.

- վերհանել հոգեկան առողջության ոլորտին բնորոշ կարիքները.

- աջակցել հոգեկան առողջության ազգային ծրագրի՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող միջոցառումների իրականացմանը:

➢ **Արտահայտվելու եւ տեղեկատվության ազատությունը, լրատվամիջոցների եւ տվյալների պաշտպանությունը**

Արտահայտվելու եւ տեղեկատվության, ինչպես նաեւ լրատվամիջոցների ազատությունը

«Խոսքի ազատության, լրատվական դաշտի բազմազանության եւ բազմակարծության եւ լրագրողների անվտանգության զարգացումը եւ համացանցի կառավարման խթանումը՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան» սահմանվել են որպես Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքի կարեւոր ոլորտ: Սակայն ֆինանսավորման բացակայության պատճառով որեւէ հատուկ նախագծված ծրագիր չի ներկայացվել երկրում դրա իրականացման համար:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի 2020, 2021 եւ 2022 թվականների տարեկան զեկույցներում ընդգծվել են բազմաթիվ անդամ պետություններում լրագրության բազմակարծության, որակի եւ անձեռնմխելիության նկատմամբ լարվածությունը, հատկապես Քովիդ-19 համավարակի ժամանակ:

Խորհրդարանական վեհաժողովի՝ 2022 թվականի հունվարին հրապարակված «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին» թիվ 15432 զեկույցում տրամադրվում է լրատվամիջոցների միջավայրի եւ խոսքի ազատության հետ կապված ձեռքբերումների եւ առկա մարտահրավերների գնահատում: Ընդունելով «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության վարկանիշում[14] Հայաստանի առաջընթացը, այն նաեւ ընդգծել է Հայաստանի կողմից կիրառվող խիստ սահմանափակումները լրագրողների անկախության եւ խոսքի ազատության վրա ազդող կոնկրետ իրադարձությունների կամ իրավիճակների կապակցությամբ: Խորհրդարանական վեհաժողովի զեկույցում ընդունվում է, որ Հայաստանում ապատեղեկատվության եւ ատելության խոսքի մակարդակն աննախադեպ բարձր է, եւ կոչ է արվում Հայաստանի իշխանություններին մշակել համապարփակ ռազմավարություն՝ ուղղված լրատվամիջոցների նկատմամբ սեփականության իրավունքների թափանցիկության, լրատվամիջոցների կենտրոնացման, լրագրողների կարգավիճակի եւ ինքնակարգավորման մեխանիզմների հարցերին:

Մարդու իրավունքների պաշտպանության Հայաստանի ռազմավարության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, այդ թվում՝ առանց պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության, եւ անկախ պետական սահմաններից՝ տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը, եւ որ կարծիքի արտահայտման ազատությունը

[14] 2019 թվականին «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության՝ Մամուլի ազատության համաշխարհային ինդեքսում Հայաստանը 19 տեղով բարելավել է իր դիրքերը՝ 80-րդից հասնելով 61-րդին:

կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխարգելման կամ դրանց բացահայտման, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով: Ռազմավարությամբ սահմանվում է երեք հիմնական առաջնահերթություն. 1) բարելավել օրենսդրական կարգավորումներն այնպես, որ հնարավորինս սահմանափակվեն տեղեկատվություն տրամադրելիս հանրային մարմինների հայեցողության շրջանակը եւ ձեւական պահանջների չարաշահման դրսեւորումները. 2) խրախուսել զանգվածային լրատվության միջոցների գործունեության մրցակցայնությունը, դրանց գործունեության թափանցիկությունը եւ դրանց կողմից հանրությանը մատուցվող տեղեկատվության անվտանգությունը եւ 3) հակազդել սոցիալական ցանցերում վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ատելության խոսքին:

2022 թվականի հունվար եւ մարտ ամիսների միջեւ ընկած ժամանակահատվածում Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից իրականացված՝ խոսքի ազատության եւ լրատվամիջոցների ազատության ոլորտներում համագործակցության կարիքների գնահատման շրջանակներում եզրակացրել են, որ լրատվամիջոցների ոլորտը կարգավորող Հայաստանի ներկա իրավական դաշտը հնացած է եւ համահունչ չէ եվրոպական գործելակերպերին եւ նպատակահարմար չէ խոսքի ազատության զարգացման համար: Փորձագետները նշել են աշխատանքի հատուկ առաջնահերթ ոլորտները, այդ թվում՝ գործող մեդիա շուկայի համար պայմաններ ստեղծելը, լրատվամիջոցների նկատմամբ սեփականության իրավունքների եւ դրանց ֆինանսավորման թափանցիկության բարձրացումը, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի՝ կարգավորմանն առնչվող կարողությունների բարձրացումը, հանրային ծառայության լրատվամիջոցների հզորացումը, եւ ազգային իշխանություններին առաջարկել են ստեղծել աշխատանքային խումբ՝ հիմնական շահառուների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ լրատվամիջոցների ոլորտում համապարփակ բարեփոխումներ իրականացնելու նպատակով[15]: Փորձագետների մեկ այլ առաջարկություն վերաբերում է տեղեկատվության մատչելիության ոլորտին, որը Հայաստանում հետագա զարգացման կարիք ունի. առաջարկվում է դիտարկել Տեղեկատվության մատչելիության (Տեղեկատվության ազատության) հանձնակատարի ինստիտուտի ստեղծումը՝ համակարգված եւ անկախ վերանայում, մոնիթորինգ եւ իրագործման միասնական գործելակերպի խթանում ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով լրատվամիջոցների կարիքների գնահատման արդյունքները եւ եզրակացությունները՝ Եվրոպայի խորհուրդն աջակցություն կտրամադրի հետեւյալ փոխկապակցված ոլորտներում.

- խոսքի ազատության եւ լրատվամիջոցների կառավարման օրենսդրական եւ կարգավորող դաշտի ընդլայնում՝ ՄԻԵԿ-ի սկզբունքներին համապատասխան.

[15] Այս առաջարկության կատարման նպատակով ստեղծվել և գործում է աշխատանքային խումբ: Մասնավորապես Արդարադատության նախարարությունը, Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերով մշտական հանձնաժողովը և ԶԼՄ-ների հատվածի ՀԿ-ները ստորագրել են Փոխըմբռնման հուշագիր, որով սահմանվում են համագործակցության հիմնական ուղղությունները: Միևնույն ժամանակ Արդարադատության նախարարությունն աշխատում է լրատվամիջոցների միջավայրի զարգացման հայեցակարգի մշակման ուղղությամբ՝ հատկապես լրատվական գործունեություն իրականացնողների ինքնակարգավորման հետ կապված՝ համագործակցելով լրատվական ոլորտի ներկայացուցիչների հետ:

- տեղեկատվական խառնաշփոթի (կեղծ տեղեկատվություն/ապատեղեկատվություն) նվազեցում եւ զգայուն ու կոնֆլիկտային թեմաներով լրատվության բարելավում.

- աջակցություն Հայաստանի մեդիա մասնագետներին, անկախ լրատվական աղբյուրներին եւ այլ շահագրգիռ կողմերին՝ խթանելու էթիկական, անաչառ լրատվությունը եւ բովանդակության բազմազանությունը.

- աջակցություն Հայաստանի հանրային հեռարձակողին՝ կատարելու իր լիազորությունները՝ հաշվի առնելով լրատվամիջոցների սպառման փոփոխված օրինաչափությունների համատեքստը.

- տեղեկատվության իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի մատչելիության ազատության ընդլայնում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին, այդ թվում՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (Թրոմսո կոնվենցիա) համապատասխան.

- իրավական ոլորտի մասնագետների (դատավորներ, փաստաբաններ, դատախազներ) եւ քաղաքացիական հասարակության եւ լրագրողական կազմակերպությունների՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի վերաբերյալ գիտելիքների ընդլայնում:

Անձնական տվյալների պաշտպանության կատարելագործումը Հայաստանում՝ նորաստեղծ միջազգային չափանիշներին համապատասխան

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պատճառով սաստկացել է անձնական տվյալների կայուն պաշտպանության անհրաժեշտությունը: Այս կարեւոր իրավունքի պաշտպանությունը ենթադրում է նոր եւ նշանակալի մարտահրավերներ, քանի որ տեխնոլոգիական առաջընթացն ընդլայնում է այնպիսի ոլորտների սահմանները, ինչպիսիք են հսկողությունը, կապի գաղտնալսումը եւ տվյալների փոխանակումն ու պահպանումը: Եվրոպայի խորհուրդն աջակցել է Հայաստանի իշխանություններին՝ տվյալների պաշտպանության ազգային իրավական դաշտը «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիային եւ դրա լրացուցիչ արձանագրությանը մոտարկելու հարցում, մասնավորապես՝ աջակցելով Հայաստանում տվյալների պաշտպանության 2017–2021 թվականների ռազմավարությունը նախապատրաստելուն եւ դրա իրականացմանը: Այնուամենայնիվ, Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիարժեք անկախության բացակայությունը, որը համարվել է Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության ոլորտում հիմնական թերություններից մեկը, առ այսօր շարունակում է մարտահրավեր լինել:

2022 թվականի հունվարի 25-ին Հայաստանը վավերացրել է «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունը (ԵԽՊՇ թիվ 223), որով նախատեսվում են նույնիսկ ավելի խիստ պահանջներ, քան վերը նշված արձանագրություններով: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է ապահովել իրավական փորձաքննություն տվյալների պաշտպանության ոլորտում Հայաստանի օրենսդրական դաշտը բարելավելու նպատակով, ինչպես նաեւ տրամադրել տեխնիկական աջակցություն, որպեսզի հնարավոր լինի գործնականում օրենսդրության կիրառումը:

Ակնկալվող արդյունքներ

ՄԻԵԿ համակարգի արդյունավետության բարձրացումն ազգային մակարդակում

- ✔ Քրեական քաղաքականությունը եւ կարգավորող դաշտը համահունչ են Հայաստանի նոր ՔՕ-ին եւ ՔԴՕ-ին, ինչպես նաեւ եվրոպական չափանիշներին։
- ✔ Քրեական արդարադատության ոլորտի իրավաբանները ներդաշնակորեն իրականացնում են նոր քրեական օրենսդրական, կարգավորող դաշտը եւ քաղաքականությունը։
- ✔ Վատ վերաբերմունքի հետ կապված գործերը քննող ինստիտուցիոնալ կառույցը գործում է, եւ այս ոլորտում համապատասխան անձնակազմի կարողությունները զարգացած են։
- ✔ Հայաստանի Խորհրդարանն արդյունավետորեն նպաստում է ազգային մակարդակում ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի կիրառմանը։
- ✔ ՄԻԵԴ-ում երրորդ կողմի ներգրավվման ընթացակարգի վերաբերյալ ՄԻՊ գրասենյակի կարողություններն ընդլայնված են։
- ✔ Հայաստանի իրավական ոլորտի մասնագետներն ավելի լավ պատկերացում ունեն ՄԻԵԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի չափանիշների մասին եւ կիրառում են դրանք իրենց ամենօրյա պրակտիկայում։
- ✔ ՄԻԵԴ-ի համապատասխան վճիռներում առկա ընդհանուր միջոցներն արդյունավետորեն իրականացվում են։
- ✔ Հայաստանի զինված ուժերը կոնկրետ քայլեր է ձեռնարկում զինծառայողների շրջանում մարդու իրավունքներն ավելի լավ պաշտպանելու եւ խթանելու ուղղությամբ։
- ✔ Համապատասխան կրթական եւ ուսումնական հաստատություններն ինստիտուցիոնալացնում են զինված ուժերում մարդու իրավունքների եւ գենդերային հավասարության պաշտպանությունը եւ խթանումը՝ որպես իրենց ստանդարտ ուսումնական մոդուլների եւ կրթական այլ գործողությունների մաս։
- ✔ Զինված ուժերում կին զինծառայողների դերը եւ նշանակությունը բարձրացված է։
- ✔ Զինծառայողներին եւ վետերաններին ավելի մատչելի են սոցիալական եւ առողջապահական ծառայությունները եւ այդ իրավունքների պաշտպանության մեխանիզմները։
- ✔ Հայաստանի իշխանություններն ապահովում են համակարգված, գենդերազգայուն արձագանք (քաղաքականություններ, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ)՝ ուղղված Հայաստանում տեղահանված անձանց կոնկրետ խնդիրների լուծմանը (բնակարան, առողջություն, կրթություն եւ այլն)։
- ✔ Տեղահանված անձանց համար արդարադատության եւ գույքային իրավունքների մատչելիությունը կատարելագործված է։
- ✔ Առկա են Հայաստանի իշխանությունների կողմից սահմանված՝ շրջակա միջավայրի եւ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման միջոցներ։
- ✔ Իրավական ոլորտի մասնագետների, մարդու իրավունքների հարցերով կառույցների եւ քաղաքացիական հասարակության իրազեկությունը մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի փոխգործակցության վերաբերյալ բարձրացված է։
- ✔ Շրջակա միջավայրին եւ մարդու իրավունքներին առնչվող փաստաթղթերի պաշտպանության հետ կապված տարածաշրջանային համագործակցությունը կատարելագործված է։

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Արդարադատության նախարարություն, Պաշտպանության նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն,

Շրջական միջավայրի նախարարություն, Ազգային ժողով, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ, Հանրային պաշտպանի գրասենյակ, Փաստաբանների միություն, Վճռաբեկ դատարան, Արդարադատության ակադեմիա, Փաստաբանների պալատ, Դատավորների միություն, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Քննչական կոմիտե, Բնապահպանական ազգային կազմակերպություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:

Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության ոլորտում

- ✔ Հայաստանի իրավական դաշտը եւ հարակից գործելակերպերն ավելի համահունչ են Օվիեդոյի կոնվենցիայում ամրագրված սկզբունքներին:
- ✔ Հանրային իրազեկությունը կենսաբժշկության ոլորտի նկատմամբ կիրառվող մարդու իրավունքների հետ կապված մարտահրավերների վերաբերյալ բարձրացել է:
- ✔ Կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր մակարդակը բարձրացել է:
- ✔ Հայաստանը հետագա քայլեր է ձեռնարկում Օվիեդոյի կոնվենցիային միանալու ուղղությամբ:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Առողջապահության նախարարություն, Արդարադատության նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, Գլխավոր դատախազի գրասենյակ, Գերագույն դատարան, Բիոէթիկայի ազգային կենտրոն, Արդարադատության ակադեմիա, Երեւանի պետական բժշկական համալսարան, Երեւանի պետական համալսարան, Փաստաբանների միություն, ՀԿ-ներ:

Արտահայտվելու եւ տեղեկատվության ազատությունը, լրատվամիջոցների եւ տվյալների պաշտպանությունը

- ✔ Արտահայտվելու ազատությունը, լրատվամիջոցների ազատությունը եւ տեղեկատվության մատչելիությունը կարգավորող ազգային օրենսդրական եւ կարգավորող դաշտը համահունչ է ՄԻԵԿ-ին եւ արդյունավետորեն իրականացվում է:
- ✔ Հայաստանի լրատվամիջոցների մասնագետները եւ լրատվական գործունեություն իրականացնողները, այդ թվում՝ հանրային ծառայության հեռարձակողն ակտիվորեն խթանում են լրատվամիջոցների անձեռնմխելիությունը, էթիկայի չափորոշիչները եւ լրատվական ոլորտի ինքնակարգավորումը, ինչպես նաեւ նպաստում են տեղեկատվության խառնաշփոթի, այդ թվում՝ ապատեղեկատվության եւ ատելության խոսքի նվազեցմանը:
- ✔ Լրատվական գործունեություն իրականացնողների հավատարմագրման համակարգը համահունչ է եվրոպական չափանիշներին:
- ✔ Հայաստանի իրավական ոլորտի մասնագետները տեղյակ են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի եւ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի մասին եւ կատարում են դրանց պահանջները:
- ✔ Տվյալների պաշտպանության ազգային ռազմավարությունն ընդունվել է:
- ✔ Հայաստանի տվյալների պաշտպանության գործակալության կարգավիճակը եւ անկախությունը կատարելագործված են, եւ գործակալությունն իրավասություն ունի կիրառելու համապատասխան միջազգային չափանիշները:
- ✔ Իրավական ոլորտի մասնագետներն ավելի լավ պատկերացում ունեն տվյալների պաշտպանության միջազգային չափանիշների մասին եւ կիրառում են դրանք իրենց մասնագիտական պրակտիկայում:
- ✔ Հայաստանի քաղաքացիներն ավելի տեղյակ են իրենց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի մասին:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Արդարադատության նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, Ազգային ժողով, Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Փաստաբանների միություն, Վճռաբեկ դատարան, Արդարադատության ակադեմիա, Փաստաբանների պալատ, Դատավորների միություն, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողով, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ, մասնագիտացած մեդիա կազմակերպություններ, լրագրողների ինքնակարգավորվող մարմիններ, լրագրության ֆակուլտետներ ազգային մակարդակում եւ քաղաքացիական հասարակություն։

2.1.2. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության վիճակի մասին Եվրոպայի խորհրդի *Գլխավոր քարտուղարի 2021 թվականի տարեկան զեկույցում* ընդհանուր գնահատական է տրվում, որի համաձայն «կանանց նկատմամբ բռնությունը եւ ընտանեկան բռնությունը շարունակվում են եւ ավելացել են վերջին շրջանի լոքդաունի ընթացքում» եւ «վերջին ամիսներին երեխաները ենթարկվել են բռնության, սեռական բռնության եւ շահագործման բարձր ռիսկի ինչպես տանը, այնպես էլ առցանց՝ թերի հաղորդման եւ անպատժելիության բարձր մակարդակի ֆոնին». իր 2022 թվականի *«Շարժվելով դեպի 2022 թվական»* տարեկան զեկույցում նշվում է, որ «կանանց նկատմամբ բռնությունը […] ավելի է խորացել ՔՈՎԻԴ-19 համավարակով», եւ որ «հատուկ շեշտ պետք է դնել կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության բոլոր ձեւերի դեմ պայքարի վրա, մասնավորապես՝ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) կիրարկման, ինչպես նաեւ անդամ պետությունների կողմից դրա հետագա վավերացման միջոցով»։

Մարդու իրավունքների հանձնակատարի (Հանձնակատար)՝ Հայաստան կատարած այցի վերաբերյալ վերջին զեկույցում, թեեւ ընդունելով ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրական դաշտի ստեղծման եւ կատարելագործման ուղղությամբ Հայաստանի գործադրած ջանքերը եւ այս հարցում վերաբերմունքի նկատելի փոփոխությունը, ընդգծվում է, որ սա շարունակում է մնալ տարածված եւ որոշ չափով թերագնահատված երեւույթ։ Նա խրախուսում էր Հայաստանի իշխանություններին ապահովել գործող օրենսդրության արդյունավետ կիրառումը եւ առաջարկում էր իշխանություններին շարունակել աշխատանքը՝ օգտագործելով Եվրոպայի խորհրդի եւ քաղաքացիական հասարակության փորձը։ Երեխաների հետ կապված իրավիճակի վերաբերյալ Հանձնակատարը վկայակոչել է Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) 2015 թվականի եզրակացությունները, որոնց համաձայն Հայաստանի ներպետական օրենսդրությունը պատշաճ կերպով չի պաշտպանում երեխաներին սեռական շահագործման բոլոր ձեւերից եւ չի համապատասխանում Եվրոպական սոցիալական խարտիային։

➢ **Գենդերային հավասարություն, կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքար եւ կանանց համար արդարադատության մատչելիության բարելավում**

Վերջին տարիներին Հայաստանը մի շարք քայլեր է ձեռնարկել գենդերային հավասարությունը խթանելու, ընտանեկան բռնության դեմ պայքարելու եւ բռնությունից տուժած կանանց իրավական պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ ընդունելով համապատասխան օրենսդրություն եւ քաղաքականություններ: 2017 թվականի դեկտեմբերին Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունմամբ[16], 2018 թվականի հունվարին Ստամբուլի կոնվենցիայի ստորագրմամբ[17], ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությամբ եւ գործողությունների ծրագրով, որը, համաձայն իր «5-րդ առաջնահերթության, այն է՝ գենդերային հիմքով խտրականության կանխարգելում», ներառում է ընտանեկան բռնություն վերապրած կանանց համապարփակ պաշտպանության ապահովմանն ուղղված ընթացակարգեր, ընդգծվեց ընտանեկան բռնության ոլորտում աշխատելու կառավարության հանձնառությունը:

Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի իրականացման շրջանակում Եվրոպայի խորհրդի աջակցությունն ուղղված էր իրազեկման բարձրացմանը, կարեւոր գիտելիքների փոխանցմանը եւ հայ մասնագետների, իշխանությունների եւ ՀԿ-ների կարողությունների զարգացմանը՝ եվրոպական չափանիշները, մասնավորապես՝ Ստամբուլի կոնվենցիան կիրառելու նպատակով: Արդարադատության նախարարության խնդրանքով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) կարծիք է պատրաստել Ստամբուլի կոնվենցիայի[18] վավերացման սահմանադրական հետեւանքների վերաբերյալ, որն օգնեց ինստիտուցիոնալ մակարդակում բարձրացնել այս փաստաթղթի մասին իրազեկությունը: Թեեւ առաջընթաց է գրանցվել կանանց իրավունքների խախտման դեպքում իրավական պաշտպանության եւ պաշտպանության արդյունավետ միջոցների հավասար մատչելիությունը կանանց համար բարելավելու ուղղությամբ, դեռեւս առկա են բազմաթիվ մարտահրավերներ, այդ թվում՝ գենդերային հավասարության եւ կանանց համար արդարադատության մատչելիության մասով իրավական, ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական եւ մշակութային տեւական խոչընդոտներ եւ կանանց համար իրավաբանական օգնության եւ աջակցման ծառայությունների սահմանափակ հասանելիություն:

Այդ մարտահրավերներին դիմակայելու նպատակով եւ հիմնվելով նախկին համագործակցության միջոցով ձեռք բերված արդյունքների վրա՝ Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել համապատասխան շահառուներին՝ գենդերային հավասարությունը խթանելու, ինչպես կանանց նկատմամբ, այնպես էլ ընտանեկան բռնության դեմ պայքարելու գործում՝ միջազգային եւ եվրոպական չափանիշներին ու լավագույն գործելակերպերին, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակներին (ՄԱԿ ԿԶՆ), մասնավորապես՝ գենդերային հավասարության հասնելու վերաբերյալ 5-րդ նպատակին համապատասխան: Սա կիրականացվի, *inter alia*, իրազեկության հետագա բարձրացման, միջգերատեսչական մասնակցությամբ օրենսդրության շուրջ քննարկումների միասնական հարթակի ստեղծման, Ստամբուլի

[16] «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք:
[17] Ստամբուլի կոնվենցիայի վավերացման գործընթացն ընթացքի մեջ է:
[18] *CDL-AD(2019)018*, 2019 թվականի հոկտեմբեր:

կոնվենցիայի հետ ազգային օրենսդրության համապատասխանեցման մասով փորձագիտական աջակցության եւ եվրոպական չափանիշների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի եւ գործելակերպերի վերաբերյալ դատական մարմինների, իրավական ոլորտի մասնագետների եւ իրավապահ մարմինների, ինչպես նաեւ սոցիալական աշխատողների եւ այլ համապատասխան մասնագետների գիտելիքների զարգացման, ինչպես նաեւ այն երկրների հետ փորձի փոխանակման միջոցով, որտեղ ընտանեկան բռնության դեմ պայքարն ամենահաջողն է: Շարունակական աջակցություն կտրամադրվի կրթության մեջ գենդերային հավասարության հասնելու, գենդերային հավասարությունը եւ կանանց հզորացումն ու մասնակցությունը հասարակական եւ քաղաքական կյանքում խթանելու, ինչպես նաեւ համապատասխան քաղաքականություններ մշակելու համար: Գործողությունների ծրագրով ուշադրություն կդարձվի նաեւ կանանց, հատկապես բռնությունից տուժած եւ խոցելի իրավիճակում գտնվող կանանց համար արդարադատության մատչելիության բարելավմանը[19], այդ թվում՝ ապահովելով, որ արդարադատության շղթան հիմնված լինի գենդերային գործոնների վրա, եւ որ տեղեկատվության եւ իրավաբանական օգնության հասանելիությունը կատարելագործվի: Ստամբուլի կոնվենցիայի վավերացման, ազգային օրենսդրության եւ քաղաքականությունների բարելավման ուղղությամբ Հայաստանի կողմից տարվող ջանքերին եւ ընտանեկան բռնության մասին նոր օրենքի կիրարկմանն աջակցելը շարունակելու են լինել գործողությունների ծրագրի առաջնահերթությունները:

- **Երեխաների իրավունքներ**

Երեխայի իրավունքների պաշտպանությունը կազմում է Եվրոպայի խորհրդի առաքելության հիմքը՝ մարդու իրավունքները պաշտպանելու, ժողովրդավարությունը եւ իրավունքի գերակայությունը պահպանելու նպատակով: Երեխաներն իրավունք ունեն օգտվելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԿ), «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով (ՄԱԿ ԵԻԿ) եւ մարդու իրավունքների հետ կապված միջազգային եւ եվրոպական այլ փաստաթղթերով երաշխավորվող՝ մարդու բոլոր իրավունքներից: Նրանց իրավունքները ներառում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքներ: Երեխաների իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ռազմավարությամբ (2022-2027 թվականներ)[20] սահմանվում են վեց գերակա ոլորտներ՝ ազատություն բռնությունից, հավասար հնարավորություններ եւ սոցիալական ինտեգրում, հասանելիություն տեխնոլոգիաներին եւ դրանց ապահով օգտագործում, երեխաների պահանջներին համապատասխանեցված արդարադատություն, յուրաքանչյուր երեխայի ձայնի իրավունք տալը, երեխաների իրավունքները ճգնաժամային եւ արտակարգ իրավիճակներում:

Հանձնակատարը Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր վերջին զեկույցում առաջարկել է Հայաստանին ամրապնդել իր ջանքերը մանկական աղքատության դեմ պայքարելու եւ բոլոր երեխաների՝ համապատասխան կենսամակարդակի իրավունքը երաշխավորելու ուղղությամբ: Նա նաեւ առաջարկել է, որ Հայաստանը բարելավի սեռական շահագործման եւ սեռական բնույթի ոտնձգությունների նկատմամբ բոլոր երեխաների պաշտպանության մասով իր իրավական դաշտը: Հայաստանի կողմից *«Մարդկանց*

[19] Գյուղական բնակավայրերում և փոքրամասնությունների խմբերում ապրող:

[20] «Երեխաների իրավունքները գործողություններում. շարունակական իրականացումից մինչև համատեղ նորարարություն»:

թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ գնահատման երկրորդ փուլին առնչվող իր զեկույցում Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների հարցերով փորձագիտական խումբը (ԳՐԵՏԱ)[21] կոչ է արել Հայաստանի իշխանություններին ուժեղացնել երեխաների թրաֆիքինգի կանխարգելումը՝ խոցելի իրավիճակներում գտնվող երեխաներին ցուցաբերվող աջակցության բարելավման միջոցով: Հայաստանի վերաբերյալ իր *հանձնարարականում* «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի Կողմերի կոմիտեն առաջարկել է, *inter alia,* որ Հայաստանի իշխանություններն առավել մեծ ջանքեր գործադրեն՝ ուղղված աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի կանխարգելմանը, ուժեղացնեն երեխաների թրաֆիքինգի կանխարգելումը, օրենսդրական եւ գործնական միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների համար Հայաստանում իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Հայաստանը 2020 թվականին վավերացրել է «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանզարոտեի կոնվենցիա):

Գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը կփորձի բարձրացնել առանցքային շահառուների[22], մասնագետների եւ ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության իրազեկությունը Լանզարոտեի կոնվենցիայի, «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, ինչպես նաեւ «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայի (Բուդապեշտի կոնվենցիա) դրույթների մասին, աջակցություն տրամադրել ազգային իշխանություններին դրանց իրականացման համար: Հատուկ ուշադրություն կդարձվի Առցանց եղանակով երեխայի սեռական շահագործմանը եւ նրա նկատմամբ սեռական ոտնձգություններին (ԱԵՍՇՈ), որը համարվում է աճող վտանգ երեխաների համար, եւ որի համար անհրաժեշտ են հրատապ գործողություններ: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է աջակցել իշխանություններին երեխաների բարեկեցությունն ու պաշտպանության համակարգն ամրապնդելու նրանց գործողություններում՝ ցանկացած միջավայրում երեխաներին բռնությունից, ինչպես նաեւ սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից պաշտպանելու նպատակով՝ միաժամանակ քրեական գործով քննություններն իրականացնելով արդյունավետ եւ երեխաների պահանջներին համապատասխանեցված կերպով ու ընդլայնելով խոցելի երեխաների պաշտպանվածությունը: Աջակցությունը հիմնված կլինի 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքի վրա եւ կներառի իրազեկության բարձրացում՝ Բուդապեշտի կոնվենցիայով

[21] Իր զեկույցում ԳՐԵՏԱ-ն վկայակոչել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից 2015 թվականին իրականացված փորձնական ուսումնասիրությունը, որում եզրակացություն է արվել, որ երեխաների աշխատանքի և հարկադիր աշխատանքի միջոցով երեխաների շահագործումը լուրջ խնդիր է Հայաստանում, մասնավորապես գյուղական վայրերում: ԳՐԵՏԱ-ն հղում է կատարել նաև մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ 2015 թվականի մայիսին Հայաստան կատարած այցի արդյունքներով կազմված զեկույցին, որում եզրահանգում էր արվել, որ Հայաստանում երեխաների պաշտպանության գործող համակարգն արդյունավետ չէր երեխաների շահագործման տարբեր ձևերը կանխելու համար:

[22] «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով (2016 թվական) այս կառույցին վերապահվում է երեխաների իրավունքների մոնիթորինգ, ինչպես նաև կոնվենցիաների, ինչպես նաև երեխաների խնամքի, երեխաների պաշտպանության և կրթական հաստատությունների առնչությամբ պետության պարտավորությունների մասով լայն լիազորություններ:

եւ Լանզարոտեի կոնվենցիայով երեխաներին ԱԵՍՇՈ-ից պաշտպանելու վերաբերյալ առաջին օղակի մասնագետների համար գործնական ուղեցույցների եւ տեղեկատվական թերթիկների մշակման միջոցով, ինչպես նաեւ կներառի երեխաների մասնակցությունը եւ իրազեկության բարձրացումը երեխաների շրջանում: Լանզարոտեի կոնվենցիային եւ Բուդապեշտի կոնվենցիային համապատասխան օրենսդրությունն ու քաղաքականությունները կատարելագործելու համար անդամ պետություններին տեխնիկական աջակցության տրամադրումը, ազգային իրավապահ մարմինների կարողությունների հետագա զարգացումը եւ տարածաշրջանային համագործակցությունը, մասնավորապես՝ հաշվետվությունների եւ քննության ընթացակարգերի շրջանակներում, նույնպես կապահովվի:

Ակնկալվող արդյունքներ

Գենդերային հավասարություն, կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքար եւ արդարադատության մատչելիության բարելավում

- ✔ Հայաստանն ավելի պատրաստված է Ստամբուլի կոնվենցիայի վավերացմանը:
- ✔ Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասով Հայաստանի իրավական դաշտն ու քաղաքականության շրջանակը համահունչ են Եվրոպայի խորհրդի չափանիշներին:
- ✔ Իրավապահ մարմինները, սոցիալական աշխատողները եւ այլ համապատասխան մարմիններ ավելի լավ պատկերացում ունեն ընտանեկան բռնությունից եւ գենդերային հիմքով բռնությունից տուժած անձանց հետ աշխատանքի հետ կապված եվրոպական չափանիշների եւ գենդերազգայուն մոտեցումների մասին:
- ✔ Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին իրազեկության բարձրացման եւ վերջինիս հետ կապված իրավիճակը մոնիթորինգի ենթարկելու մասով ՄԻՊ գրասենյակի կարողություններն ընդլայնված են:
- ✔ Գենդերային հավասարությունը եւ կանանց իրավունքների եւ հնարավորությունների ընդլայնումն ավելի լավ են խթանվում, իսկ Հայաստանի՝ կրթության ոլորտում գենդերային մեյնսթրիմինգի իրավական եւ քաղաքականության շրջանակը համահունչ է Եվրոպայի խորհրդի չափանիշներին:
- ✔ Գենդերային հիմքով բռնությունից եւ ընտանեկան բռնությունից տուժած կանանց, այդ թվում՝ ամենաանբարենպաստ վիճակում գտնվողներին ավելի հասանելի են արդարադատությունն ու աջակցման ծառայությունները:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Արդարադատության նախարարություն, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, Արդարադատության ակադեմիա, Ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Փաստաբանների միություն, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, ՀԿ-ներ:

Երեխաների իրավունքներ

- ✔ Երեխաների պաշտպանության օրենսդրական, քաղաքականության եւ ինստիտուցիոնալ շրջանակները համահունչ են եվրոպական չափանիշներին, մասնավորապես՝ Լանզարոտեի կոնվենցիային, եւ առկա է բարելավում թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների հայտնաբերման եւ նրանց աջակցություն ցուցաբերելու հարցում:
- ✔ Համապատասխան մարմիններն ընդունում եւ իրականացնում են համապարփակ ռազմավարություններ՝ բարելավելու երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի, այդ թվում՝ երեխաների թրաֆիքինգի կանխարգելումը եւ երեխաների պաշտպանությունը

դրանցից:

- ✔ Իշխանությունները, մասնագետները եւ ՄԻՊ գրասենյակը մոբիլիզացնում են իրենց կարողությունները՝ երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերը կանխարգելելու եւ երեխաներին դրանցից պաշտպանելու, ինչպես նաեւ տուժած եւ վկա հանդիսացող երեխաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:
- ✔ Բարելավված են ՄԻՊ գրասենյակի՝ երեխաների խնամքի հաստատությունները մոնիթորինգի ենթարկելու կարողությունները, եւ ուժեղացվել են այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխաներին տրամադրվող ծառայությունները:
- ✔ Երեխաներն ավելի լավ են ներկայացված անմիջականորեն իրենց վրա ազդեցություն ունեցող որոշումների կայացման գործընթացում:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Արդարադատության նախարարություն, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, Ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀԿ-ներ:

2.1.3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ, ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌՈՒՄ

➢ **Խտրականության բացառում. ազգային փոքրամասնություններ, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ**

Խտրականության հիմքում ի սկզբանե ընկած է բացասական վերաբերմունքը, որն առաջանում է տարբեր խմբերի նկատմամբ խորապես արմատացած եւ իրավական տեսանկյունից չհիմնավորված հասարակական կարծրատիպերի հետեւանքով: Օրենքի առջեւ հավասարության, հավասար հնարավորությունների ապահովումը եւ դրանց սերտորեն առնչվող խտրականության արգելումը պետության կարեւոր խնդիրներից են, որոնց համար անհրաժեշտ է ձեռնարկել ակտիվ իրավական եւ կազմակերպչական միջոցներ՝ հասարակության մեջ առավել խոցելի խմբերին պատկանող անձանց համար հավասար հնարավորություններ ստեղծելու նպատակով: Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը (ՄԻՊ), միջազգային կազմակերպությունները եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շարունակաբար անդրադառնում են իրավունքների հավասարության եւ խտրականության արգելման, այդ թվում՝ խտրականության բացառման մասին ազգային օրենսդրություն ընդունելու անհրաժեշտության հետ կապված հարցերին: Վերոնշյալ երաշխիքների լիարժեք իրականացումը շարունակում է լինել կառավարության ուշադրության կենտրոնում՝ որպես վերջինիս՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մաս:

Եվրոպայի խորհուրդը «ներառմանն» ուղղված մի քանի չափանիշներ է մշակել: Դրանց թվում են Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) Ընդհանուր քաղաքականության վերաբերյալ առաջարկությունները, «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան (ԱՓՇԿ), Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության (*CM/Rec(2010)5*) եւ միջմշակութային ինտեգրման (*CM/Rec(2015)1*) հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ Նախարարների կոմիտեի հանձնարարականները, ինչպես նաեւ Ռոմաների և ճանապարհորդների ներառման վերաբերյալ մի քանի հանձնարարականներ[23]: Մարդու

[23] «Ռոմաներ և ճանապարհորդներ» եզրույթը Եվրոպայի խորհրդում օգտագործվում է այս ոլորտում Եվրոպայի խորհրդի աշխատանքի շրջանակում ներառվող խմբերի լայն բազմազանությունն

իրավունքների հանձնակատարը (Հանձնակատար) Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր վերջին զեկույցում հիշեցրել է, որ Հայաստանի իշխանությունները պարտավոր են ապահովել, որ Հայաստանում հանրային եւ մասնավոր կյանքի որեւէ տիրույթում ոչ ոքի նկատմամբ խտրականություն չդրսեւորվի, եւ իշխանություններին առաջարկել է ընդունել խտրականության բացառման մասին համապարփակ օրենք:

Խտրականության բացառում

2021 թվականին ընդունված նոր Քրեական օրենսգրքով (ՔՕ) քրեական պատասխանատվություն է նախատեսվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելու, գույքային վիճակի, ծննդյան, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով խտրականության համար: Ինչ վերաբերում է ատելության խոսքին, ապա քրեական պատասխանատվություն է սահմանվել այն հրապարակային խոսքի համար, որը նպատակաուղղված է ռասայական, ազգության, էթնիկ կամ սոցիալական ծագման, կրոնական, քաղաքական կամ այլ հայացքների կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով անձի կամ մարդկանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ խթանելուն, ինչպես նաեւ նույն նպատակով նյութեր եւ առարկաներ տարածելու համար: Ինչ վերաբերում է ատելության հիմքով հանցագործությանը, ապա տուժողի ռասայական, ազգության, էթնիկ կամ սոցիալական ծագման, կրոնական, քաղաքական կամ այլ հայացքների կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի հիմքով հանցագործության կատարումը համարվում է ծանրացնող հանգամանք: Սեռական կողմնորոշումը եւ գենդերային ինքնությունը (ՍԿԳԻ) հստակորեն պաշտպանված չեն Սահմանադրության, ՔՕ-ի կամ խտրականության բացառման մասին օրենքի նախագծի շրջանակներում: Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր վերջին զեկույցում Հանձնակատարը մատնանշել է խտրականության բացառման մասին համապարփակ օրենքի բացակայությունը, որում հստակորեն անդրադարձ կարվեր ՍԿԳԻ-ի հիմքով խտրականության արգելմանը: Նա նաեւ կոչ է արել իշխանություններին քայլեր ձեռնարկել Հայաստանում լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց նկատմամբ խտրականության դեմ պայքարելու համար: «Հարավային Կովկասում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ենթադրյալ խախտումների մասին» Խորհրդարանական վեհաժողովի *2418 (2022) բանաձեւով* վերահաստատվել է Հանձնակատարի կողմից արված առաջարկությունը:

Գործողությունների ծրագրի շրջանակում համապատասխանաբար օժանդակություն կցուցաբերվի բոլոր հիմքերով խտրականության դեմ արդյունավետ գործողություններ ձեռնարկելու իշխանությունների ջանքերին՝ համապատասխան իրավական դաշտը խտրականության բացառման վերաբերյալ եվրոպական եւ միջազգային չափանիշներին

ընդգրկելու համար. դրանք են մի կողմից՝ ա) Ռոմա, Սինտի/Մանուշ, Կալե, Կաալե, Ռոմանիչալներ, Բոյաշ/Ռուդարի, բ) Բալկանյան եգիպտացիները (եգիպտացիներ և աշքալիներ), գ) արևելյան խմբերը (Դոմ, Լոմ և Աբդալ), և մյուս կողմից այնպիսի խմբեր, ինչպիսիք են քոչվոր խմբերը, յենիշները և «Ճանապարհորդներ» վարչական եզրույթով նշված բնակչությունը, ինչպես նաև այն անձինք, որոնք իրենց գնչու են ճանաչում: Սա բացատրական ծանոթագրություն է, այլ ոչ թե ռոմաների և/կամ ճանապարհորդների սահմանում:

համապատասխանեցնելու միջոցով: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է աջակցել ազգային իշխանություններին ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման գործում՝ ՌԱԵՀ-ի կողմից իր 2016 թվականի ազգային զեկույցում արված առաջարկություններին համահունչ: Գործողությունների ծրագրի շրջանակում աջակցություն կտրամադրվի իշխանություններին նաեւ խտրականության զոհերի համար արդարադատության մատչելիությունը բարելավելու հարցում՝ ուժեղացնելով փոխհատուցման մեխանիզմները եւ խտրականության բացառման վերաբերյալ քաղաքականությունները:

Փոքրամասնությունները եւ փոքրամասնությունների լեզուները

Հայաստանի վերաբերյալ իր կարծիքում Շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն (ՇԿԽԿ), ընդունելով փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու եւ խթանելու ուղղությամբ Հայաստանի ջանքերը, առաջարկում է, *inter alia,* մշակել փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը խթանելու պրոակտիվ մոտեցում եւ Շրջանակային կոնվենցիայով նախատեսված իրավունքների իրացման վրա ազդող քաղաքականությունները մշակել՝ խորհրդակցելով փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է աջակցել փոքրամասնությունների պաշտպանության կատարելագործմանն ուղղված Հայաստանի ջանքերին՝ ԱՓՇԿ-ին համապատասխան:

Նույն կերպ, ինչպես որ ընդունվել է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ՏՓԼԵԽ) կիրառման վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույցում, անհրաժեշտ է խթանել փոքրամասնությունների լեզուների օգտագործումը նախադպրոցական կրթության մեջ եւ տարածել դրանք տարրական եւ միջնակարգ մակարդակներում: Անհրաժեշտ կլինի հետագա ջանքեր գործադրել փոքրամասնությունների միավորումների միջոցով այս լեզուների պաշտպանությունն ու խթանումը զանգվածային լրատվամիջոցներում (այսինքն հեռուստատեսային հաղորդումներում), հանրային կյանքում եւ վարչական ու դատական մարմիններում, ինչպես նաեւ մշակութային գործունեության եւ արտադպրոցական կրթության միջոցով ընդլայնելու համար: Սա վերահաստատվել է Հայաստանի կողմից ՏՓԼԵԽ-ի կիրառման վերաբերյալ Նախարարների կոմիտեի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված հանձնարարականով: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է օգնել Հայաստանին ՏՓԼԵԽ-ի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման հարցում:

Ակնկալվող արդյունքներ

Խտրականության բացառում. ազգային փոքրամասնություններ, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ

- ✔ Խտրականությունը կանխարգելելու իրավական եւ կարգավորող դաշտը համահունչ է եվրոպական չափանիշներին:
- ✔ Համապատասխան կառույցները շարունակում են աջակցել ռասիստական, հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքի եւ բռնության կանխարգելմանը, պայքարում են այդ երեւույթների դեմ, քրեական հետապնդման են ենթարկում հանցանք կատարած անձանց եւ ակտիվորեն նպաստում են ավելի ներառական հասարակության կառուցմանը:

- ✔ Խտրականության եւ ատելության խոսքի դեպքերն արդյունավետորեն լուծելու ՄԻՊ գրասենյակի կարողություններն ընդլայնվել են:
- ✔ Շարունակվում է փոքրամասնությունների լեզուների օգտագործումը եւ խթանումը դպրոցում, լրատվամիջոցներում եւ հանրային կյանքում:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, Ազգային փոքրամասնությունների ազգային–մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդ, Արդարադատության նախարարություն, Ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ, ՀԿ-ներ:

2.1.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

➢ **Սոցիալական իրավունքներ**

Սոցիալական իրավունքների ապահովումը ոչ միայն միջազգային պարտավորություն է մարդու իրավունքների ոլորտում, այլ նաեւ սոցիալական եւ տնտեսական կայունության պայման է՝ նպաստելով լավ կառավարմանը եւ բարձրացնելով սոցիալական եւ ժողովրդավարական կայունության նկատմամբ հարգանքը: Հայաստանը 2004 թվականին վավերացրել է լրամշակված Եվրոպական սոցիալական խարտիան՝ ընդունելով դրա 98 կետից 67-ը:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) կողմից 2019[24] թվականից ընդունված անհամապատասխանության վերաբերյալ եզրակացություններով բացահայտվում են մի շարք կարիքներ՝ կապված սոցիալական իրավունքների բարելավման հետ՝ մարդու սոցիալական իրավունքները երաշխավորող իրավունքի տեսանկյունից, եւ կոչ է արվում արագացնել Հայաստանի օրենսդրության եւ հարակից ոլորտների գործելակերպի բարեփոխումները, ինչպես նաեւ ապահովել Հայաստանի ավելի հետեւողական մասնակցությունը Եվրոպական սոցիալական խարտիային եւ դրա մեխանիզմներին: Հետեւաբար Եվրոպայի խորհուրդը կաջակցի ազգային իշխանություններին ազգային օրենսդրական եւ կարգավորող դաշտերը եւ գործելակերպը սոցիալական իրավունքների, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների ոլորտում եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու հարցում, որոնց պաշտպանությունն ու խթանումը հատուկ նշվել է որպես առաջնահերթություն կառավարության գործողությունների համար: Հատուկ ուշադրություն կդարձվի «դարպաս հանդիսացող իրավունքներին»՝ սոցիալական, ինչպես նաեւ քաղաքացիական եւ քաղաքական այլ իրավունքների իրացման կամ այդ իրավունքներից օգտվելու համար: Այդ կերպ քայլեր կձեռնարկվեն սոցիալական գործընկերների հետ եւ նրանց միջեւ երկխոսությունն ընդլայնելու ուղղությամբ: Բացի այդ, սոցիալական իրավունքների պահպանումն ուժեղացնելու հարցում Հայաստանի հետ համագործակցության շրջանակում աջակցություն կցուցաբերվի համապատասխան մարմիններին՝ լրամշակված Եվրոպական սոցիալական խարտիայի ընդունված դրույթների իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տվյալները հավաքելու եւ դրանք ՍԻԵԿ-ին տրամադրելու գործում: Այդպիսով կբարելավվի ՍԻԵԿ-ի մոնիթորինգի գործընթացը: Լրացուցիչ ուշադրություն կդարձվի կոլեկտիվ բողոքարկման մեխանիզմի եւ լրացուցիչ դրույթների ընդունումը խթանելուն:

[24] Թեմատիկ խումբ 1, «Զբաղվածություն, ուսուցում և հավասար հնարավորություններ», Եզրակացություններ, 2020 թվական. Թեմատիկ խումբ 2, «Առողջություն, սոցիալական ապահովություն և սոցիալական պաշտպանություն», Եզրակացություններ, 2021 թվական:

Ակնկալվող արդյունքներ

Հայաստանում սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովումը համահունչ է լրամշակված Եվրոպական սոցիալական խարտիային

- ✔ Հայաստանի օրենսդրական դաշտը համապատասխանեցվել է սոցիալական իրավունքների ոլորտում եվրոպական չափանիշներին:
- ✔ Առաջընթաց Հայաստանի կողմից կոլեկտիվ բողոքների ընթացակարգի եւ Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ դրույթների ընդունման ուղղությամբ:
- ✔ Բարելավված ՍԻԵԿ մոնիթորինգի գործընթաց՝ շնորհիվ ազգային իշխանությունների կողմից տրամադրվող ազգային զեկույցների ավելի լավ որակի:
- ✔ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակն արդյունավետորեն նպաստում է Հայաստանում մարդու սոցիալական իրավունքների պատշաճ պաշտպանությանը:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Վարչապետի աշխատակազմ (Առողջապահական եւ աշխատանքի տեսչություն, ԲԿԳ–ի քարտուղարություն), Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն եւ այլ համապատասխան նախարարություններ, Ազգային ժողով, Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, տեղական եւ մարզային իշխանություններ, սոցիալական գործընկերներ եւ քաղաքացիական հասարակություն:

2.2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել արդարադատության համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը, եվրոպական չափանիշներին համահունչ՝ համապատասխան օրենսդրական եւ ինստիտուցիոնալ դաշտերի բարելավմանը, արդարադատության համակարգի՝ գործունեության մասով անկախությանն ու հաշվետվողականությանը վերաբերող գործող օրենսդրական եւ նորմատիվ ակտերի իրականացմանը նպաստելուն եւ ազգային դատարանների որոշումների կատարման, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարման բարելավմանն ուղղված Հայաստանի ջանքերին: Այն նաեւ կաջակցի իշխանություններին պրոբացիայի համակարգի, ինչպես նաեւ քրեակատարողական համակարգի բարեփոխումները շարունակելու հարցում, որի նպատակը կալանավորման ավելի անվտանգ եւ ավելի մարդկային պայմանների ապահովմանը եւ կրկնահանցագործությունները նվազեցնելու միջոցով հանրային անվտանգության բարձրացմանը հասնելն է: Հայաստանի իշխանությունները մի քանի անգամ վերահաստատել են այս ոլորտներում բարեփոխումները շարունակելու իրենց հանձնառությունը, որոնց համար երկրին անհրաժեշտ կլինի Եվրոպայի խորհրդի շարունակական աջակցությունը:

Այս գործողությունները կնպաստեն Հայաստանի կողմից Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման հետեւյալ նպատակների (ԿԶՆ) իրագործմանը. ամուր առողջության եւ բարեկեցության վերաբերյալ 3-րդ նպատակ (4-րդ, 5-րդ թիրախներ), գենդերային հավասարության վերաբերյալ 5-րդ նպատակ (ավելի կոնկրետ՝ 1-ին, 2-րդ եւ Գ թիրախներ), անհավասարությունների կրճատման վերաբերյալ 10-րդ նպատակ (2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 7-րդ թիրախներ) եւ խաղաղության, արդարության եւ ամուր հաստատությունների վերաբերյալ 16-րդ նպատակ (3-րդ, 7-րդ, 10-րդ եւ Բ թիրախներ):

2.2.1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Իրավունքի գերակայության վրա հիմնված կառույցները կարեւոր նշանակություն ունեն հանրային ինստիտուտների ամբողջականության եւ պատշաճ գործունեության, հասարակության ներսում մարդու իրավունքների արդյունավետ իրացման եւ առօրյա կյանքում քաղաքացիների անվտանգության եւ պաշտպանության համար: Անկախ, անկողմնակալ եւ արդյունավետ դատական իշխանությունները կարեւոր են հանրային վստահություն ներշնչելու եւ մարդու իրավունքների ապահովման համար: Դրանք երաշխավորում են օրենքի առջեւ բոլոր անհատների նկատմամբ հավասար վերաբերմունքը եւ գործնականում իրավունքներից ու ազատություններից օգտվելը: Բացի այդ, անկախ եւ վստահելի դատական իշխանությունը դրական ազդեցություն ունի երկրի տնտեսական աճի վրա:

Ինչպես նշվում է Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 15432 զեկույցում եւ 2022 թվականի հունվարին ընդունված՝ «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին» թիվ 2427 (2022) բանաձեւում, Հայաստանում դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը ցածր է՝ դրա անկախության բացակայության պատճառով: «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) եւ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինությունը Հայաստանի իշխանությունների խնդրանքով կազմած 2019 թվականի հոկտեմբերի իրենց համատեղ եզրակացության մեջ լայնորեն ողջունել են Հայաստանի կառավարության կողմից հայտարարված բարեփոխումների գործընթացը եւ նշել են, որ «բարեփոխումների փաթեթում ներառված առաջարկների մեծ մասը համապատասխանում է եվրոպական չափանիշներին եւ նպաստում է կոռուպցիայի դեմ պայքարին՝ միեւնույն ժամանակ չսահմանափակելով դատական իշխանության անկախությունը»: ԵԽԽՎ-ի գնահատմամբ՝ «որոշ ժամանակ կպահանջվի, որպեսզի արդեն իրականացված կամ նախաձեռնված բարեփոխումները որոշակի մասշտաբի արդյունքներ տան, սակայն ավելի անկախ դատական իշխանության հիմքերը դրվում են»:

- **Արդարադատության համակարգի անկախություն եւ արդյունավետություն**

Օրենսդրության եւ դատական պրակտիկայի կատարելագործում

Եվրոպայի խորհուրդը դատական իշխանության ոլորտի բարեփոխումների գործընթացում Հայաստանին ուղեկցող հիմնական գործընկերներից մեկն է: 2018 թվականից ի վեր Հայաստանը նկատելի առաջընթաց է ունեցել դատահիրավական բարեփոխումների իրականացման գործում, մասնավորապես՝ ընդունելով նոր Դատական օրենսգիրք եւ Դատական օրենսգրքից բխող մի շարք այլ իրավական ակտեր[25], ներդնելով դատավորների գործունեության գնահատման արդյունավետ մեթոդաբանություն եւ ընթացակարգ՝ առանց վտանգելու դատական անկախության նկատմամբ հարգանքը, ինչպես նաեւ 2018 թվականին ընդունելով Քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրք: Բացի այդ, դատական իշխանության մասնագիտական կարողություններն էլ ավելի են ամրապնդվել՝ ռեսուրսների հասանելիության եւ վերապատրաստումների միջոցով եվրոպական չափանիշների ավելի միասնական կիրառումն ապահովելու համար:

[25] Նոր ընդունված օրենքներով մի շարք փոփոխություններ են մտցվել դատական համակարգում, ներառյալ՝ դատական ինքնակառավարվող մարմինների աշխատանքի կառուցվածքն ու շրջանակը, դատարանների կառավարումը և հաշտարարության ու արբիտրաժի ընդլայնումը:

Հայաստանի համար իրականացվող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել իշխանություններին՝ նրանց հիմնական դատական բարեփոխումներն իրականացնելու հարցում՝ ըստ 2022 թվականի հուլիսի 21-ին ընդունված՝ Դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության, ինչպես նաեւ աջակցություն կտրամադրի Դատական օրենսգրքի եւ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի արդյունավետ կիրարկումն ապահովելու հարցում՝ դատական իշխանության նկատմամբ Հայաստանի քաղաքացիների վստահությունը բարձրացնելու հիմնական նպատակով: Դատական օրենսգրքի՝ ընդունումից հետո իրականացված ուսումնասիրությունը, ինչպես նաեւ Վենետիկի հանձնաժողովի համապատասխան եզրակացությունները[26] որպես հիմք կծառայեն այս տիրույթում Եվրոպայի խորհրդի հետագա աշխատանքի համար: Կազմակերպությունը կշարունակի աջակցել նաեւ իրավական ակտերի մշակման գործընթացին: Նման աջակցության տրամադրումը նպատակաուղղված կլինի դատական իշխանության անկախության, անաչառության, արդյունավետության եւ հաշվետվողականության ամրապնդմանը: Այն կներառի իրավական դաշտի եւ գործելակերպի բարելավումը՝ ըստ անհրաժեշտության, եւ դատական ինքնակառավարվող մարմիններին, մասնավորապես՝ Բարձրագույն դատական խորհրդին (ԲԴԽ) ցուցաբերվող օգնությունը՝ ապահովելու համար դրա ակտերի եւ աշխատանքի ավելի մեծ համապատասխանությունը Եվրոպայի խորհրդի չափանիշներին եւ լավագույն գործելակերպին՝ թափանցիկության եւ արդյունավետության առումով[27]:

Աջակցություն կտրամադրվի վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) մեխանիզմների կիրառումն ընդլայնելու նպատակով՝ հաշտարարության եւ արբիտրաժի ընդլայնված կիրառման միջոցով Հայաստանում դատարանների ծանրաբեռնվածության կրճատմանը նպաստելու համար: Հետեւաբար դրանով փորձ կարվի, *inter alia,* բարելավելու նոր իրավական դաշտի, զարգացումների եւ միտումների վերաբերյալ դատավորների, իրավաբանների, ուսանողների, հաշտարարների եւ արբիտրների գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաեւ բարձրացնելու վեճերի այլընտրանքային լուծման հավանական կիրառողների իրազեկությունը:

Հայաստանի քաղաքացիների վստահությունն ու հավատը մեծացնելը կախված է իրականացվող արդարադատության իրական որակից, ինչպես նաեւ դատական իշխանության թափանցիկության եւ հանրային հաշվետվողականության աստիճանից: Ուստի Եվրոպայի խորհուրդը պատրաստ է աջակցել իշխանություններին դատական ակտերի որակի բարելավման գործում՝ այդպիսով պահպանելով իրավական որոշակիության սկզբունքը: Այն աջակցություն կտրամադրի նաեւ դատական իշխանության

[26] Վերջին՝ ««Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ (2022 թվականի մարտ) Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ՄԻԳՏ) համատեղ եզրակացության» մեջ վերջիններս ընդհանուր մտահոգություն են հայտնել՝ կապված Դատական օրենսգրքում անհամատեղելիության նոր պահանջ սահմանելու հետ, ինչպես նաև կապված որոշ եզրույթներ ավելի ճշգրիտ սահմանելու և տարբեր իրավական տեքստերում դրանց հետևողական օգտագործման անհրաժեշտության հետ:

[27] Այս օգնությունը, ի թիվս այլ գործողությունների, ներառում է ԲԴԽ-ի կարողությունների ընդլայնումը, ինչպես նաև փորձագիտական աջակցության տրամադրում դատական գնահատման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի և կանոնակարգերի, դատական գործերի քննության օրինակելի ժամկետների, համապատասխան ՏՏ և տեխնիկական գործիքների և փոփոխված Դատական օրենսգրքից բխող այլ փաստաթղթերի մշակման կամ վերանայման գործում:

կարողությունների զարգացման հարցում՝ Հայաստանի քաղաքացիների հետ կապի համապատասխան եւ արդյունավետ ռազմավարություն ներդնելու համար՝ որպես առաջնահերթություն դիտարկելով Բարձրագույն դատական խորհուրդը, ինչպես նաեւ աջակցություն կտրամադրի՝ կապված դատական իշխանության տվյալների հավաքագրման եւ բաշխման բարելավման հետ: Տարածաշրջանային համագործակցությունը կշարունակվի բարելավվել փաստաբանների միությունների ինստիտուցիոնալ զարգացման, փաստաբանների եւ դատավորների փոխգործակցության չափանիշների[28], փաստաբանի մասնագիտության եւ փաստաբանների վերապատրաստման համակարգերի հասանելիության առումով:

Ժամանակակից աշխարհում արդարադատության թվային մատչելիությունը դառնում է արդարադատության մատչելիության անբաժանելի մասը, եւ դրա ընդլայնումը առաջնահերթություն է նաեւ Հայաստանի իշխանությունների համար: Աջակցություն կտրամադրվի, որպեսզի Հայաստանի դատական իշխանությունն ընդունի եւ ներդնի Եվրոպայի խորհրդի՝ էլեկտրոնային արդարադատության հետ կապված լավագույն գործելակերպերը:

Աջակցության տրամադրումը կշարունակվի՝ նպատակ ունենալով հասնելու Հայաստանի արդարադատության համակարգի որակի, արդյունավետության, անկախության եւ հաշվետվողականության արդյունավետ, համակարգված եւ տվյալների վրա հիմնված մոնիթորինգի եւ գնահատման՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱԱԵՀ) չափանիշներին եւ գործիքներին համապատասխան: Սա իր հերթին թույլ կտա Հայաստանին գնահատելու դատաիրավական բարեփոխումներին ուղղված իր ջանքերի ազդեցությունը եւ ուղղորդելու բարեփոխումների գործընթացը:

Կշարունակվի անդրադարձ կատարվել բոլորի, այդ թվում՝ կանանց եւ խոցելի խմբերի համար, ինչպիսիք են փոքրամասնությունները, երեխաները եւ երիտասարդները, հաշմանդամություն ունեցող անձինք, արդարադատության հավասար մատչելիություն ամրապնդելու անհրաժեշտությանը՝ հատկապես տեխնիկական եւ օրենսդրական խոչընդոտները վերացնելու միջոցով: Եվրոպայի խորհուրդն աջակցություն կտրամադրի՝ ուղղված կին դատավորների մասնակցության եւ առաջնորդության խթանմանը, դատական իշխանության մեջ կին դատավորների թվի ավելացմանը եւ կանանց համար արդարադատության հավասար մատչելիության ապահովմանը:

Սահմանադրական արդարադատություն

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին է վերապահված սահմանադրական արդարադատության իրականացումը եւ սահմանադրության գերակայության ապահովումը: Դրան առանցքային դեր է վերապահված Հայաստանի պետականության ընդհանուր ինստիտուցիոնալ կառուցվածքում եւ այն «պահապանի» անփոխարինելի գործառույթ է կատարում ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովման գործում:

Եվրոպայի խորհուրդն աջակցություն կտրամադրի հետեւյալ ոլորտներում.

- Հայաստանի դատական իշխանության համակարգում Սահմանադրական

[28] Հիմնական չափանիշները նշված են ԵԴԽԽ *(2013)16 կարծիքում*:

դատարանի գործունեության բարեփոխումներ (արտաքին կարգավորող դաշտ).

- վարչական, կազմակերպչական, ֆինանսական եւ կառուցվածքային հարցերը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի միջոցով ընթացակարգի եւ ապացույցների վերաբերյալ (ներքին կարգավորող դաշտ) Սահմանադրական դատարանի կանոնների բարեփոխումներ.

- դատարանի աշխատակազմի անդամների կարողությունների զարգացում՝ ուշադրություն դարձնելով դատական նախադեպային իրավունքի, հետազոտական կարողությունների եւ նախագծերի մշակման հմտությունների վրա.

- համապատասխան տեխնիկական սարքավորումների ապահովում, Սահմանադրական դատարանի գրադարանային եւ հետազոտական ռեսուրսների ընդլայնում:

Ակնկալվող արդյունքներ

Արդարադատության համակարգի անկախություն եւ արդյունավետություն

- ✔ Դատական իշխանության վերաբերյալ ներպետական իրավական ակտերն ընդունվել եւ իրագործվել են Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ:
- ✔ Դատական ինքնակառավարվող մարմինները, ներառյալ՝ ԲԴԽ-ն, ավելի թափանցիկ, արդյունավետ եւ գործուն են, ինչը հանգեցնում է հանրային վստահության բարձրացման:
- ✔ Սահմանադրական դատարանը գործում է բարեփոխված արտաքին եւ ներքին օրենսդրական դաշտերին համապատասխան, եվրոպական չափանիշներին համահունչ:
- ✔ Արդարադատության հավասար մատչելիությունը բարելավված է՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների լավագույն գործելակերպերին, այդ թվում՝ գենդերային հավասարությանն առնչվող լավագույն գործելակերպերին համահունչ:
- ✔ Արբիտրաժի եւ հաշտարարության ավելի լայն մասշտաբով արդյունավետ կիրառումն օգնում է նվազեցնել դատարանների կուտակումները եւ ընդլայնել արդարադատության մատչելիությունը:
- ✔ Իրավաբաններն իրենց գործառույթներն իրականացնում են անկախ եւ պրոֆեսիոնալ ձեւով:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Արդարադատության նախարարություն, Սահմանադրական դատարան, Գերագույն դատական խորհուրդ, Դատավորների ընդհանուր ժողով, Դատավորների ասոցիացիա, Վճռաբեկ դատարան, Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպություն, Արբիտրների ասոցիացիա, Արդարադատության ակադեմիա, Փաստաբանների դպրոց, Փաստաբանների միություն, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

2.2.2. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիան սպառնում է իրավունքի գերակայությանը, ժողովրդավարությանը եւ մարդու իրավունքներին, խաթարում է լավ կառավարումը, արդարությունն ու սոցիալական արդարադատությունը, խեղաթյուրում է մրցակցությունը, խոչընդոտում է տնտեսական զարգացումը եւ վտանգում ժողովրդավարական ինստիտուտների կայունությունը եւ հասարակության բարոյական հիմքերը: Մոնիթորինգի այն միջազգային մեխանիզմների եզրահանգումները, ինչպիսիք են Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը

(ԳՐԵԿՈ) եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), ցույց են տալիս, որ[29] Հայաստանում կոռուպցիան շարունակում է ընկալվել որպես էական խնդիր՝ չնայած թավշյա հեղափոխությունից հետո կառավարության գործադրած ջանքերին եւ ձեռնարկած բարեփոխումների գործընթացներին:

- **Կոռուպցիայի, փողերի լվացման եւ կիբեռհանցագործության դեմ պայքար**

Կոռուպցիայի եւ փողերի լվացման դեմ պայքար

Հայաստանը հակակոռուպցիոն[30] եւ փողերի լվացման դեմ պայքարի[31] ոլորտում Եվրոպայի խորհրդի առանցքային փաստաթղթերի մասնակից երկիր է եւ որպես այդպիսին ենթակա է մոնիթորինգի եւ գնահատման ԳՐԵԿՈ-ի կողմից՝ հակակոռուպցիոն ոլորտում եւ ՄԱՆԻՎԱԼ-ի ու ԵԽՊՇ 198-ի վերաբերյալ Կողմերի համաժողովի կողմից՝ փողերի լվացման դեմ պայքարի (ՓԼ) եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (ԱՖ) ոլորտում:

Հայաստանի վերաբերյալ[32] ԳՐԵԿՈ-ի վերջին գնահատումը պարունակում էր 18 առաջարկություններ, ըստ որոնց անհրաժեշտ էր խորհրդարանի անդամների (պատգամավորների), դատավորների եւ դատախազների առնչությամբ կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների բարելավում: ԳՐԵԿՈ-ի՝ պարտավորությունների կատարման վերաբերյալ 2021 թվականի սեպտեմբերին ընդունված միջանկյալ զեկույցում եզրակացություն է արվել առ այն , որ առաջարկություններիկատարման մակարդակը գլոբալ առումով շարունակում է անբավարար լինել[33]: Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում, ինչպես որ նշվում է Հայաստանի վերաբերյալ ՄԱՆԻՎԱԼ-ի հինգերորդ փուլի փոխադարձ գնահատման հաշվետվությունում, երկիրը փողերի լվացման համար մեծ ռիսկ չի ներկայացնում: ՄԱՆԻՎԱԼ-ի հինգերորդ փուլի փոխադարձ գնահատմանը վերաբերող հաջորդիվ հաշվետվությունում նշվում է, որ Հայաստանը կամ «հիմնականում կատարել» է կամ «կատարել է» ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի[34] (ՖԱԹՖ) առաջարկությունների մեծ մասը՝

---

[29] *«Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում. Հայաստանի գնահատման զեկույց»,* Գնահատման չորրորդ փուլ, ԳՐԵԿՈ, հրապարակված՝ 2016 թվականի փետրվարի 25ին. *«Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում. Հայաստանի կողմից պարտավորություններ կատարման վերաբերյալ միջանկյալ զեկույց»,* Գնահատման չորրորդ փուլ, ԳՐԵԿՈ, հրապարակված՝ 2021 թվականի սեպտեմբերի 22-ին. *«Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում», ՏՀԶԿ, 2019 թվական, թարմացված:*

[30] Եվրոպայի խորհրդի՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիա (*ԵՊՇ թիվ 173*) և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիա (*ԵՊՇ թիվ 174*):

[31] Եվրոպայի խորհրդի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիա (*ԵԽՊՇ թիվ 198*):

[32] «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում», Հայաստանի գնահատման զեկույց, Գնահատման չորրորդ փուլ, ԳՐԵԿՈ, 2016 թվականի փետրվարի 25:

[33] 2021 թվականի սեպտեմբերի 22-ին հրապարակված՝ *Գնահատման չորրորդ փուլ, ԳՐԵԿՈ*:

[34] ՖԱԹՖ-ն միջկառավարական կազմակերպություն է, որի նպատակն է սահմանել չափանիշներ և նպաստել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային ֆինանսական համակարգի ամբողջականության հետ կապված այլ համապատասխան սպառնալիքների դեմ պայքարի իրավական, կարգավորող և գործնական միջոցառումների արդյունավետ իրականացմանը: ՄԱՆԻՎԱԼ-ը ՖԱԹՖ-ի համակիր անդամ է:

բացառությամբ երեք առաջարկությունների[35]:

2019 թվականից ի վեր Եվրոպայի խորհրդի հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում աջակցություն է ցուցաբերվում Հայաստանին՝ հակակոռուպցիոն եւ փողերի լվացման ոլորտում իր առաջնահերթ խնդիրները լուծելու, օրենսդրական, քաղաքական եւ ինստիտուցիոնալ դաշտը Եվրոպայի խորհրդի եւ այլ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի մոնիթորինգային մարմինների չկատարված առաջարկություններն իրագործելու համար: Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացված ազգային օրենսդրական դաշտի բարելավումները ներառում են, օրինակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի փոփոխությունները և լրացումները՝ ուղղված վերջինիս լիազորությունների ընդլայնմանը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագրման վերաբերյալ իրավական դաշտի զարգացումը, ինպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխությունները և լրացումները ուղղված ծախսերի մասին տեղեկատվությունը պաշտոնատար անձանց հայտարարագրերում ներառելուն: Բացի այդ, աջակցություն է ցուցաբերվել շահերի բախման, անհամատեղելիության պահանջների եւ նվերների սահմանափակումների ոլորտը կարգավորող համակարգի ընթացիկ բարեփոխումներին:

Քաղաքականության մակարդակով ցուցաբերված տեխնիկական եւ ռազմավարական աջակցությունը նպաստել է 2019-2022 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի ընդունմանը: Ինստիտուցիոնալ համակարգի հետագա զարգացման նպատակով աջակցություն է ցուցաբերվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծման եւ վերջինիս կողմից դատավորների թեկնածուների բարեվարքության ստուգմանը, պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրերի ստուգման եւ վերլուծությանը մեթոդաբանական գործիքակազմի և կարողությունների զարգացման ուղղությամբ:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 24-ին, Կոմիտեն հիմնադրվել է որպես քննչական մարմին, որը կազմակերպում եւ իրականացնում է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը եւ իրականացնում է օպերատիվ հետախուզական գործունեություն:

Տնտեսական հանցագործությունների կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի ոլորտում իրականացվող տարածաշրջանային գործողությունները նպաստել են տարածաշրջանի երկրների միջեւ հայտարարագրման համակարգերի հետ կապված գիտելիքների եւ փորձի փոխանակմանը, ինչպես նաեւ տարածաշրջանային եւ միջազգային մակարդակով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հայտնաբերումը դյուրացնելու ուղությամբ գիտելիքների եւ ցանցերի ընդլայնմանը: Եվրոպայի խորհրդի

[35] ՄԱՆԻՎԱԼ-ի հինգերորդ փուլի փոխադարձ գնահատմանը վերաբերող վերջին լրացուցիչ զեկույցում նշվում է, որ Հայաստանը «հիմնականում կատարել է» կամ «կատարել է» ՖԱԹՖ-ի առաջարկությունների մեծ մասը՝ բացառությամբ երեք առաջարկությունների (Առաջարկություն 12. «Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք .», 28. «Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների կարգավորումը և վերահսկողությունը» և 31. «Իրավապահ և քննչական գործողություններ իրականացնող մարմինների լիազորությունները»), որոնք, ըստ երևույթին, մասամբ են կատարվում: Ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում որևէ կոնկրետ նշում չի եղել, որ այդ նպատակների համար չարաշահումների են ենթարկվել Հայաստանի մասնավոր հատվածը կամ ոչ առևտրային կազմակերպությունները:

փորձագետների աջակցությամբ Հայաստանի պատգամավորները առաջընթաց են գրանցել կոռուպցիայի կանխարգելման կատարելագործված ներքին մեխանիզմների, այդ թվում՝ պատգամավորների վարքագծի կանոնագրքի եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծման եւ աշխատանքային ընթացակարգերի վերաբերյալ իրավական փոփոխությունների ընդունման ուղղությամբ:

Ակնկալվում է, որ 2023 թվականին ԳՐԵԿՈ-ն կիրականացնի Հայաստանի գնահատման հինգերորդ փուլը: Այս փուլում ընդգրկված պաշտոնատար անձանց դասակարգում կներառվեն բարձրագույն գործադիր գործառույթներ իրականացնող անձինք եւ իրավապահ մարմինները: Հետագա աջակցությունը կարող է ուղղված լինել ԳՐԵԿՈ-ի այս նոր գնահատումից բխող առաջարկությունների իրականացմանը:

Չնայած Հայաստանում փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում գործում է բավականին ամուր իրավական եւ ինստիտուցիոնալ դաշտ, այնուամենայնիվ դեռեւս առկա են մարտահրավերներ՝ կապված հատկապես դինամիկ զարգացող ոլորտների եւ նոր տեխնոլոգիաների կիրառումից հայտ եկող ռիսկերի, բարձր ռիսկային ոչ ֆինանսական հատվածների եւ ռիսկերի վրա հիմնված համապատասխան վերահսկողություն ապահովելու, ինչպես նաեւ ֆինանսական հետախուզության լիարժեք օգտագործման հետ:

Եվրոպայի խորհրդը կշարունակի աջակցություն ցուցաբերել՝ կոռուպցիայի, փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի ոլորտների բարեփոխումների հետագա խթանման, ինչպես նաեւ դրանց գործնական իրականացման ուղղությամբ: Դա կիրականացվի իրավական եւ քաղաքական խորհրդատվության տրամադրման եւ կարողությունների զարգացման հետագա գործողությունների միջոցով՝ ընդլայնելով համագործակցությունը, համակարգումը եւ համաձայնեցվածությունը ոլորտի տարբեր գործընկերների միջեւ՝ այդպիսով համախմբելով եւ բարձրացնելով մինչ այժմ ձեռք բերված առաջընթացի արդյունավետությունն ու կայունությունը:

Կիբեռհանցագործության դեմ պայքար

Հայաստանը *«Կիբեռհանցագործությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Բուդապեշտի կոնվենցիա)*, այդ թվում՝ դրա՝ *«Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական եւ քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրության* պայմանավորվող կողմ է: Չնայած կիբեռհանցագործության եւ էլեկտրոնային ապացույցների մասին Հայաստանի ազգային օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է Բուդապեշտի կոնվենցիայի պահանջներին, քրեական դատավարության իրավունքում դատավարական լիազորությունների առավել մանրամասն եւ կոնկրետ իրականացում է անհրաժեշտ: Եվրոպայի խորհուրդն աշխատել է ազգային իշխանությունների հետ եւ խորհրդատվություն է տրամադրել Հայաստանի նոր Քրեական դատավարության օրենսգրքում (ՔԴՕ) (2022 թվական) անհրաժեշտ բարելավումներ կատարելու վերաբերյալ՝ դրա համապատասխանությունը Բուդապեշտի կոնվենցիայի դատավարական իրավունքի պահանջներին ապահովելու նպատակով. նոր ՔԴՕ-ի ամբողջական վերանայումն ու գնահատումն ընթացքի մեջ են: Բացի այդ, Բուդապեշտի կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությամբ (որը ստորագրման համար բացվել է 2022 թվականի մայիսին) երաշխավորվելու է Հայաստանի օրենքների հետագա իրավական եւ կարգավորիչ փոփոխությունների կատարումը՝ քրեական հարցերում միջազգային

համագործակցությունը բարելավելու համար, եթե իշխանությունները որոշեն միանալ արձանագրությանը:

Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի կարողությունների զարգացման ոլորտում Եվրոպայի խորհրդի կողմից տարածաշրջանային համագործակցության գործողությունների շրջանակներում նախկինում տրամադրվող աջակցության ուշադրության կենտրոնում քննությունների, ֆինանսական հետախուզության, դատական թվային փորձաքննությունների ոլորտում դատական իշխանության, դատախազների եւ քննիչների կարողությունների զարգացումն ու համագործակցային գործելակերպերն էին: Հատուկ ուշադրություն էր դարձվել նաեւ կիբեռանվտանգության համայնքի (Համակարգչային անվտանգության հետ կապված պատահարների արձագանքման թիմեր) եւ կիբեռհանցագործությունների դեմ պայքարի մասնագետների (իրավապահ մարմիններում) միջեւ համագործակցության գործուն ընթացակարգերի մշակմանը, ինչպես նաեւ պետությունների եւ մասնավոր մատակարարների միջեւ՝ գործող ստանդարտների եւ Բուդապեշտի կոնվենցիայի ու դրա լրացուցիչ արձանագրությունների շրջանակներում փաստաթղթերի եւ ընթացակարգերի արդյունավետ օգտագործման ուղղությամբ համագործակցության զարգացմանը: Բացի այդ, կիբեռհանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու եւ առցանց անվտանգության ոլորտում իրականացվել է հետազոտություն՝ կարճաժամկետ եւ միջնաժամկետ հեռանկարում կիբեռհանցագործությունների եւ էլեկտրոնային ապացույցների հետ կապված հետագա քաղաքականությունների, ռազմավարությունների եւ արձագանքման կարողությունների զարգացման ձեւավորման նպատակով հուսալի եւ համապատասխան տվյալներ տրամադրելու համար:

Ելնելով տարածաշրջանային նախկին համագործակցության արդյունքներից՝ Եվրոպայի խորհուրդը գործողությունների ծրագրի շրջանակներում կշարունակի աջակցել Հայաստանի ազգային իշխանություններին՝ Բուդապեշտի կոնվենցիային համապատասխանությունը խթանելու գործում: Հատուկ շեշտադրում կարվի իշխանություններին կիբեռհանցագործության դեմ պայքարի ազգային ռազմավարության եւ գործողությունների ծրագրի մշակման հարցում աջակցելուն: Ուշադրություն է դարձվելու նաեւ կիբեռհանցագործությունների դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներն ինչպես ներքին քննությունների, այնպես էլ միջազգային համագործակցության առումով ավելի գործուն դարձնելուն, համացանցի՝ ազգային եւ բազմազգ ծառայություններ տրամադրողների հետ ավելի արդյունավետ համագործակցությանը եւ ընդհանուր առմամբ, քրեական արդարադատության ինստիտուտների՝ կիբեռհանցագործությունների եւ էլեկտրոնային ապացույցների հետ աշխատանքին առնչվող կարողությունների ընդլայնմանը: Փոխադարձ իրավական աջակցության հարցերով մարմինների եւ կիբեռհանցագործության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումների հմտությունների եւ գիտելիքների հետագա զարգացումն անհրաժեշտ է Բուդապեշտի կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությամբ սահմանված նոր կանոնների եւ ընթացակարգերի պահպանման համար: Հաշվի առնելով արագ փոփոխվող իրողությունների պատճառով կիբեռհանցագործությունների եւ էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ շարունակական վերապատրաստման մշտական անհրաժեշտությունը, վերապատրաստմանն ուղղված հետագա ջանքերը կշարունակեն նպատակաուղղված լինել Հայաստանում կիբեռհանցագործության դեմ պայքարին առնչվող իրավապահ մարմիններին, դատախազությանը, դատական իշխանությանը եւ այլ պետական ու մասնավոր դերակատարների:

- **Քրեակատարողական հիմնարկներ եւ ոստիկանություն**

Քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների եւ մարդու իրավունքների ընդլայնումը

Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ)՝ Հայաստանի վերաբերյալ վերջին զեկույցում որպես քրեակատարողական համակարգին առնչվող գլխավոր խնդիրներ նշվել են առողջապահության հետ կապված հարցերը եւ ազատությունից զրկված անձնանց նկատմամբ բռնությունը[36]: Տարբեր հիվանդություններով տառապող ազատությունից զրկված անձնանց համապատասխան խնամք տրամադրելու մերժմանը վերաբերող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռը (*«Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի»* խմբի գործեր) ՄԻԵԴ-ի վճիռների կատարման հարցերով բաժնի ուժեղացված վերահսկողության ներքո է[37]:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների ոլորտներում ներառված են բժշկական օգնության եւ ծառայությունների տրամադրման որակի եւ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը, ինչպես նաեւ քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիայի եւ հանցավոր ենթամշակույթների հաղթահարումը:

2015 թվականից ի վեր Հայաստանում իրականացվող քրեակատարողական համակարգի բարեփոխումների շրջանակում ստացվել է Եվրոպայի խորհրդի աջակցությունը քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների մատուցման բարելավման նպատակով՝ եռակի մոտեցման միջոցով, այն է՝ իրավական/ինստիտուցիոնալ դաշտում փոփոխություններ կատարելը, քրեակատարողական հիմնարկների առողջապահական ստորաբաժանումների նյութական պայմանների արդիականացումը եւ քրեակատարողական հիմնարկների անձնակազմի կարողությունների ամրապնդումը: Առաջարկված իրավական բարեփոխումների արդյունքում Կառավարությունը 2018 թվականին ընդունել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» (ՔԲԿ) ստեղծելու մասին որոշում՝ ուղղված բանտերի բժշկական անձնակազմի մասնագիտական անկախության ապահովմանը եւ նրանց մասնագիտական կարողությունների կատարելագործմանը: ՔԲԿ-ն ստեղծվել է որպես քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայություններ մատուցող պետական ոչ առեւտրային կազմակերպություն, որը գտնվում է Արդարադատության նախարարության (ԱՆ) պատասխանատվության ներքո, սակայն գործում է Քրեակատարողական ծառայությունից անկախ եւ իր սեփական բյուջեով, կառուցվածքով եւ աշխատակազմով: Այս միջոցառումներին օժանդակություն է տրամադրվել բժշկական եւ ոչ բժշկական անձնակազմի խորացված վերապատրաստման միջոցով՝ բժշկական էթիկայի համաձայն

[36] *CPT/Inf (2021)10*, ԽԿԿ-ի զեկույցը Հայաստանի կառավարությանը՝ ընդունված 2019 թվականի դեկտեմբերի 2-ից 12-ը: Բանտերի հետ կապված ԽԿԿ-ի կողմից նշված այլ խնդիրներից էին բանտարկյալների ոչ պաշտոնական աստիճանակարգության մշտական ազդեցությունը և խցից դուրս իրականացվող կառուցողական գործունեության բացակայությունը, որը կարող է դիտարկվել որպես բանտում առողջապահական ծառայություններ տրամադրելու կամ կալանավորների լավ առողջական վիճակը պահպանելու կարողության հետ ուղղակիորեն կապված երևույթ:

[37] *Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* [*Ashot Harutyunyan v. Armenia*], գանգատ թիվ 34334/04, 2010 թվականի սեպտեմբերի 15:

հիվանդությունները կանխարգելելու եւ քրեակատարողական հիմնարկներում առողջությունը խթանելու նպատակով գիտելիքներն ընդլայնելու եւ կարողություններն ու հմտությունները բարելավելու համար, ինչպես նաեւ հիմնական բժշկական սարքավորումների տրամադրմամբ: *«Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի»* խմբի գործերի քննության մասով իր վերջին որոշման մեջ Նախարարների կոմիտեն մեծապես խրախուսել է իշխանություններին շարունակելու իրենց ջանքերը՝ ուղղված ՔԲԿ-ի արդյունավետ գործունեության ապահովմանը, այդ թվում՝ լիարժեք ապահովելով համապատասխան աշխատանքային պայմաններ, տրամադրելով սարքավորումներ, ինչպես նաեւ ապահովելով պատշաճ մարդկային ռեսուրսների եւ մասնագիտական զարգացման քաղաքականությունների իրականացումը[38]:

ՔԲԿ-ի ստեղծումը խոստումնալից արդյունքներ է արձանագրել քրեակատարողական հիմնարկների առողջապահության համակարգի արդյունավետության բարձրացման եւ բժշկական անձնակազմի մասնագիտական անկախության ապահովման հարցում: Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել ՔԲԿ-ին՝ նրա ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, բժշկական եւ ոչ բժշկական անձնակազմի վերապատրաստման միջոցով՝ ազատությունից զրկված անձանց տրամադրվող բուժման եւ բժշկական ծառայությունների պայմանների բարելավման եւ ՔԲԿ-ի թափանցիկության, հաշվետվողականության եւ գենդերային զգայունության կատարելագործման գործում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի պրոֆիլակտիկ, երկրորդային եւ հոգեկան բժշկական օգնությանը՝ ԱՆ-ի կողմից ընդունված ինքնասպանությունների կանխարգելման վերաբերյալ ռազմավարությանը համապատասխան, քրեակատարողական հիմնարկներում թմրամիջոցներ օգտագործողների կառավարմանը, ինչպես նաեւ քրեակատարողական ստորաբաժանումներում հեռաբժշկության ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, էլեկտրոնային բժշկական փաստաթղթերի ձեւերի եւ նմուշների մշակմանը եւ փաստաթղթաշրջանառության նոր SS համակարգին դրանց ինտեգրմանը, ինչպես նաեւ երկրորդային բժշկական օգնության բարելավմանը:

Քրեակատարողական ոլորտի բարեփոխումների ռազմավարական նպատակը քրեակատարողական համակարգում նախապայմաններ ստեղծելն ու զարգացնելն է՝ ընձեռելով վերականգնողական արդարադատություն եւ նպատակային պատիժ իրականացնելու հնարավորություն: Եվրոպայի խորհուրդը կաջակցի ազգային իշխանություններին՝ բարելավելու ազատությունից զրկված անձանց վերաինտեգրումը, այդ թվում՝ ռիսկերի եւ կարիքների գնահատման գործիքի, պատժի անհատական պլանների, մինչեւ ազատումը նախատեսվող պլանավորման եւ ամենօրյա ռեժիմների մշակման եւ փորձարկման, վերականգնողական ծրագրերի փորձարկման եւ հասարակությանը ազատությունից զրկված անձանց վերաինտեգրման նախապատրաստման միջոցով: ԽԿԿ-ի առաջարկություններին համապատասխան հաշվի կառնվեն անչափահասների, կանանց եւ այլ խոցելի խմբերի հատուկ կարիքները:

[38] 1406-րդ հանդիպում, 2021 թվականի հունիսի 7-9 (DH), *Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 34334/04, 2010 թվականի սեպտեմբերի 15:

Պրոբացիայի ծառայության ամրապնդում

2013 թվականից ի վեր Եվրոպայի խորհուրդը շարունակաբար տեխնիկական աջակցություն է ցուցաբերել Հայաստանին՝ ազատազրկման ձեւով պատիժների կիրառումը նվազեցնելու եւ եվրոպական չափանիշներին համապատասխան պրոբացիայի ծառայություն հիմնելու նպատակով: Եվրոպայի խորհրդի աջակցությամբ զգալի արդյունքներ են գրանցվել, որոնք ներառում են 2016 թվականի մայիսին Պրոբացիայի մասին օրենքի ընդունումը, ինչը հանգեցրել է նոր Պրոբացիայի պետական ծառայության ստեղծմանը եւ գործունեությանը, պրոբացիայի դերի ավելի խորը ըմբռնմանը, ինչպես նաեւ իրավական ոլորտի կարեւոր մասնագետների, այդ թվում՝ դատական իշխանության եւ փաստաբանների կողմից դրա ընդունմանը եւ բանտերի գերբեռնվածության խնդրին զգալի աջակցություն ցուցաբերելուն: Նոր Քրեական օրենսգրքով (ՔՕ) եւ Քրեական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ) ներմուծվում են պատիժների եւ խափանման միջոցների նոր տեսակներ, ինչպիսիք են ազատության սահմանափակումը, տնային կալանքը եւ վարչական հսկողությունը, որոնք գտնվում են Պրոբացիայի պետական ծառայության տիրույթում, որոնք, ի թիվս այլ միջոցների, նախատեսում են էլեկտրոնային մոնիթորինգի ներդրումը պրակտիկայում: Դրանք ուժի մեջ կմտնեն 2023 թվականից եւ կնախատեսեն հետագա օրենսդրական եւ գործունեության մասով փոփոխություններ՝ կապված Պրոբացիայի պետական ծառայության հետ: ԱՆ-ն վերահաստատել է պրոբացիայի ոլորտի բարեփոխումները շարունակելու եւ պրոբացիայի դերն ամրապնդելու Հայաստանի հանձնառությունը:

Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակում Եվրոպայի խորհուրդն աջակցել է Հայաստանի իշխանություններին պրոբացիայի ծառայության ընդլայնման հարցում, *inter alia,* պրոբացիայի վերաբերյալ օրենսդրության մեջ փոփոխությունների նախագծման, պրոբացիայի ոլորտի աշխատակիցների վերապատրաստման, գործերի կառավարման SS համակարգի (էլեկտրոնային պրոբացիա) մշակման եւ Պրոբացիայի պետական ծառայության սարքավորումների արդիականացման միջոցով: Տեխնիկական աջակցություն է տրամադրվել նաեւ իրավախախտում կատարած անձանց համար ընդհանուր վերականգնողական ծրագրի մշակման եւ փորձարկման, ինչպես նաեւ պրոբացիայի շահառուների, այդ թվում՝ անչափահասների ռիսկերի եւ կարիքների գնահատման գործիքների մշակման նպատակով: Այս գործողությունները համահունչ էին Քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությանը եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրին[39]:

Եվրոպայի խորհուրդը շարունակելու է աջակցել Հայաստանի իշխանություններին պրոբացիայի հայեցակարգի հետագա կատարելագործման եւ դրա կիրառումը հեշտացնելու գործում՝ այդպիսով բարձրացնելով հասարակական անվտանգությունը եւ բարելավելով արդարադատության պատշաճ իրականացումը, մասնավորապես երբ հարցը վերաբերում է խոցելի խմբերին պատկանող անձանց կամ կին իրավախախտներին: Այն ուշադրություն կդարձնի մասնավորապես համապատասխան օրենսդրության մշակմանը, դատարանների կողմից պատիժների եւ խափանման միջոցների նոր տեսակների ընդլայնված կիրառմանը եւ Պրոբացիայի պետական ծառայության կողմից դրանց արդյունավետ կատարումը խթանելուն՝ մի շարք գործողությունների միջոցով, ինչպիսիք են պիլոտավորման գործիքները, պրոբացիայի կենտրոնական եւ տարածքային

[39] Հայաստանի կառավարությունը Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ընդունել է 2019 թվականին:

գրասենյակներում լավ գործելակերպերի փոխանակումը, վերապատրաստման կենտրոններին աջակցելը՝ պրոբացիայի ոլորտի անձնակազմի, հաշտարարների, հոգեբանների եւ սոցիալական աշխատողների համար կայուն վերապատրաստման ծրագրի ապահովմանն ուղղված նրանց ջանքերում, վերասոցիալականացման ծրագրերի մշակումը եւ գնահատումը, պրոբացիայի ծառայությունների, դատարանների, պետական գերատեսչությունների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջեւ համագործակցության ընդլայնումը եւ հաշտարարության համակարգի ամրապնդումը: Աջակցություն կտրամադրվի նաեւ միասնական էլեկտրոնային արդարադատության, քրեակատարողական էլեկտրոնային համակարգի եւ էլեկտրոնային պրոբացիայի լուծումների իրականացման համար:

Ոստիկանությունը եւ մարդու իրավունքները

Ոստիկանության աշխատակիցներից ունեցած աճող ակնկալիքներն ուղղակիորեն պայմանավորված են համայնքի անդամների կողմից աճող ակնկալիքներով, որ ոստիկանությունը պետք է արտացոլի հիմնարար արժեքները եւ հարգի ՄԻԵԴ-ի հիմնական սկզբունքները[40]: Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ-ի վերջին ազգային զեկույցում նշվում է, որ ոստիկանությունում արգելանքը ձեւակերպելու պահից սկսած՝ վատ վերաբերմունքի մասով իրավական երաշխիքներն ընդհանուր առմամբ գործում էին բավարար կերպով, չնայած ոստիկանության կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի երեւույթն ամբողջությամբ չէր վերացվել՝ հատկապես կապված «ոչ պաշտոնական զրույցների» գործելակերպի հետ (անձինք «հրավիրվում են» ներկայանալու ոստիկանություն՝ կալանքի մասին արձանագրություն կազմելուց առաջ): ԽԿԿ-ն կոչ է արել Հայաստանի իշխանություններին ակտիվացնելու իրենց ջանքերն այս ոլորտում՝ ապահովելու ոստիկանությունում արգելանքի տակ պահվելու վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին:

Մարդու իրավունքների պաշտպանության Հայաստանի ազգային ռազմավարության մեջ որպես հրատապ լուծում պահանջող խնդիր նշվում է խաղաղ հավաքների մասնակիցների նկատմամբ ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառումը, ինչպես նաեւ նման դեպքերի համար արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը:

Որպես *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* [*Virabyan v. Armenia*] *(գանգատ թիվ 40094/05)* գործով վճռի կատարման ընդհանուր միջոցառումների մաս եւ 2019 թվականի դեկտեմբերին ոստիկանության ոլորտում մեկնարկած լայնածավալ բարեփոխումների համատեքստում իշխանությունները ձեռնարկել են նոր Պարեկային ծառայության ստեղծումը, որը, *inter alia,* պատասխանատու է հանցավոր արարքներ կատարելու մեջ կասկածվող անձանց արգելանքի վերցնելու եւ նրանց քննչական մարմնին փոխանցելու համար: Պարեկային ծառայությունն իր գործունեությունը սկսել է 2021 թվականի հուլիսի 7-ին Երեւանում եւ մինչեւ 2023 թվականի վերջը լիարժեք կգործի ամբողջ Հայաստանում: Նոր աշխատակիցներն անցնում են հնգամյա վերապատրաստման դասընթաց, ներառյալ՝ Մարդու իրավունքների եւ ոստիկանության, սահմանադրական իրավունքի, քրեական իրավունքի, քրեական դատավարության իրավունքի եւ օպերատիվ ու հետախուզական

[40] Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ-ի վճիռների կատարման հարցերով բաժնի ուժեղացված վերահսկողության տակ գտնվող ՄԻԵԴ-ի վճիռները ներառում են ոստիկանությունում արգելանքի տակ պահվելու վայրում վատ վերաբերմունքի և (կամ) խոշտանգումների հետ կապված գործեր (Վիրաբյանի խումբ):

միջոցառումների վերաբերյալ մոդուլները: Տեսական դասերին զուգահեռ՝ մոդուլները ներառում են նաեւ հիմնական մարտավարական հմտությունների զարգացում, ներառյալ՝ ոստիկանական գործողությունների պլանավորման եւ վերահսկման հետ կապված հմտությունները:

Եվրոպայի խորհուրդը պատրաստ է աջակցելու ոստիկանության ոլորտի բարեփոխումներին եւ աջակցելու իշխանություններին՝ ոստիկանության հաշվետվողականությունն ու բարեվարքությունը կատարելագործելու եւ այս ինստիտուտի պատասխանատու եւ արդյունավետ գործունեությունն ապահովելու, ինչպես նաեւ մարդու իրավունքները եւ գենդերային հավասարությունը նրա աշխատանքում ներառելու գործում:

Ակնկալվող արդյունքներ

Կոռուպցիայի, փողերի լվացման եւ կիբեռհանցագործության դեմ պայքար

- ✔ Առկա են անկախ եւ արդյունավետ հակակոռուպցիոն մարմինների միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական եւ քաղաքականության շրջանակներ, եւ գործում են հարակից ինստիտուտները:
- ✔ Կիբեռհանցագործության վերաբերյալ ազգային օրենսդրությունը համահունչ է Բուդապեշտի կոնվենցիային, իսկ համապատասխան ինստիտուտների կարողությունները համապատասխանում են դրանց լիազորություններին:
- ✔ Բարելավվել է միջգերատեսչական համագործակցությունը եւ կիբեռհանցագործությունների քննության համար անհրաժեշտ տվյալների փոխանակումը:
- ✔ Համացանցային ծառայություններ մատուցողների հետ համագործակցության մշակույթը բարելավվել է համագործակցության իրավական հիմքերի միջոցով (ուշադրություն դարձնելով ընթացակարգային լիազորությունների եւ երաշխիքների, ինչպես նաեւ լրամշակված/ընդլայնված համագործակցության համաձայնագրերի վրա):

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Վարչապետի աշխատակազմ (Բաց կառավարման գործընկերության քարտուղարություն), Ֆինանսների նախարարություն, Արդարադատության նախարարություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Քաղաքացիական ծառայության գրասենյակ, Հակակոռուպցիոն կոմիտե, Գլխավոր դատախազի գրասենյակ, Հակակոռուպցիոն դատարաններ, Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանություն, Կենտրոնական բանկում գործող ֆինանսական դիտարկումների կենտրոն, Քննչական կոմիտե, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, բարձրագույն ուսումնական հաստատություններ, կրթական հաստատություններ, հաղորդակցության ոլորտի ազգային կարգավորող մարմիններ, անձնական տվյալների պաշտպանության հարցերով պատասխանատու մարմիններ, համացանցային ծառայություններ մատուցողներ (այդ թվում միջազգային ծառայություններ մատուցողներ), արդյունաբերական միավորումներ, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան:

Քրեակատարողական հիմնարկներ եւ ոստիկանություն

- ✔ Քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության տրամադրման օրենսդրական և իրավակիրառ մասով շրջանակները համահունչ են եվրոպական չափանիշներին եւ կիրառվում են համապատասխան շահառուների կողմից:
- ✔ Ազատությունից զրկված անձիք, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձինք եւ այլ խոցելի խմբեր օգտվում են վերականգնողական ծրագրերից, ինչպես նաեւ քրեակատարողական հիմնարկներում ավելի լավ առողջապահական ծառայություններից:
- ✔ Ազատությունից զրկված անձանց հասանելի է մասնագիտացված, գենդերազգայուն բժշկական օգնությունը, ներառյալ՝ հոգեկան առողջության եւ թմրամիջոցների հետ կապված

ծառայությունները:

- ✔ Քրեակատարողական համակարգում բժշկական անկախությունն ամրապնդված է:
- ✔ Պրոբացիան ավելի կայուն դեր է ստանում Հայաստանի դատական համակարգում:
- ✔ Պրոբացիայի ծառայության աշխատակազմը կատարելագործել է իր կարողությունները՝ իր նոր պարտականությունները կատարելու նպատակով:
- ✔ Համապատասխան բարեփոխումների արդյունքում ոստիկանությունը գործում է եվրոպական չափանիշներին համահունչ:

Ազգային գլխավոր գործընկերներ՝ Արդարադատության նախարարություն, Քրեակատարողական բժշկության կենտրոն, Գլխավոր դատախազի գրասենյակ, Պրոբացիայի ծառայություն, Ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ, հասարակական կազմակերպություններ:

2.3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես) վերջին զեկույցում գոհունակությամբ նշվում է, որ չնայած վերջին քաղաքական փոփոխությունների պատճառով տարածքային բարեփոխումների դանդաղեցմանը՝ վերսկսվել է միացումների միջոցով համայնքների խոշորացումը, սակայն մտահոգություն է հնչել՝ կապված համայնքապետարանների սահմանափակ լիազորությունների հետ: Այն կոչ է արել ազգային իշխանություններին ավելացնելու տեղական իշխանությունների կողմից կառավարվող հանրային գործերի մասնաբաժինը, երաշխավորելու տեղական իշխանությունների՝ իրենց անմիջականորեն առնչվող հարցերի շուրջ խորհրդատվություն ստանալու իրավունքը, վերանայելու եւ հստակեցնելու համայնքապետարանների «սեփական» իրավասությունները եւ սահմանափակելու իրենց հանձնարարությունների նկատմամբ պետական վերահսկողությունը՝ օրինականության նկատմամբ հսկողությամբ, ապահովելու, որ տեղական իշխանությունները հասանելիություն ունենան համապատասխան ֆինանսական ռեսուրսներին, ինչպես նաեւ հանձնարարությունների պատվիրակումը կենտրոնական մակարդակից հասցնելու տեղական մակարդակի:

Տեղական ժողովրդավարության ոլորտում իրականացվող բարեփոխումները նույնպես հիմնվում են Թվայնացման 2021-2025 թվականների ռազմավարության շրջանակներում իրականացվող նախաձեռնությունների վրա՝ նպատակաուղղված լինելով քաղաքացի-պետություն հարաբերությունների պարզեցմանը եւ այն ավելի արդյունավետ դարձնելուն: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետությունում տեղի է ունենում ամբողջական թվային վերափոխում՝ խթանելու պարզ, թափանցիկ եւ հաշվետու կառավարման համակարգերը եւ հանրային ծառայությունների առավել արդյունավետ մատուցումը:

Հայաստանի համար իրականացվող Եվրոպայի խորհրդի 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակում կշարունակվի աջակցություն տրամադրվել Հայաստանում տեղական ժողովրդավարության բարելավման հարցում՝ նպաստելով լիազորություններ սահմանող օրենսդրության ընդունմանը եւ օժանդակելով ընտրված տեղական ներկայացուցիչների եւ քաղաքացիական ծառայողների կարողությունների զարգացմանը՝ նոր իրավասությունների իրականացման համար: Նույն կերպ այն կխթանի նաեւ տեղական իշխանությունների, նրանց միավորման եւ ազգային իշխանությունների միջեւ կանոնավոր եւ արդյունավետ երկխոսությունը՝ ապակենտրոնացմանը նպաստելու նպատակով: Այն նաեւ կբարելավի տեղական ժողովրդավարության որակը՝ խթանելով

էթիկական, թափանցիկ, հաշվետու եւ մասնակցային տեղական կառավարումը: Տեղական որոշումների կայացմանը քաղաքացիների, այդ թվում՝ երիտասարդների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընդլայնված մասնակցության խթանումը նույնպես կլինի գործողությունների ծրագրի ուշադրության կենտրոնում՝ այդպիսով նպաստելով շահերի բացահայտմանը եւ թիրախավորման մեխանիզմների ստեղծմանը, հակամարտությունների հաղթահարմանը եւ հասարակության ապաքաղաքականացմանը:

Այս գործողությունները կնպաստեն Հայաստանի կողմից Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման հետեւյալ նպատակների (ԿԶՆ) իրագործմանը. անհավասարությունների կրճատման վերաբերյալ 10-րդ նպատակ (2-րդ, 3-րդ, 4-րդ թիրախներ), կայուն քաղաքների եւ համայնքների վերաբերյալ 11-րդ նպատակ (3-րդ թիրախ) եւ խաղաղության, արդարության եւ ամուր հաստատությունների վերաբերյալ 16-րդ նպատակ (5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ եւ Բ թիրախներ):

2.3.1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

➢ **Ժողովրդավարական կառավարում**

Լավ կառավարման եւ տեղական կառավարման ոլորտի բարեփոխումների խթանում

2013 թվականին Հայաստանը նախաձեռնել է իր վարչատարածքային բարեփոխումները՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հայաստանի գործող տարածքային եւ վարչական բաժանումը, ինչպես նաեւ սահմանափակ ապակենտրոնացումը էական խոչընդոտներ են տեղական կառավարման զարգացման, ծառայությունների արդյունավետ մատուցման եւ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար: Վարչատարածքային բարեփոխումների նպատակն էր ընդլայնել համայնքներում մատուցվող հանրային ծառայությունների շրջանակը եւ բարելավել դրանց որակը, ամրապնդել իրենց պատասխանատվության տակ գտնվող հանրային խնդիրները լուծելու մասով համայնքապետարանների կարողությունները եւ ստեղծել պայմաններ տեղական տնտեսական զարգացման եւ համայնքներում կյանքի որակի բարելավման համար: Նախաձեռնվել է կառուցվածքային մեծ փոփոխություն՝ գոյություն ունեցող համայնքների «խոշորացման» գործընթացի միջոցով աստիճանաբար 915 համայնքից անցնելով 79 համայնքի, որն ավարտվել է 2021 թվականի դեկտեմբերին:

Հայաստանը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (ՏԻԵԽ) վավերացրել է 2002 թվականին, իսկ Հայաստանում ՏԻԵԽ-ի կիրառման վերջին մոնիթորինգն իրականացվել է Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես) կողմից 2019 թվականին: 2021 թվականի հունիսին ընդունված մոնիթորինգի զեկույցում նշվում է, *inter alia,* որ խոշորացման գործընթացներից հետո տեղի չի ունեցել կենտրոնական կառավարության՝ հանրային գործառույթների եւ ծառայությունների մասով լիազորությունների եւ պարտականությունների փոխանցումը՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, եւ որ առկա չեն Հայաստանի կենտրոնական կառավարության եւ համայնքապետարանների միջեւ խորհրդակցության ինստիտուցիոնալացված մեխանիզմներ[41]: Բացի այդ, համայնքների ճնշող

[41] Հայաստանի համայնքների միությունը միակ համազգային միավորումն է, որը ներկայացնում է համայնքապետարանների շահերը, սակայն կառավարության, դրա ոլորտային նախարարությունների և ազգային միավորման միջև փոխգործակցությունը մշտական չէ և կախված է կառավարության կամքից, ինչը խոցելի է դարձնում տեղական իշխանություններին:

մեծամասնության վարչական եւ կազմակերպչական կարողությունները համարվել են ոչ բավարար՝ հանրային ծառայությունները լիարժեք եւ պատշաճ որակով մատուցելու համար, իսկ տեղական իշխանությունների ֆինանսական ինքնավարության մակարդակը համարվել է ցածր:

Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը նպաստել է Հայաստանի համայնքների միության (ՀՀՄ) եւ դրա Քարտուղարության ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը եւ դրան աջակցություն ցուցաբերելուն՝ իր դերը որպես պաշտոնական, վստահելի եւ կայուն մարմին իրականացնելու հարցում: ՀՀՄ-ին աջակցություն է ցուցաբերվել նաեւ իր անդամներին մատուցվող ծառայությունների բարելավման, կենտրոնական մակարդակում նրանց կարիքները միասնական ձեւով պաշտպանելու եւ տեղական ու ազգային իշխանությունների միջեւ փոխգործակցությունը հեշտացնելու հարցում: Աջակցություն է ցուցաբերվել նաեւ տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության[42] ընդլայնման եւ հաշվետվողականության գործիքների եւ տեղական ժողովրդավարության, թափանցիկության, բաց կառավարման, քաղաքական բարեվարքության, էթիկայի եւ կոռուպցիայի դեմ պայքարի եվրոպական չափանիշների ներդրման հարցում: Շարունակվել է իրավական եւ քաղաքական խորհրդատվության տրամադրումը Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը՝ Ապակենտրոնացման ճանապարհային քարտեզի վերանայման եւ իրականացման հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարմանն առնչվող՝ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների տեսանկյունից: Բացի այդ, Եվրոպայի խորհուրդն աջակցել է Բաց կառավարման վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրի մշակմանը, իրականացմանը եւ գնահատմանը տեղական իշխանությունների մասնակցության հարցում՝ Հայաստանում Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) քարտուղարության հետ սերտ համագործակցության միջոցով:

Նոր գործողությունների ծրագրի շրջանակում Եվրոպայի խորհուրդն աջակցություն կցուցաբերի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը՝ տեղական ինքնակառավարման վերաբերյալ օրենսդրության լրամշակման, ինչպես նաեւ հարկաբյուջետային ու ֆինանսական ապակենտրոնացման վերաբերյալ օրենսդրության բարելավման եւ համապատասխան սահմանադրական փոփոխությունների հարցում՝ խորհրդակցելով հիմնական շահառուների հետ, ինչպես նաեւ ՏԻԵԽ-ին ու համապատասխան եվրոպական չափանիշներին համահունչ: Այն կշարունակի զարգացնել նոր խոշորացված համայնքների տեղական իշխանությունների կարողությունները, նպաստել միջհամայնքային եւ անդրսահմանային համագործակցությանը եւ օգնել աղետներին դիմակայելու համայնքների կարողությունների ձեւավորմանը: Բացի այդ, Գործողությունների ծրագիրը կնպաստի տեղական տնտեսական զարգացման քաղաքականության եւ ֆինանսական ապակենտրոնացման ռազմավարության մշակմանը: Այն կխթանի տեղական մակարդակում տարբեր կողմերի միջեւ քաղաքական երկխոսությունը, ինչպես նաեւ տեղական իշխանությունների ինքնավարության ապահովման մեխանիզմների ձեւավորումը եւ ընտրված տեղական ներկայացուցիչների կարգավիճակի ու աշխատանքային պայմանների բարելավումը՝ հնարավորություն ընձեռելու նրանց ազատորեն իրականացնելու իրենց գործառույթները: Համապարփակ աջակցություն կտրամադրվի՝ ուղղված հանրային էթիկայի եւ բաց կառավարման

[42] Տեղական իշխանության գործերին քաղաքացիների մասնակցության իրավունքի վերաբերյալ ՏԻԵԽ-ի Լրացուցիչ արձանագրությունը Հայաստանը վավերացրել է 2013 թվականին:

ոլորտներում տեղական կառավարման արդյունավետության բարձրացմանը (հատկապես ԲԿԳ անդամ տեղական համայնքների պարագայում)՝ տեղական իշխանություններին տրամադրվող փորձագիտական աջակցության եւ ուղղորդման եւ ընտրված տեղական ներկայացուցիչների կարողությունների զարգացման եւ վերապատրաստման միջոցով: Հատուկ միջոցառումները նպատակաուղղված կլինեն մարդու իրավունքների չափանիշներն ու գործելակերպերը տեղական քաղաքականություններում եւ ռազմավարություններում ներառելուն, այդ թվում՝ խոցելի եւ անապահով խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, ներքին տեղահանման ենթարկված անձինք) իրավունքների պաշտպանության նպատակով, ինչպես նաեւ նպատակաուղղված կլինեն տեղական կառավարմանը քաղաքացիական մասնակցության ապահովմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդներին:

Ընտրություններ

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը[43] լայնորեն ողջունել են 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունված Ընտրական օրենսգրքի փոփոխությունները, քանի որ դրանք հաշվի են առնում նախորդ եզրակացություններում եւ ընտրությունների դիտորդական զեկույցներում բարձրացված առաջարկությունների մեծ մասը: 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ)[44] եւ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը/Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)[45] իրենց զեկույցներում գնահատել են, որ Հայաստանի իրավական դաշտը լայնորեն նպաստում է լավ կառավարվող եւ ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը: Այնուամենայնիվ, ինչպես նշված է այս զեկույցներում, ինչպես նաեւ «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության» վերաբերյալ ԵԽԽՎ-ի 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 15432 զեկույցում եւ Կոնգրեսի 2022 թվականի փետրվարի 28-ի՝ «2021 թվականի դեկտեմբերի 5-ի մասնակի ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ տեղեկատվական զեկույց» CPL(2022)42-04 զեկույցում, ընտրական գործընթացի նկատմամբ ընտրողների վստահությունը վերականգնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ընտրական հանձնաժողովների կազմը եւ վերապատրաստումը, սադրիչ ելույթների բեւեռացումը եւ օգտագործումը, ընտրողների տվյալների եւ մասնակցության գաղտնիության պահպանումը, վարչական ռեսուրսների չարաշահման, ինչպես նաեւ ընտրողների վրա ճնշումների եւ ձայների գնման կանխարգելումը, գենդերային հավասար ներկայացվածության եւ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության բարելավումը, ընտրական գործընթացի եւ նախընտրական քարոզարշավի անկողմնակալությունը եւ լրատվամիջոցների հավասարակշռված լուսաբանումը, քարոզարշավի ֆինանսավորման եւ ընտրությունների հետ կապված վեճերի լուծման (ԸՎԼ) մեխանիզմների նկատմամբ վերահսկողությունը:

2015 թվականի հունվարից 2017 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում Եվրոպայի խորհուրդն ընտրությունների հետ կապված

[43] Համատեղ կարծիք *CDL-AD(2021)025*, 2021 թվականի հուլիսի 5:

[44] ԵԽԽՎ *զեկույց թիվ 15352.* «Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկում (2021 թվականի հունիսի 20):

[45] ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելություն, *Հայաստանի Հանրապետություն, արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 2021 թվականի հունիսի 20*:

երկարաժամկետ աջակցություն է տրամադրել Հայաստանի իշխանություններին, ինչը թույլ է տվել լավ առաջընթաց ունենալ այս ոլորտում[46], ինչն ընդունվել է ազգային իշխանությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից: Ընտրական բարեփոխումներն ամրագրված են ինչպես Կառավարության 2021-2026 թվականների ծրագրում, այնպես էլ Դատաիրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության մեջ:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխություններից եւ 2021 թվականի հունիսին եւ դեկտեմբերին տեղի ունեցած ընտրություններից հետո Եվրոպայի խորհուրդը մտադիր է շարունակելու Հայաստանի իշխանությունների հետ իր համագործակցությունը՝ մնացած թերությունները վերացնելու եւ վերջին շրջանում ձեռք բերված առաջընթացը պահպանելու համար՝ մասնավորապես հետեւյալի միջոցով.

- եվրոպական չափանիշների վրա հիմնված ընտրական օրենսդրության մշակում՝ հաշվի առնելով վերջին շրջանում տեղի ունեցած ընտրությունների դիտորդական առաքելությունների եզրահանգումները.

- ընտրական հարցերով վարչական մարմնի՝ բոլոր մակարդակներում ընտրական հանձնաժողովների անդամների ընտրության եւ ընտրության ընթացակարգի ու քվեարկության, հաշվարկման եւ արդյունքների ամփոփման ընթացքում կեղծիքների եւ հնարավոր մանիպուլյացիաների փորձերի վերացման վերաբերյալ նրանց վերապատրաստելու մասով կարողությունների ամրապնդում.

- ընտրությունների հարցերով վարչական մարմինների եւ դատախազների ու իրավապահ մարմինների միջեւ համագործակցության ամրապնդում՝ ընտրակեղծիքները կանխելու, դրանց հետ կապված քննություն անցկացնելու եւ պատիժներ նշանակելու համար.

- լրատվական ոլորտի մասնագետների՝ քաղաքացիներին եւ ընտրողներին ընտրական քարոզարշավների եւ ընտրական գործընթացների վերաբերյալ պրոֆեսիոնալ, անկախ եւ անկողմնակալ լուսաբանում ապահովելու, ինչպես նաեւ նախընտրական քարոզարշավի ընթացքում ատելության եւ սադրիչ ելույթները կանխելու կարողությունների զարգացում.

- քաղաքականությանը եւ ընտրական գործընթացներին կանանց մասնակցության խթանում եւ նրանց հզորացում.

- ապահովել ԸՎԼ-ի եւ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի վերաբերյալ դատավորների վերապատրաստման իրականացում.

- ընտրական իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին եւ գյուղական վայրերում ապրող մարդկանց՝ նրանց ընտրական գործընթացում ավելի լավ ներգրավելու եւ ընտրողների վրա ազդելու փորձերը կանխելու նպատակով:

[46] Այդ գործողությունների միջոցով ձեռք բերված առաջընթացը ներառում է 2016 թվականի հունիսին ընդունված և հետագայում՝ 2016 թվականի հունիսի վերջին և 2016 թվականի սեպտեմբերին փոփոխված Ընտրական օրենսգիրքը, որն արժանացել է Վենետիկի հանձնաժողովի գնահատանքին՝ որպես ժողովրդավարական ընտրությունների համար լավ հիմքի ձևավորում (Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հրապարակել են երկու համատեղ կարծիք. *CDL-AD(2017)019* և *CDL-AD(2016)031*):

Եվրոպայի խորհուրդը կկարողանա առաջնորդվել ընտրությունների ոլորտում իր երկար ու հարուստ փորձով[47] եւ[48] Եվրոպական ընտրական չափանիշները կազմող՝ չափանիշների ու փաստաթղթերի իր յուրահատուկ փաթեթով: Եվրոպայի խորհուրդն ակտիվ մասնակցություն ունի ընտրական գործընթացի բոլոր փուլերում,[49] ինչը թույլ է տալիս ապահովել առավելագույն փոխկապակցվածություն եւ համակարգում բոլոր մակարդակներում:

Ակնկալվող արդյունքներ

Ժողովրդավարական կառավարում

- ✔ Տեղական ժողովրդավարության վերաբերյալ օրենսդրական եւ ինստիտուցիոնալ դաշտը համահունչ է եվրոպական չափանիշներին:
- ✔ Ֆինանսական համահարթեցման շրջանակն ապահովում է ռեսուրսների ավելի անաչառ բաշխում՝ օրենսդրությանը համապատասխան՝ տարածաշրջանային անհավասարությունները եւ համայնքապետարանների բազմազան ֆինանսական կարողությունները հակակշռելու համար:
- ✔ Կենտրոնական կառավարությունը տեղական իշխանություններին շնորհել է հանրային գործառույթների եւ ծառայությունների մասով ավելի բարձր լիազորություններ եւ պատասխանատվություն:
- ✔ Տեղական եւ ԲԿԳ անդամ համայնքներն ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) գործընկերները ինստիտուցիոնալացրել են լավ կառավարման եւ ներառման սկզբունքները:
- ✔ Տեղական իշխանություններն ավելի շատ են քաղաքացիներին, այդ թվում՝ երիտասարդներին, եւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ներառում քաղաքականության հետ կապված որոշումների կայացման գործընթացում:
- ✔ Տեղական իշխանություններն ակտիվորեն մասնակցում են տեղական տնտեսության զարգացման քաղաքականությանը:
- ✔ Կառավարության բարձրաստիճան մարմիններն իրենց ազգային միավորումների միջոցով պատշաճ կերպով խորհրդատվություն են տրամադրում տեղական իշխանություններին՝ անմիջականորեն նրանց առնչվող հարցերի հետ կապված:
- ✔ Տեղական իշխանություններն առավել թափանցիկ են, հաշվետու եւ գործում են էթիկայի նորմերին համապատասխան, ինչպես նաեւ խթանում են տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացի նկատմամբ քաղաքացիների ընդլայնված վերահսկողությունը:
- ✔ Ընտրությունների հարցերով վարչական մարմինների բարեվարքությունն ու պրոֆեսիոնալիզմը բարձրացված է բոլոր մակարդակներում:
- ✔ Ընտրությունների վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանումն իրականացվում է ավելի արդյունավետ եւ պրոֆեսիոնալ կերպով:
- ✔ Ընտրական գործընթացներն ավելի ներառական են, գենդերային առումով հավասարակշռված եւ թափանցիկ:
- ✔ Ընտրական կոռուպցիան (ձայներ գնելը, ընտրողների վրա ճնշումները), այդ թվում՝ գյուղական վայրերում, նվազել է:

[47] Եվրոպայի խորհրդի աշխատանքն ընտրությունների բնագավառում:
[48] Եվրոպայի խորհրդի օրինակելի չափանիշներ (ընտրությունների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ընդհանուր օրենսդրությունը):
[49] Ընտրական շրջափուլը Եվրոպայի խորհրդում:

✔ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ մոնիթորինգ իրականացնելու հետ կապված կարողությունները կատարելագործվել են, եւ գրասենյակն աջակցում է ավելի լավ կառավարմանը:
Ազգային գլխավոր գործընկերներ՝ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Արդարադատության նախարարություն, Վարչապետի աշխատակազմ (Բաց կառավարման գործընկերության քարտուղարություն), Ազգային ժողով, Համայնքների միություն եւ տեղական մարմիններ, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ (լրագրողներ, խմբագիրներ), Գլխավոր դատախազի գրասենյակ, ընտրությունների ներքին դիտորդներ, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, կանանց միավորումներ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, քաղաքացիական հասարակություն:

ՄԱՍ III. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

3.1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող տեխնիկական համագործակցության ընդհանուր համակարգումը Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակի (ԾԳՏԳ) իրավասության դաշտում է, որը համակարգում է համագործակցային միջոցառումների ծրագրման ու ֆինանսական միջոցների հայթայթման գործընթացը՝ միաժամանակ ապահովելով Եվրոպայի խորհրդի գրասենյակների լավ աշխատանքը տեղում:

Համագործակցային ծրագրերի մասով հիմնական պատասխանատվությունն ընկնում է Եվրոպայի խորհրդի՝ համապատասխան փորձ ունեցող «գլխավոր վարչական մարմինների» վրա: Համաձայն տեխնիկական աջակցության եւ համագործակցության մասով Կազմակերպության ապակենտրոնացված քաղաքականության՝ Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակն ապահովում է տեղում ծրագրերի իրականացումը: 2022 թվականի հունիսի 10-ի դրությամբ երեւանյան գրասենյակում աշխատում էին 29 աշխատակից:

Գործողությունների ծրագրում ընդգրկված ծրագրերի իրականացումը, ըստ անհրաժեշտության, կարող է ներառել կարիքների գնահատում, օրենսդրության մասով փորձաքննություն, կարողությունների զարգացում, իրազեկության բարձրացում, հավասար ուսումնասիրություններ եւ գենդերային վերլուծություն: Իրականացման մեթոդաբանությունը, համաձայն *Եվրոպայի խորհրդի ծրագրերի կառավարման մեթոդաբանության* (ԾԿՄ), նպատակաուղղված է ազգային շահագրգիռ կողմերի պատասխանատվության ամրապնդմանը եւ արդյունքների կայունության ապահովմանը: ԾԿՄ-ն կատարելագործում է ծրագրերի իրականացման որակը պլանավորման, մոնիթորինգի, ծախսերի արդյունավետության եւ գործունակության տեսանկյունից: Այն նպաստում է նաեւ ռիսկերի գնահատումը բարելավելուն, մարդու իրավունքների մոտեցումը ներդնելուն եւ գենդերային հարցերի տիրույթին ավելի մեծ ուշադրություն դարձնելուն:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի մշակած համագործակցությունը բխում է «բազմաինստիտուցիոնալ» մոտեցումից, որը թույլ է տալիս Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցներին ու մարմիններին թիրախավորել պետական շահառուներին, խորհրդարանները, քաղաքացիական հասարակությանը, անկախ պետական հաստատությունները, օրինակ՝ Օմբուդսմենի գրասենյակը, ինչպես նաեւ տեղական ու

տարածաշրջանային իշխանություններին: Սա յուրօրինակ լծակ է համակողմանի, ներառական, հաջողված եւ կայուն բարեփոխումների համար:

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը կիրառում է իր գործունեության բոլոր մակարդակներում եւ փուլերում: Դրա ընդհանուր օրենսդրությունը *(acquis)*, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերն ու ինստիտուտները՝ զուգակցված մասնակցության եւ ներառման (ներառյալ՝ գենդերային առումով հավասարակշռված մասնակցությունը եւ ներգրավվածությունը քաղաքացիական հասարակությանը), հավասարության եւ խտրականության բացառման, հաշվետվողականության եւ թափանցիկության ու տեղեկատվության հասանելիության սկզբունքների հետ, առավելություն են հաղորդում Եվրոպայի խորհրդի գործունեությանը: Ակնկալվում է, որ «*Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը. համագործակցային ծրագրերի գործնական ուղեցույց*» փաստաթուղթը կխթանի ծրագրերի կառավարման եւ համագործակցային գործունեության մեջ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման ընդլայնված կիրառումը:

Որպես մարդու իրավունքների վրա հիմնված այս մոտեցման բաղադրիչ՝ Եվրոպայի խորհուրդը կարեւորում է գենդերային մեյնսթրիմինգն իր ծրագրային գործունեության ամբողջ ընթացքում՝ *Գենդերային հավասարության վերաբերյալ 2018-2023 թվականների իր ռազմավարությանը* համապատասխան: Ակնկալվում է, որ *Համագործակցային ծրագրերի մասով Եվրոպայի խորհրդի գենդերային մեյնսթրիմինգի գործիքակազմը* կընդլայնի Կազմակերպության ներսում համագործակցային գործունեության մեջ, ինչպես նաեւ ազգային գործընկերների եւ այլ շահառուների կողմից գենդերային հարցերով տիրույթի կիրարկումը: Գենդերային մեյնսթրիմինգի մոտեցումը կսահմանվի գործողությունների ծրագրի հետ կապված գործողությունների մշակման ժամանակ: Այն արդեն կկիրառվի գործողությունների նկատմամբ՝ անկախ համագործակցության ոլորտից: Օրինակ, գենդերային հավասարության եւ կանանց իրավունքների չափանիշները հաշվի կառնվեն, երբ տարբեր օրենսդրական ակտերը եւ ազգային շրջանակները լրամշակվեն եվրոպական չափանիշների լույսի ներքո: Գենդերային հավասարության խնդիրը նույնպես կներառվի վերապատրաստման գործողություններում եւ ծրագրերում: Գենդերային ազդեցությունը կենթարկվի վերլուծության, երբ ծրագրերը մշակվեն եւ իրականացվեն: Ի հավելումն գենդերային մեյնսթրիմինգի՝ կդիտարկվեն կոնկրետ գործողություններ՝ գենդերային հավասարությունը խթանելու համար:

Ծրագրի իրականացումից առաջ եւ դրա ընթացքում ծրագրի իրականացման թիմերը կհիմնվեն Արեւելյան գործընկերության տարածաշրջանն ընդգրկող գենդերային մեյնսթրիմինգի հարցերով խորհրդատուի[50] փորձի վրա: Գենդերային մեյնսթրիմինգի հարցերով խորհրդատուն կապահովի գենդերին առնչվող հարցերի ներառումը ծրագրերում՝ խթանելով այնպիսի գործիքների կիրառումը, ինչպիսիք են գենդերային վերլուծությունը եւ գենդերային ազդեցության գնահատումը, եւ այնուհետեւ խորհրդատվություն կտրամադրի համապատասխան հանձնարարականների իրականացման վերաբերյալ՝ ուղղված գենդերային հարցերով տիրույթի հետագա ինտեգրմանը: Խորհրդատուն կխթանի այս նպատակին ուղղված գործիքների եւ մեխանիզմների հետագա զարգացումը եւ տարածաշրջանում Եվրոպայի խորհրդի ծրագրի իրականացման անձնակազմի կարողությունների հետագա զարգացումը՝ ծրագրերում գենդերազգայուն մոտեցումը դյուրացնելու նպատակով:

2021 թվականի հունվարին մեկնարկած՝ Գենդերային հավասարության

[50] Գործուղված է Ֆինլանդիայի կողմից:

համակարգման կենտրոնների ցանցը նույնպես կծառայի որպես գենդերային հավասարության կատալիզատոր Եվրոպայի խորհրդի՝ տվյալ ոլորտի բոլոր գրասենյակներում:

Նույն կերպ Եվրոպայի խորհուրդը խթանում է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ծրագրի գործողություններին՝ *Եվրոպայի խորհրդի համագործակցային գործունեությանը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ուղեցույցին* համապատասխան:

Գործողությունների ծրագրի շրջանակում կշարունակվի անդրադարձ կատարվել կանանց եւ երեխաների հատուկ կարիքներին՝ նրանց իրավունքների ամրապնդման եւ կենսական պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման միջոցով: Հատուկ ուշադրություն կդարձվի ներառման միջոլորտային բնույթի ապահովմանը՝ ապահովելով գենդերային առումով հավասարակշռված մասնակցություն:

Բացի այդ, գործողությունների ծրագրի ամբողջ ընթացքում տարբեր միջոցներով կապահովվի քաղաքացիական հասարակության մասնակցությունը՝ նպատակ ունենալով ամրապնդել նրա դերը երկրում՝ խթանելով իշխանությունների հետ երկխոսությունը եւ զարգացնելով վերջինիս կարողությունները:

Կազմակերպությունը հանձնառություն ունի պաշտպանելու երեխաներին վնասից եւ երաշխավորելու երեխաների պաշտպանության իրավունքի լիարժեք ապահովումը՝ *Երեխաների իրավունքների 2022-2027 թվականների իր ռազմավարությանը* համապատասխան: Ակնկալվում է, որ Եվրոպայի խորհրդի՝ բարձրաձայնելու մասով քաղաքականությունը, որի շրջանակում նախատեսվում է իրավախախտումների մասին հաղորդելու մեխանիզմի ներդրում, եւ երաշխավորվում է հաղորդում ներկայացնող անձանց պաշտպանությունը, ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարին: Մինչեւ այն ուժի մեջ մտնելը երեխաների պաշտպանության մասով գործող քաղաքականության շրջանակն ընդլայնվել է:

Մեկ այլ միջոլորտային տիրույթ, որի մասին պետք է նշել, կլիմայի փոփոխության դեմ պայքարը եւ շրջակա միջավայրի պահպանությունն է: Տարիների ընթացքում Եվրոպայի խորհուրդը տարածաշրջանային պայմանագրերի միջոցով զգալիորեն խթանել է շրջակա միջավայրի կայունությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կենսաբազմազանության պաշտպանությունը, լանդշաֆտի կառավարումը, հիմնական բնական եւ տեխնոլոգիական աղետների ռիսկի նվազեցումը եւ տարածքային կայուն զարգացումը: Չնայած Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (ՄԻԵԿ) եւ Եվրոպական սոցիալական խարտիայում (ԵՍԽ) հստակորեն հղում չի արվում առողջ շրջակա միջավայրի մասով որեւէ իրավունքի՝ որպես այդպիսին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքով եւ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) եզրակացություններով հաստատվում է շրջակա միջավայրի եւ մարդու իրավունքների միջեւ անհերքելի փոխկապվածությունը:

2020 թվականին Եվրոպայի խորհուրդն իրականացրել է շրջակա միջավայրի պարզեցված գնահատում՝ ընդգծելու իր համագործակցային գործունեության արդյունքում ի հայտ եկած դրական ազդեցությունների հիմնական հնարավորությունները եւ շրջակա միջավայրի խոցելի կողմերի ռիսկերը: Նախնական եզրակացությունները ցույց են տվել, որ Եվրոպայի խորհրդի համագործակցության ոլորտն անուղղակի դրական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա՝ երկրների լավ կառավարման կառույցներն ուժեղացնելու գործում նրանց տրամադրվող աջակցության միջոցով՝ այդպիսով հնարավորություն տալով նրանց ավելի արդյունավետորեն հաղթահարելու շրջակա միջավայրի հետ կապված

մարտահրավերները եւ նպատակները: Այնուամենայնիվ, դեռեւս անհրաժեշտ է ընդլայնել Եվրոպայի խորհրդի համագործակցության հատվածի գործողություններն այս ոլորտում:

Եվրոպայի խորհրդի համագործակցության հատվածն ունակ է կլիմայի եւ շրջակա միջավայրի տիրույթը ներմուծել ոլորտների եւ շահագրգիռ կողմերի քննարկումներում, որոնք ավանդաբար չեն քննարկում այս թեմաները: Այդ անելիս այն կարող է հիմնվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն շրջակա միջավայրի խնդիրներին անդրադարձող՝ Եվրոպայի խորհրդի պարտադիր հանձնառությունների եւ պայմանագրերի, դրա՝ միջկառավարական երկխոսություն եւ համագործակցություն ներառող կայացած աշխատանքային մեթոդների, ինչպես նաեւ ամբողջ Եվրոպայում իր փորձի լայն ու բազմազան ցանցերի վրա: Այս համատեքստում Եվրոպայի խորհրդի համագործակցության հատվածի նպատակն է կլիմայի փոփոխության եւ շրջակա միջավայրի քայքայման դեմ պայքարը դարձնել իր գործողությունների անբաժանելի եւ ավելի հստակ մասը, եւ ներկայումս այն դիտարկում է երեք հիմնական ուղիներ. 1) շրջակա միջավայրի պաշտպանության մեյնսթրիմինգ եւ կլիմայի փոփոխության քննարկումների ընդգրկում Եվրոպայի խորհրդի համագործակցային ծրագրերում, 2) շրջակա միջավայրին հատուկ նպատակներ պարունակող համագործակցային ծրագրերի մշակում եւ նախագծում եւ 3) Եվրոպայի խորհրդի աշխատանքային մեթոդների եւ գործելակերպերի կատարելագործում՝ իր համագործակցային գործունեության շրջանակում շրջակա միջավայրի ավելի մեծ կայունություն ապահովելու համար:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակում հաշվի են առնվում նաեւ Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի գնահատման եզրակացությունները եւ առաջարկությունները, ինչպես նաեւ նախորդ գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքում սերտած դասերը, այդ թվում՝

- ծրագրի մշակման եւ իրականացման բոլոր մակարդակներում եւ բոլոր փուլերում գործընկերների հետ սերտ համաձայնեցում, որն անհրաժեշտ է ապահովելու գործողությունների համապատասխանությունը եւ դրանց արդյունավետ իրականացումը, ինչպես նաեւ պատասխանատվության եւ ներգրավվածության բարձր մակարդակի ապահովում իշխանությունների շրջանում.

- ծրագրերի արդյունավետ համակարգում, ինչպես նաեւ համակարգման արդյունավետ մեխանիզմներ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային գործընկերների շրջանում, որոնք կարեւոր են միջամտությունների անհարկի համընկնումից խուսափելու համար.

- մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում համագործակցության նկատմամբ, որի շրջանակում Եվրոպայի խորհրդի չափանիշներն ու սկզբունքներն օգտագործվում են եւ՛ որպես տեխնիկական աջակցության միջոց, եւ՛ որպես նպատակ, ինչը կարող է էապես նպաստել այդ իրավունքների իրականացմանը:

Ելնելով իր լիազորությունների բնույթից՝ Եվրոպայի խորհուրդը երբեմն գործունեություն է իրականացնում բարդ եւ անկայուն միջավայրերում, որոնք նրան ռիսկերի են ենթարկում: Գործողությունների ծրագրի ռիսկերի վերլուծությունը եւ հնարավոր մեղմացման ռազմավարությունները ներկայացված են սույն գործողությունների ծրագրի Հավելված II-ում՝ հիմնվելով Եվրոպայի խորհրդի *ռիսկերի կառավարման ուղենիշների* եւ *Ռիսկերի կառավարման քաղաքականության* վրա, որոնք երկուսն էլ հաստատվել են 2016 թվականի հունիսին: Գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր ծրագրերն ունեն իրենց ռիսկերի գնահատման եւ մեղմացմանն ուղղված ռազմավարությունները: 2021 թվականին ԾԳՏԳ-ն մեկնարկեց ռիսկերի կառավարման

գործընթաց՝ Կազմակերպչական ռիսկերի ռեգիստրում ընդգրկվելու համար, որը պարբերաբար ներկայացվում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի եւ Բարձրագույն ղեկավարության խմբի ուշադրությանը: Արդյունքները վերլուծության կենթարկվեն ներքին աուդիտի, արտաքին աուդիտի եւ Վերահսկողության խորհրդատվական կոմիտեի կողմից:

Քովիդ-19 համավարակի համատեքստում Եվրոպայի խորհուրդը ձգտել է ապահովել գործունեության շարունակականությունը նախորդ գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում՝ միեւնույն ժամանակ հարգելով հանրային առողջապահության ազգային միջոցառումները: Եվրոպայի խորհուրդն իր համագործակցային գործունեության ամբողջ ընթացքում դոնորների եւ շահառուների հետ սերտ համագործակցությամբ շարունակաբար ընդունել եւ իրականացրել է մեղմացմանն ուղղված միջոցառումներ: Դրանք ներառել են ծրագրային հարմարեցումներ եւ տեխնիկական լուծումների որոնում: Հանգամանքներից ելնելով՝ նույն մոտեցումը կկիրառվի սույն գործողությունների ծրագիրն իրականացնելիս:

3.2. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Գործողությունների ծրագրով կշարունակվեն *Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակներին* (ԿԶՆ), մասնավորապես՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ եւ 16-րդ նպատակներին հասնելուն ուղղված Հայաստանի իշխանությունների ջանքերը՝ հետեւյալ կերպ:

Նպատակ 3. Ապահովել առողջ կյանք եւ խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից

Կենսաբժշկության ոլորտում, ինչպես նաեւ քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների ապահովման ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվող գործունեությունն ուղղակիորեն կնպաստի 3.4-րդ թիրախին[51]: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկներում թմրամիջոցներ օգտագործողների կառավարումն ուղղակիորեն կնպաստի 3.5-րդ թիրախի իրականացմանը[52]: Վերջապես, քրեակատարողական հիմնարկների առողջապահական համակարգի արդյունավետության բարձրացումն ուղղակիորեն կնպաստի 3-րդ նպատակի իրագործմանը:

Նպատակ 4. Ապահովել ներառական եւ հավասար որակյալ կրթություն բոլորի համար եւ խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները

Գործողությունների ծրագրի մի շարք գործողություններ նպատակաուղղված են մասնագիտական կարողությունների կատարելագործմանը եւ գիտելիքների ու

[51] Նպատակ 3, թիրախ 3.4. Մինչև 2030 թվականը մեկ երրորդով կրճատել վաղաժամ մահացությունը ոչ վարակիչ հիվանդություններից՝ կանխարգելման և բուժման միջոցով, և խթանել հոգեկան առողջությունը և բարեկեցությունը:

[52] Նպատակ 3, թիրախ 3.5. Ուժեղացնել թմրամիջոցների չարաշահման, այդ թվում՝ թմրադեղերի չարաշահման և ոգելից խմիչքների վնասաբեր օգտագործման կանխարգելումը և բուժումը:

հմտությունների տրամադրմանը եւ նպաստում են 4.7-րդ թիրախի իրականացմանը[53]: Որպես Հայաստանում մարդու իրավունքների պահպանումը բարելավելու իր ջանքերի մաս՝ Եվրոպայի խորհուրդը ձգտում է կատարելագործել իրավական ոլորտի մասնագետների, ազգային ինստիտուտների, իրավապահ մարմինների եւ պրոբացիայի ծառայության աշխատակիցների, ինչպես նաեւ տեղական իշխանությունների կարողությունները՝ իրենց աշխատանքում մարդու իրավունքների սկզբունքները կիրառելու համար: Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության եվրոպական ծրագիրը (HELP) կարեւոր նշանակություն ունի այս առումով, քանի որ այն ապահովում է ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման հնարավորություններ եւ նպաստում է մարդու իրավունքների հարցերով կրթությանը՝ ուղղված կայուն զարգացմանը:

Նպատակ 5. Հասնել գենդերային հավասարության եւ հզորացնել բոլոր կանանց եւ աղջիկներին

Սույն գործողությունների ծրագիրը կնպաստի 5.1[54], 5.2[55], 5.5[56] եւ 5.գ թիրախներին[57]: Սա կիրականացվի՝ շարունակելով աջակցել համապատասխան շահագրգիռ կողմերին՝ պետական պաշտոնատար անձանց եւ հանրության շրջանում Եվրոպայի խորհրդի համապատասխան չափանիշները խթանելու հարցում, ինչպես նաեւ կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ստեղծման միջոցով: Կոնկրետ գործողություններն ուղղված կլինեն զինված ուժերում կանանց վիճակին՝ ավելացնելով դատական իշխանությունում կին դատավորների թիվը եւ ապահովելով արդարադատության հավասար մատչելիություն կանանց համար:

Քանի որ Հայաստանը 2018 թվականին ստորագրել է Ստամբուլի կոնվենցիան, գործողությունների ծրագրի շրջանակում հատուկ ուշադրություն է դարձվում Կոնվենցիայի հետ ազգային օրենսդրության համապատասխանեցմանը եւ թեմայի վերաբերյալ իրավական ոլորտի մասնագետների կարողությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է «Սեռական շահագործումից եւ սեռական ոտնձգությունից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (Լանզարոտեի կոնվենցիա), որը Հայաստանը վավերացրել է 2020 թվականին, ապա սույն գործողությունների ծրագրում ներառվում են

[53] Նպատակ 4, թիրախ 4.7. Մինչև 2030 թվականն ապահովել, որ բոլոր սովորողները ձեռք բերեն կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում, ի թիվս այլնի, կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, խաղաղության և բռնությունը մերժող մշակույթի խթանման, աշխարհի քաղաքացիության, ինչպես նաև մշակութային բազմազանության և կայուն զարգացման մեջ մշակույթի ունեցած ավանդը գնահատող ուսուցման միջոցով:

[54] Նպատակ 5, թիրախ 5.1. Ամենուր վերջ դնել բոլոր կանանց և աղջիկների նկատմամբ գործադրվող խտրականության բոլոր ձևերին:

[55] Նպատակ 5, թիրախ 5.2. Վերացնել բոլոր կանանց և աղջիկների հանդեպ գործադրվող բռնության բոլոր ձևերը պետական և մասնավոր ոլորտներում, այդ թվում՝ թրաֆիքինգը և սեռական ու շահագործման մյուս տեսակները:

[56] Նպատակ 5, թիրախ 5.5. Ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում ղեկավար դիրք զբաղեցնելու համար:

[57] Նպատակ 5, թիրախ 5.գ. Ընդունել և ամրապնդել առողջ քաղաքականություն և կիրարկելի օրենսդրություն՝ գենդերային հավասարության խթանման և բոլոր մակարդակներում բոլոր կանանց և աղջիկների հզորացման նպատակով:

դրա դրույթների վերաբերյալ հիմնական շահագրգիռ կողմերի, մասնագետների եւ քաղաքացիական հասարակության իրազեկության բարձրացմանը եւ դրանց իրականացման համար ազգային իշխանություններին տրամադրվող աջակցությանն ուղղված գործողություններ: Մարդկանց թրաֆիքինգի ոլորտում իրականացվող՝ սույն գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունները ներառում են օրենսդրական եւ ինստիտուցիոնալ դաշտի բարելավումը, ինչպես նաեւ համապարփակ ռազմավարությունների ընդունումն ու իրականացումը՝ բարելավելու համար երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի, այդ թվում՝ թրաֆիքինգի կանխարգելումը եւ երեխաների պաշտպանությունը դրանցից:

Բոլոր քաղաքականություններում եւ միջոցառումներում, ինչպես նաեւ հենց ծրագրերի իրականացման ընթացքում գենդերային մեյնսթրիմինգը գործողությունների ծրագրի առաջնահերթություններից է, ինչպես նաեւ նպաստում է 5-րդ նպատակի իրականացմանը:

Նպատակ 8. Խթանել երկարաժամկետ, ներառական եւ կայուն տնտեսական աճ, լիարժեք եւ արդյունավետ զբաղվածություն եւ արժանապատիվ աշխատանք բոլորի համար

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող գործողությունները կնպաստեն 8.7[58] թիրախին՝ ամրապնդելով երեխաների թրաֆիքինգի կանխարգելումը, *inter alia*, ներդնելով արդյունավետ օրենսդրական եւ ընթացակարգային դաշտ՝ ապահովելու համար Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելը: Ավելին, քանի որ Հայաստանը «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի անդամ է եւ 2020 թվականին վավերացրել է Լանզարոտեի կոնվենցիան, սույն գործողությունների ծրագրում ներառվում են գործողություններ, որոնք ուղղված են դրա դրույթների վերաբերյալ հիմնական շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացմանը, ինչպես նաեւ երկու կոնվենցիաների արդյունավետ իրականացման գործում իշխանություններին աջակցելուն:

Բացի այդ, Եվրոպական սոցիալական խարտիայով երաշխավորվում են խտրականության բացառման պայմաններում աշխատելու, աշխատանքի արդար պայմանների, անվտանգ եւ առողջ աշխատանքային պայմանների եւ արդար վարձատրության իրավունքները: Հետեւաբար սոցիալական իրավունքների ապահովմանը եւ Խարտիայի կիրառմանը նպատակաուղղված գործողությունները կնպաստեն 8.8 թիրախի իրականացմանը[59]:

[58] Նպատակ 8, թիրախ 8.7. Ձեռնարկել անհապաղ և արդյունավետ միջոցառումներ՝ իսպառ վերացնելու հարկադիր աշխատանքը, վերջ դնելու ժամանակակից ստրկությանը և մարդկանց թրաֆիքինգին, ապահովելու երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի, այդ թվում՝ մանուկ զինվորների հավաքագրման և օգտագործման արգելումն ու վերացումը, ինչպես նաև մինչև 2025 թվականը վերջ դնել երեխայի աշխատանքին իր բոլոր ձևերով:

[59] Նպատակ 8, թիրախ 8.8. Պաշտպանել աշխատանքային իրավունքները և խթանել անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր բոլոր աշխատավորների, այդ թվում՝ միգրանտ աշխատավորների, մասնավորապես՝ կին միգրանտների և անկայուն զբաղվածություն ունեցողների համար:

Նպատակ 10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում եւ դրանց միջեւ

Խտրականության բացառման ոլորտում սույն գործողությունների ծրագրով սահմանված նպատակներն ուղղակիորեն նպաստում են 10.2[60], 10.3[61] եւ 10.7 թիրախներին[62]: Մասնավորապես նախատեսվում է աջակցել ազգային իշխանությունների ջանքերին՝ ուղղված համապատասխան օրենսդրությունը խտրականության դեմ պայքարի եվրոպական եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, ինչպես նաեւ խտրականության զոհերի համար արդարադատության մատչելիության բարելավմանը եւ բոլորի, այդ թվում՝ կանանց եւ այնպիսի խոցելի խմբերի համար, ինչպիսիք են փոքրամասնությունները, երեխաները եւ երիտասարդները, արդարադատության մատչելիության բարելավմանը: Ավելին, Եվրոպայի խորհուրդը կաջակցի փոքրամասնությունների պաշտպանության ընդլայնմանն ուղղված Հայաստանի ջանքերին եւ կօգնի տեղահանված անձանց խնդրի լուծմանը՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան:

Նպատակ 11. Քաղաքները եւ բնակավայրերը դարձնել ներառական, անվտանգ, դիմակայուն եւ կայուն

Տեղական ինքնակառավարման միջոցով լավ կառավարումը խթանելը գործողությունների ծրագրի նպատակներից մեկն է, որը նպաստում է 11.3 թիրախի իրականացմանը[63]: Այս առումով գործողությունների ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանին համապատասխան օրենսդրությունը վերանայելու հարցում՝ ֆինանսական ապակենտրոնացումն ապահովելու, ինչպես նաեւ տեղական որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցությունն ընդլայնելու համար: Ավելին, Եվրոպայի խորհուրդը կաջակցի Հայաստանին ավելի արդյունավետ միջհամայնքային եւ անդրսահմանային համագործակցություն հաստատելու հարցում:

Նպատակ 13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության եւ դրա ազդեցությունների դեմ

Շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ օրենսդրական դաշտի բարելավմանը՝ եվրոպական եւ միջազգային չափանիշներին համապատասխան, շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացմանը, իրավական ոլորտի

---

[60] Նպատակ 10, թիրախ 10.2. Մինչև 2030 թվականն ուժեղացնել և խթանել բոլորի սոցիալական, տնտեսական և քաղաքական ներառումը՝ անկախ տարիքից, սեռից, հաշմանդամություն ունենալու հանգամանքից, ռասայից, էթնիկական ծագումից, կրոնից կամ տնտեսական կամ այլ կարգավիճակից:

[61] Նպատակ 10, թիրախ 10.3. Ապահովել հավասար հնարավորություններ և կրճատել արդյունքների անհավասարությունները, այդ թվում՝ վերացնելով խտրական օրենքները, քաղաքականությունները և գործելակերպերը և խթանելով այս առումով պատշաճ օրենսդրության, քաղաքականությունների և գործողությունների ընդունումը:

[62] Նպատակ 10, թիրախ 10.7. Դյուրացնել մարդկանց կարգապահ, անվտանգ, կանոնավոր և պատասխանատու միգրացիան և շարժունությունը, այդ թվում՝ պլանավորված և լավ կառավարվող միգրացիոն քաղաքականությունների իրականացման միջոցով:

[63] Նպատակ 11, թիրախ 11.3. Մինչև 2030 թվականը խթանել ներառական և կայուն քաղաքայնացումը և բնակավայրերի մասնակցային, ինտեգրված և կայուն պլանավորումն ու կառավարումը բոլոր երկրներում:

մասնագետների՝ շրջակա միջավայրը պաշտպանելու կարողությունների հզորացմանը, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի ոլորտում կայուն փոփոխությունների խթանման հարցում տարածաշրջանային համագործակցությանն ու շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավմանն ուշադրություն դարձնելուն ուղղված գործողություններն ուղղակիորեն կնպաստեն 13.2[64] եւ 13.3[65] թիրախների իրականացմանը:

Նպատակ 16. Խթանել խաղաղ եւ ներառական հասարակության կայուն զարգացումը, բոլորի համար ապահովել արդարադատության մատչելիություն եւ բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու եւ ներառական հաստատություններ

Այս նպատակը 2030 թվականի օրակարգում իրավունքի գերակայության հիմնաքարն է: Պայմանավորված Եվրոպայի խորհրդի լիազորությունների բնույթով՝ դրա՝ սույն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող տեխնիկական համագործակցությանն ուղղված գործունեությունը նշանակալի խթան է 16-րդ նպատակի իրականացման համար: Անշուշտ, Հայաստանի հետ ձեռնարկվող բոլոր գործողությունները կընդգրկեն աջակցության լայն շրջանակ՝ կապված այս նպատակի եւ դրա բազմաթիվ թիրախների իրականացման հետ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետեւյալով.

- Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված գործողությունները, ինչպես նաեւ երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի կանխարգելումն ու երեխաների պաշտպանությունը դրանցից նպաստում են 16.1 թիրախի իրականացմանը[66]: Կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխարգելմանը եւ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրավապահ մարմինների, ոստիկանության ծառայողների եւ առողջապահական ծառայությունների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները նույնպես պետք է նպաստեն այս թիրախի իրականացմանը:

- Երեխաներին ուղղված մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը եւ դրա դեմ պայքարը սույն գործողությունների ծրագրի մեկ այլ առաջնահերթություն է: Դրանով փորձ կարվի ստեղծել ավելի ուժեղ օրենսդրական, քաղաքականության եւ ինստիտուցիոնալ դաշտ՝ ուղղված թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների նույնականացմանն ու աջակցությանը՝ դրանով նպաստելով 16.2 թիրախի իրականացմանն ուղղված ջանքերին[67]:

- Իրավունքի գերակայությունը խթանելը Եվրոպայի խորհրդի երեք հիմնական հենասյուներից մեկն է, եւ հետեւաբար դրա հետ կապված գործողություններն ուղղակիորեն նպաստում են 16.3 թիրախի իրականացմանը[68]: Ավելի կոնկրետ՝ դատահիրավական բարեփոխումների եւ սահմանադրական արդարադատության ոլորտում իրականացվող գործողությունները կընդլայնեն արդարադատության անկախությունը եւ

[64] Նպատակ 13, թիրախ 13.2. Կլիմայի փոփոխություններին ուղղված միջոցառումները ներառել ազգային քաղաքականություններում, ռազմավարություններում և պլաններում:

[65] Նպատակ 13, թիրախ 13.3. Բարելավել կրթությունը, իրազեկության բարձրացումը և մարդկային ու ինստիտուցիոնալ կարողությունները կլիմայի փոփոխությունների մեղմացման, հարմարվողականության, ազդեցության նվազեցման և վաղ նախազգուշացման հարցերում:

[66] Նպատակ 16, թիրախ 16.1. Ամենուր զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը:

[67] Նպատակ 16, թիրախ 16.2. Վերջ դնել երեխաների չարաշահմանը, շահագործմանը, թրաֆիքինգին և նրանց դեմ գործադրվող բոլոր տեսակի բռնություններին ու խոշտանգումներին:

[68] Նպատակ 16, թիրախ 16.3. Խթանել օրենքի գերակայությունն ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար մատչելիություն բոլորի համար:

արդյունավետությունը եւ կապահովեն հավասար մատչելիություն բոլոր քաղաքացիների համար:

- «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայի (Բուդապեշտի կոնվենցիա) պահանջների կատարման հարցում Հայաստանին աջակցություն տրամադրելը՝ լրացնելով իրավական դաշտում առկա բացերը եւ զարգացնելով դատական իշխանության ներկայացուցիչների, դատախազների եւ քննիչների՝ կիբեռհանցագործությունների բնագավառում քննությունների եւ ֆինանսական հետախուզության ոլորտի կարողությունները, համահունչ է 16.4 թիրախին [69]:

- Իրավական եւ քաղաքական խորհրդատվության եւ կարողությունների զարգացման մասով հետագա գործողությունների միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելուն ուղղված հետագա ջանքերը, ոլորտի տարբեր գործընկերների միջեւ համագործակցության, համակարգման եւ համաձայնեցվածության ընդլայնումը նպաստում են 16.5 թիրախի իրականացմանը[70]:

- Գործողությունների ծրագրի շրջանակներում զգալի ջանքեր են գործադրվում՝ ուղղված հանրության, դատական եւ իրավապահ մարմինների կարողությունների զարգացմանը՝ իրենց լիազորություններին համապատասխան ավելի արդյունավետ եւ էթիկայի նորմերի պահպանմամբ գործելու համար: Կատարելագործված հմտությունների միջոցով բարեփոխումներն իրականացնելու նպատակով հաստատությունների անձնակազմի կարողությունների հզորացումը եւ համապատասխան հաստատությունների միջեւ պատշաճ համաձայնեցման ապահովումը կնպաստեն 16.6 թիրախի իրականացմանը[71]:

- Տեղական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների, ինչպես օրինակ՝ երիտասարդների եւ քաղաքացիական հասարակության ընդլայնված մասնակցությունը գործողությունների ծրագրի առանցքային կետերից մեկն է, որն ուղղակիորեն նպաստում է 16.7 թիրախի իրականացմանը[72]:

- Արտահայտվելու եւ տեղեկատվության, ինչպես նաեւ լրատվամիջոցների ազատության ոլորտում սահմանված նպատակները, ինչպիսիք են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) սկզբունքներին համապատասխան օրենսդրական դաշտի կատարելագործումը, տեղեկատվական խառնաշփոթի նվազեցումը եւ հայկական լրատվական ոլորտի մասնագետներին աջակցելը նպաստում են 16.10 թիրախի իրականացմանը[73]:

Խտրականությունը, ատելության հիմքով հանցագործությունները եւ ատելության խոսքը մոնիթորինգի ենթարկելու եւ հակազդելու մասով համապատասխան հաստատությունների կարողությունների եւ հմտությունների ընդլայնմանն ուղղված

[69] Նպատակ 16, թիրախ 16.4. Մինչև 2030 թվականը զգալիորեն կրճատել ֆինանսների և զենքերի ապօրինի հոսքերը, ուժեղացնել գողացված գույքը հետ վերցնելու և վերադարձնելու գործողությունները և պայքարել կազմակերպված հանցավորության բոլոր ձևերի դեմ:

[70] Նպատակ 16, թիրախ 16.5. Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունն իրենց բոլոր ձևերով:

[71] Նպատակ 16, թիրախ 16.6. Զարգացնել արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատություններ բոլոր մակարդակներում:

[72] Նպատակ 16, թիրախ 16.7. Ապահովել որոշումների կայացման արձագանքող, ներառական, մասնակցային և ներկայացուցչական գործընթաց բոլոր մակարդակներում:

[73] Նպատակ 16, թիրախ 16.10. Ապահովել տեղեկատվության հանրային հասանելիությունը և պաշտպանել հիմնարար ազատությունները՝ ազգային օրենսդրությանը և միջազգային համաձայնագրերին համապատասխան:

գործողություններն ուղղակիորեն նպաստում են բռնությունը կանխելու եւ ահաբեկչության ու հանցագործությունների դեմ պայքարելու կարողությունների ձեւավորմանն առնչվող 16.ա[74] թիրախի իրականացմանը: Բացի այդ, խտրականության բացառման քաղաքականությունների ընդունման համար տրամադրվող աջակցությունը նպաստում է 16.բ թիրախի իրականացմանը[75]:

3.3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը եւ Եվրոպայի խորհրդի գործողությունների համապատասխանությունն ապահովելու մասով համակարգումն իրականացվում են տարբեր մակարդակներում եւ տարբեր հարթակներում, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն:

Եվրոպայի խորհրդի գործողությունները սահմանվում եւ իրականացվում են այնպես, որ ուշադրություն դարձվի այն բնագավառներին, որոնցում Կազմակերպությունն ունի ամուր փորձառություն եւ լրացուցիչ առավելություններ: Հայաստանի իշխանությունների հետ համատեղ համագործակցությունը մշակվում է միջազգային այլ կազմակերպությունների եւ ոլորտի դերակատարների կողմից իրականացվող նպատակների մանրակրկիտ վերլուծության, ինչպես նաեւ այդ նպատակներին հասնելու համար իրականացվող եւ (կամ) պլանավորվող նրանց աշխատանքի հիման վրա:

Իր գործողությունների համապատասխանությունն ապահովելու համար Եվրոպայի խորհուրդը սերտորեն համագործակցում է համապատասխան միջազգային գործընկերների, հատկապես Եվրոպական միության եւ մասնավորապես՝ Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ: Սույն գործողությունների ծրագիրը կիրականացվի նաեւ Եվրոպական միության եւ Հայաստանի միջեւ կնքված՝ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) համատեքստում: Կանոնավոր կապ կհաստատվի Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ), Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) եւ Հայաստանում գործող այլ միջազգային կազմակերպությունների հետ:

Անհրաժեշտության դեպքում ստեղծվում են համակարգման հարթակներ այլ միջազգային կազմակերպությունների հետ եւ ձեռնարկվում են համատեղ գործողություններ:

Գործունեության արդյունավետությունն ապահովելու եւ համընկնումներից խուսափելու համար Եվրոպայի խորհուրդն իր աշխատանքը համաձայնեցնում է նաեւ պետությունների զարգացման գործակալությունների եւ դեսպանությունների հետ, ներառյալ՝ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալությունը (ՇԶՀԳ), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ), Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալությունը (ՇՄԶՀԳ), Ավստրիական զարգացման գործակալությունը (ԱԶԳ) եւ Նորվեգիայի կառավարությունը,

[74] Նպատակ 16, թիրախ 16.ա. Ուժեղացնել բոլոր մակարդակների համապատասխան ազգային հաստատությունները, այդ թվում՝ միջազգային համագործակցության միջոցով՝ զարգացնելու բռնությունները կանխելու և ահաբեկչության ու հանցավորության դեմ պայքարելու կարողությունները, մասնավորապես՝ զարգացող երկրներում:

[75] Նպատակ 16, թիրախ 16.բ. Խթանել և կիրարկել ոչ խտրական օրենքներ և քաղաքականություններ՝ հանուն կայուն զարգացման:

սակայն չսահմանափակվելով վերոնշյալով:

3.4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Գործողությունների ծրագրի ընդհանուր բյուջեն 19 միլիոն եվրո է: 0.9 միլիոն եվրոյի չափով (ընդհանուր բյուջեի 4%-ը) ֆինանսավորումն ապահովված է:

Գործողությունների ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերը պետք է ֆինանսավորվեն մի քանի աղբյուրներից: Ֆինանսավորումը պետք է ապահովվի գլխավորապես կամավոր ներդրումներից՝ ստացված դոնոր երկրների եւ միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպական միության/Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրերի, օրինակ՝ «Գործընկերություն՝ հանուն լավ կառավարման» ծրագրի կողմից, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի Սովորական բյուջեից (ՍԲ):

Գործողությունների ծրագրի իրականացման համակարգման համար անհրաժեշտ են ընդհանուր կառավարման ծախսեր, որոնք կազմում են գործողությունների ծրագրի ուղղակի ծախսերի ոչ ավելի, քան 7%-ը:

Եվրոպայի խորհրդի ռեսուրսների մոբիլիզացման ռազմավարությանը համապատասխան՝ Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակի (ԾԳՏԳ) կողմից համակարգվող ֆինանսական միջոցների հայթայթման աշխատանքներն ուղղված են գործողությունների ծրագրին՝ որպես մեկ ամբողջություն: Գործողությունների ծրագրի մակարդակով ֆինանսավորումը մասնավորապես ապահովում է ճկունություն միջոցները հատկացնելու այնտեղ, որտեղ դրանք առավել անհրաժեշտ են, եւ որտեղ առավել հավանական է, որ դրանք կնպաստեն հիմնական քաղաքականության եւ ինստիտուցիոնալ բարեփոխումների կայունությանը:

2023-2026 թվականների սույն գործողությունների ծրագրի կառուցվածքը համապատասխանեցված է Եվրոպայի խորհրդի ծրագրերի եւ բյուջեի կառուցվածքին եւ դրա երկու երկամյա բյուջետային շրջափուլերին՝ ընդլայնելու կայունության, փոխլրացվածության եւ համակարգվածության աստիճանը:



Գծապատկեր 2. Հայաստանի համար իրականացվող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի բյուջեի նախահաշիվն ըստ թեմատիկ ուղղությունների (եվրոյով)

3.5. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի (ԺՀԶԽ) միջոցով իրականացնում է գործողությունների ծրագրի կատարման ընդհանուր արդյունքների գնահատումը:

Եվրոպայի խորհուրդը պարբերաբար թարմացվող տեղեկություններ կտրամադրի գործողությունների ծրագրի ընթացքի եւ վերջնարդյունքների վերաբերյալ: Այդ նպատակով Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակը (ԾԳՏԳ) Նախարարների կոմիտեին կներկայացնի հետեւյալ միջանկյալ եւ վերջնական հաշվետվությունները.

- բանավոր հաշվետվություն՝ գործողությունների ծրագրի իրականացման մեկնարկի ամսաթվից 12 եւ 36 ամիս անց, որով կներկայացվի առաջխաղացման վիճակը դրա պաշտոնական մեկնարկից հետո,

- առաջընթացի միջնաժամկետ գնահատման համակողմանի հաշվետվություն՝ գործողությունների ծրագրի իրականացման մեկնարկի ամսաթվից 24 ամիս անց,

- առաջընթացի վերջնական գնահատման հաշվետվություն՝ գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:

Գործողությունների ծրագրի շրջանակում գրանցված առաջընթացը կգնահատվի նաեւ Եվրոպայի խորհրդի եւ Հայաստանի իշխանությունների կողմից համատեղ: Այդ նպատակով ստեղծվել է Գործողությունների ծրագրի համակարգող կոմիտե, որի կազմում ներառված են Արտաքին գործերի նախարարության եւ գործողությունների իրականացմանը մասնակցող այլ ազգային շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչները:

Համակարգող կոմիտեն կգնահատի հաստատված ծրագրերի իրականացումը, կքննարկի հետագա համագործակցության հետ կապված մարտահրավերներն ու առաջարկները եւ ըստ անհրաժեշտության՝ կառաջարկի գործողությունների ծրագրի արդյունավետության բարելավմանն ուղղված միջոցառումներ: Նիստերը գումարվելու են գործողությունների ծրագրի իրականացման մեկնարկի ամսաթվից 24 ամիս անց՝ իրականացման միջանկյալ փուլը գնահատելու նպատակով, եւ մինչեւ գործողությունների ծրագրի ավարտը՝ ընդհանուր իրականացումը գնահատելու նպատակով: Այստեղ պետք է ապահովվի գենդերային առումով հավասարակշռված մասնակցություն՝ հաշվի առնելով ոլորտային գիտելիքների եւ փորձի մասով սահմանափակումները:

Բացի այդ, ԾԳՏԳ-ն, հաշվետվություններին ներկայացվող պահանջներին համապատասխան, գործողությունների ծրագրի տարեկան հաշվետվությունները կուղարկի գործողությունների ծրագրի մակարդակով ֆինանսավորմանն աջակցող դոնորներին:

Գործողությունների ծրագրի հետ կապված կոնտակտային տվյալներ

Եվրոպայի խորհուրդ, Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակ (ԾԳՏԳ)

F-67075 Ստրասբուրգ Սեդեքս

Հեռ.՝ + 33 (0)3 90 21 56 54

Ֆաքս՝ + 33 (0)3 90 21 46 31

Էլ.փոստ՝ *odgp@coe.int*

www.coe.int/programmes

Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակ

Էլիտ Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ

Խորենացի փողոց 15,

Երեւան 0010, Հայաստան

Էլ.փոստ՝ *coe.yerevan@coe.int*

www.coe.int/yerevan

ՀԱՎԵԼՎԱԾ I. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Համընդգրկող տիրույթները, ինչպիսիք են գենդերային հավասարությունը, գենդերային մեյնսթրիմինգը եւ քաղաքացիական հասարակության մասնակցությունը, մարդու իրավունքների հետ կապված Եվրոպայի խորհրդի մոտեցման հիմնական բաղադրիչներն են:

Ընդհանուր նպատակը. ապահովել Հայաստանում բարեփոխումների հաջող իրականացումը, որոնք ուղղված են Հայաստանի օրենսդրության, հաստատությունների եւ գործելակերպի՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության եւ ժողովրդավարության ոլորտներում եվրոպական չափանիշներին հետագա համապատասխանեցմանը, եւ այսպիսով օժանդակել երկրի՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված ջանքերին:

Մարդու իրավունքներ **Թեմատիկ արդյունքներ.** Մարդու իրավունքների պաշտպանությունը, հավասարությունը եւ մարդու արժանապատվությունը կատարելագործվում են մարդու իրավունքների չափանիշների, այդ թվում՝ գենդերային հավասարության, արտահայտվելու ազատության եւ լրատվամիջոցների ազատության, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) համակարգի բարելավված արդյունավետության վերաբերյալ չափանիշների ճիշտ ձեւակերպված եւ համակարգված իրականացման միջոցով:	
Արդյունքներ	**Ցուցանիշներ**
1.1. ՄԻԵԿ-ի արդյունավետ իրականացում	
ՄԻԵԿ համակարգի արդյունավետության բարձրացումն ազգային մակարդակում ✔ Քրեական ոլորտում քաղաքականությունը եւ կարգավորող դաշտը համահունչ են Հայաստանի նոր Քրեական օրենսգրքին եւ Քրեական դատավարության օրենսգրքին, ինչպես նաեւ եվրոպական չափանիշներին: ✔ Քրեական արդարադատության ոլորտի իրավաբանները ներդաշնակորեն իրականացնում են նոր քրեական օրենսդրական, կարգավորող դաշտը եւ քաղաքականությունը: ✔ Վատ վերաբերմունքի հետ կապված գործերը քննող ինստիտուցիոնալ կառույցը գործում է, եւ այս ոլորտում համապատասխան անձնակազմի կարողությունները զարգացած են: ✔ Հայաստանի Խորհրդարանն արդյունավետորեն մասնակցում է ազգային մակարդակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի կիրառմանը:	• Եվրոպական չափանիշների եւ Հայաստանի ՔՕ-ի եւ ՔԴՕ-ի հետ քրեական ոլորտում քաղաքականության եւ կարգավորող դաշտի համապատասխանության/ներդաշնակեցման աստիճանը: • Քրեական արդարադատության ոլորտում գործող մասնագետների թիվը, որոնք հնարավորություն ունեն կիրառելու քրեական արդարադատության նոր ընդունված օրենսդրությունը: • Համապատասխան մարմնի կողմից քննվող՝ վատ վերաբերմունքին առնչվող գործերի թիվը: • Հայաստանի կողմից ընդունված՝ Նախարարների կոմիտեի բանաձեւին համապատասխան միջոցառումների թիվը: • Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ-ի ավարտված գործերի թիվը: • Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի վերահսկողության տակ գտնվող՝ Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ-ի վճիռների թիվը:

✔ ՄԻԵԴ-ում երրորդ կողմի ներգրավման ընթացակարգի վերաբերյալ ՄԻՊ գրասենյակի կարողություններն ընդլայնված են։ ✔ Հայաստանի իրավական ոլորտի մասնագետներն ավելի լավ պատկերացում ունեն ՄԻԵԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի չափանիշների մասին եւ կիրառում են դրանք իրենց ամենօրյա պրակտիկայում։ ✔ ՄԻԵԴ-ի համապատասխան վճիռներում առկա ընդհանուր միջոցներն արդյունավետորեն իրականացվում են։ ✔ Հայաստանի զինված ուժերը կոնկրետ քայլեր է ձեռնարկում զինծառայողների շրջանում մարդու իրավունքներն ավելի լավ պաշտպանելու եւ խթանելու ուղղությամբ։ ✔ Համապատասխան կրթական եւ ուսումնական հաստատություններն ինստիտուցիոնալացնում են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը եւ խթանումը՝ որպես իրենց ստանդարտ ուսումնական մոդուլների եւ շարունակական կրթության մաս։ ✔ Զինված ուժերում կին զինծառայողների դերը եւ նշանակությունը բարձրացված են։ ✔ Զինծառայողներին եւ վետերաններին ավելի հասանելի են սոցիալական եւ առողջապահական ծառայությունները եւ այդ իրավունքների պաշտպանության մեխանիզմները։ ✔ Հայաստանի իշխանություններն ապահովում են համակարգված, գենդերազգայուն արձագանք (քաղաքականություններ, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ)՝ ուղղված Հայաստանում տեղահանված անձանց կոնկրետ խնդիրների լուծմանը (բնակարան, առողջություն, կրթություն եւ այլն)։ ✔ Տեղահանված անձանց համար արդարադատության եւ գույքային իրավունքների մատչելիությունն ընդլայնված է։ ✔ Առկա են Հայաստանի իշխանությունների կողմից սահմանված՝ շրջակա միջավայրի եւ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման միջոցներ։ ✔ Իրավական ոլորտի մասնագետների, մարդու իրավունքների հարցերով	• ՄԻԵԴ-ի վճիռների կատարմանը մասնակցող կառույցների (Միջգերատեսչական կոմիտեն, Կառավարության լիազոր ներկայացուցիչը, ՄԻԵԿ-ի հարցերով բաժինը Վճռաբեկ դատարանի դատական դեպարտամենտում, Արդարադատության ակադեմիան եւ այլ շահագրգիռ կողմեր) միջեւ առկա փոխգործակցության որակը։ • ՄԻԵԴ-ում երրորդ կողմի միջամտությունների թիվը։ • Զինծառայողների՝ մարդու իրավունքների պաշտպանության կատարելագործմանն ուղղված՝ Հայաստանի զինված ուժերի հանձնառության ապացույցները՝ հատուկ ուշադրություն դարձնելով կին զինծառայողներին։ • Կանանց վերահսկողության տակ գտնվող տղամարդ զինծառայողների թիվը։ • Կին զինծառայողների աշխատանքի ընդունման եւ առաջխաղացման մակարդակը։ • Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման թեմայով վերապատրաստման մոդուլն անցած զինծառայողների թիվը։ • Զինծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումների մասով հարուցված դեպքերի թիվը եւ տրված դատական արձագանքի որակը։ • Տեղահանված անձանց հետ կապված հարցերի կարգավորման նպատակով Հայաստանի իշխանությունների կողմից ներդրված շրջանակի համապատասխանությունն ու որակը։ • Տեղահանված անձանց թիվը, որոնց գործը գտնվում է Հայաստանի իշխանությունների կողմից կարգավորման փուլում։ • Մարդկանց թիվը, որոնց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է հայտնաբերվել։ • Շրջակա միջավայրի պաշտպանության բարելավման նպատակով Հայաստանի իշխանությունների կողմից սահմանված միջոցների համապատասխանությունը։ • Իրազեկության բարձրացման արշավին մասնակցած իրավական ոլորտի մասնագետների թիվը։

կառույցների եւ քաղաքացիական հասարակության իրազեկությունը մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի փոխգործակցության վերաբերյալ բարձրացված է։ ✔ Շրջակա միջավայրի պաշտպանության եւ մարդու իրավունքներին առնչվող փաստաթղթերի հետ կապված տարածաշրջանային համագործակցությունը կատարելագործված է։	• Շրջակա միջավայրի պաշտպանության եւ մարդու իրավունքների ոլորտում փաստացի ներգրավված իրավական ոլորտի մասնագետների եւ այլ շահառուների թիվը։ • Տարածաշրջանային մակարդակով ակտիվ շփումների եւ նախաձեռնությունների թիվը։
Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության ոլորտում ✔ Հայաստանի իրավական դաշտը եւ հարակից գործելակերպերն ավելի համահունչ են Օվիեդոյի կոնվենցիայում ամրագրված սկզբունքներին։ ✔ Հանրային իրազեկությունը կենսաբժշկության ոլորտի նկատմամբ կիրառվող մարդու իրավունքների հետ կապված մարտահրավերների վերաբերյալ բարձրացել է։ ✔ Կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր մակարդակը բարձրացել է։ ✔ Հայաստանը հետագա քայլեր է ձեռնարկում Օվիեդոյի կոնվենցիային միանալու ուղղությամբ։	• Իրավական եւ քաղաքական դաշտում Օվիեդոյի կոնվենցիային համապատասխան փոփոխություններ մտցնելու հարցում իշխանությունների արձագանքման մակարդակը։ • Հանրային քննարկումների թիվը եւ մարդու իրավունքների ու կենսաբժշկության ոլորտում հանրության ներգրավվածության մակարդակը։ • Մասնագետների շրջանում Օվիեդոյի կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան վերաբերմունքի փոփոխության մակարդակը։ • Օվիեդոյի կոնվենցիային միանալու առնչությամբ Հայաստանի իշխանությունների կողմից ցուցաբերված հետաքրքրության մակարդակը եւ ձեռնարկված կոնկրետ քայլերը։

Արտահայտվելու եւ տեղեկատվության ազատությունը, լրատվամիջոցների եւ տվյալների պաշտպանությունը ✔ Արտահայտվելու ազատությունը, լրատվամիջոցների ազատությունը եւ տեղեկատվության մատչելիությունը կարգավորող ազգային օրենսդրական եւ կարգավորող դաշտը համահունչ է ՄԻԵԿ-ին եւ արդյունավետորեն կիրարկվում է։ ✔ Հայաստանի լրատվամիջոցների մասնագետները եւ լրատվական գործունեություն իրականացնողները, այդ թվում՝ հանրային ծառայության հեռարձակողն ակտիվորեն խթանում են լրատվամիջոցների անձեռնմխելիությունը, էթիկայի չափանիշները եւ նպաստում են տեղեկատվության խառնաշփոթի, այդ թվում՝ ապատեղեկատվության եւ	• Լրատվամիջոցների ոլորտում ազգային իրավական դաշտի՝ ՄԻԵԿ-ի հետ համապատասխանության մակարդակը։ • Հայկական լրատվամիջոցներում կեղծ տեղեկատվության/ապատեղեկատվության մակարդակը։ • Տվյալների պաշտպանության ազգային ռազմավարությունը եւ եվրոպական չափանիշների հետ դրա համապատասխանության մակարդակը։ • Հայաստանի տվյալների պաշտպանության գործակալության անկախության մակարդակը եւ կարգավիճակը։ • Հայաստանի տվյալների պաշտպանության գործակալության կողմից իր

ատելության խոսքի նվազեցմանը: ✔ Լրատվական գործունեություն իրականացնողների հավատարմագրման համակարգը համահունչ է եվրոպական չափանիշներին: ✔ Հայաստանի իրավական ոլորտի մասնագետները տեղյակ են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի եւ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի մասին եւ կատարում են դրանց պահանջները: ✔ Տվյալների պաշտպանության ազգային ռազմավարությունն ընդունվել է: ✔ Հայաստանի տվյալների պաշտպանության գործակալության կարգավիճակը եւ անկախությունը կատարելագործված են, եւ այն իրավասություն ունի կիրառելու համապատասխան միջազգային չափանիշները: ✔ Իրավական ոլորտի մասնագետներն ավելի լավ պատկերացում ունեն տվյալների պաշտպանության միջազգային չափանիշների մասին եւ կիրառում են դրանք իրենց մասնագիտական պրակտիկայում: ✔ Հայաստանի քաղաքացիներն ավելի տեղյակ են իրենց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի մասին:	շահառուներին տրամադրվող աջակցության մակարդակը: • Վերապատրաստում անցած մասնագետների թիվը: • Իրազեկության բարձրացման արշավի ընդգրկման շրջանակը (ներգրավված անձանց թիվը):
1.2. Հավասարություն եւ մարդու արժանապատվություն	
Գենդերային հավասարություն, կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքար եւ արդարադատության մատչելիության բարելավում ✔ Հայաստանն ավելի պատրաստված է Ստամբուլի կոնվենցիայի վավերացմանը: ✔ Ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասով Հայաստանի իրավական դաշտն ու քաղաքականության շրջանակը համահունչ են Եվրոպայի խորհրդի չափանիշներին: ✔ Իրավապահ մարմինները, սոցիալական աշխատողները եւ այլ համապատասխան մասնագետներ ավելի լավ պատկերացում ունեն ընտանեկան բռնությունից եւ գենդերային հիմքով բռնությունից տուժած անձանց հետ աշխատանքի հետ կապված եվրոպական չափանիշների եւ գենդերազգայուն մոտեցումների մասին: ✔ Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի	• Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների միջոցով ներգրավված անձանց թիվը: • Դատական իշխանության անդամների, իրավական ոլորտի մասնագետների եւ իրավապահ մարմինների աշխատակիցների թիվը, որոնք վերապատրաստվել են եւ ծանոթացել առաջավոր գործելակերպերի հետ: • Փոխանակման եւ համագործակցության որակն այն երկրների համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, որտեղ ընտանեկան բռնության դեմ պայքարն ամենահաջողվածն է: • Ստամբուլի կոնվենցիայի հետ օրենսդրության համապատասխանեցման վերաբերյալ քննարկումներում ակտիվորեն ներգրավված շահառուների

մասին իրազեկության բարձրացման եւ վերջինիս հետ կապված իրավիճակը մոնիթորինգի ենթարկելու մասով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողություններն ընդլայնված են։ ✔ Գենդերային հավասարությունը եւ կանանց հզորացման ընդլայնումն ավելի լավ են խթանվում, իսկ Հայաստանի՝ կրթության ոլորտում գենդերային մեյնսթրիմինգի իրավական եւ քաղաքականության շրջանակը համահունչ են Եվրոպայի խորհրդի չափանիշներին։ ✔ Գենդերային հիմքով բռնության եւ ընտանեկան բռնության զոհ հանդիսացող կանանց, այդ թվում՝ ամենաանբարենպաստ վիճակում գտնվողների համար արդարադատության ու աջակցման ծառայությունների մատչելիությունը բարելավված է։	թիվը։ • Արդարադատության մատչելիության աստիճանը, ընտանեկան բռնության դեպքերով հարուցված գործերի թիվը եւ տրամադրված աջակցության որակը։
Երեխաների իրավունքներ ✔ Երեխաների պաշտպանության օրենսդրական, քաղաքականության եւ ինստիտուցիոնալ շրջանակները համապատասխանում են եվրոպական չափանիշներին, մասնավորապես՝ Լանզարոտեի կոնվենցիային, եւ բարելավում են թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների հայտնաբերման եւ նրանց աջակցություն ցուցաբերելու գործընթացները։ ✔ Համապատասխան մարմիններն ընդունում եւ իրականացնում են համապարփակ ռազմավարություններ՝ բարելավելու երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի, այդ թվում՝ երեխաների թրաֆիքինգի կանխարգելումը եւ երեխաների պաշտպանությունը դրանցից։ ✔ Իշխանությունները, մասնագետները եւ ՄԻՊ գրասենյակը մոբիլիզացնում են իրենց կարողությունները՝ երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերը կանխարգելելու եւ երեխաներին դրանցից պաշտպանելու, ինչպես նաեւ զոհ եւ վկա հանդիսացող երեխաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով։ ✔ Բարելավված են ՄԻՊ գրասենյակի՝ երեխաների խնամքի հաստատությունները մոնիթորինգի ենթարկելու կարողությունները, եւ ուժեղացվել են այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխաներին տրամադրվող ծառայությունները։ ✔ Երեխաներն ավելի լավ են ներկայացված անմիջականորեն իրենց վրա	• Երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի կանխարգելման եւ երեխաներին դրանցից պաշտպանելու մասով իրավական, քաղաքականության եւ ինստիտուցիոնալ շրջանակի՝ եվրոպական չափանիշների հետ համապատասխանության աստիճանը։ • Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման, երեխա զոհերի եւ բռնության ականատես երեխաների պաշտպանության եւ աջակցության ռազմավարությունների իմացության մակարդակը եւ կիրառումը համապատասխան դերակատարների կողմից։ • Համապատասխան շահառուների միջեւ համագործակցության մակարդակը։ • Հայաստանի իշխանությունների կողմից մոբիլիզացված մարդկային եւ ֆինանսական աջակցության մակարդակը։

ազդեցություն ունեցող որոշումների կայացման գործընթացում:	
1.3. Խտրականության բացառում, բազմազանություն եւ ներառում	
Խտրականության բացառում. ազգային փոքրամասնություններ, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ ✔ Խտրականությունը կանխարգելելու իրավական եւ կարգավորող շրջանակը համահունչ է եվրոպական չափանիշներին: ✔ Համապատասխան կառույցները շարունակում են աջակցել ռասիստական, հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքի եւ բռնության կանխարգելմանը, պայքարում են այդ երեւույթների դեմ, քրեական հետապնդման են ենթարկում հանցանք կատարած անձանց եւ ակտիվորեն նպաստում են ավելի ներառական հասարակության կառուցմանը: ✔ Խտրականության եւ ատելության խոսքի դեպքերն արդյունավետորեն լուծելու ՄԻՊ գրասենյակի կարողություններն ընդլայնվել են: ✔ Շարունակվում է փոքրամասնությունների լեզուների օգտագործումը եւ խթանումը դպրոցում, լրատվամիջոցներում եւ հանրային կյանքում:	• Խտրականության վերաբերյալ Հայաստանի իրավական շրջանակի՝ եվրոպական չափանիշների հետ համապատասխանության մակարդակը: • Համապատասխան կառույցների կողմից խտրականության, ռասիստական, հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքի եւ բռնության կանխարգելման նպատակով տրամադրված աջակցության մակարդակը եւ որակը: • Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված աջակցության մակարդակը եւ որակը:
1.4. Սոցիալական իրավունքներ	
Հայաստանում սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովումը՝ վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային համահունչ ✔ Հայաստանի օրենսդրական շրջանակը համապատասխանեցվել է սոցիալական իրավունքների ոլորտում եվրոպական չափանիշներին: ✔ Առաջընթաց Հայաստանի կողմից կոլեկտիվ բողոքների ընթացակարգի եւ Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ դրույթների ընդունման ուղղությամբ: ✔ Բարելավված ՍԻԵԿ մոնիթորինգի գործընթաց՝ շնորհիվ ազգային իշխանությունների կողմից տրամադրվող ազգային զեկույցների ավելի լավ որակի: ✔ ՄԻՊ գրասենյակն արդյունավետորեն նպաստում է Հայաստանում մարդու սոցիալական իրավունքների պատշաճ պաշտպանությանը:	• Այն, թե որքանով է համապատասխան օրենսդրությունը գործում կամ փոփոխված՝ սոցիալական իրավունքների, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների ոլորտում եվրոպական չափանիշներին համապատասխան: • Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) մոնիթորինգի գործընթացի շրջանակներում Հայաստանի իշխանությունների տրամադրած տվյալների որակը: • Հայաստանում սոցիալական իրավունքների պաշտպանությանը ՄԻՊ գրասենյակի ներգրավվածության մակարդակը: • Սոցիալական գործընկերների միջեւ երկխոսության որակը:

Իրավունքի գերակայություն **Թեմատիկ արդյունքներ.** Ժողովրդավարական անվտանգությունն ամրապնդվում է գործող օրենսդրության եւ եվրոպական չափանիշների ընդլայնված կիրառմամբ, ժողովրդավարական հասարակության համար բարենպաստ իրավական եւ ինստիտուցիոնալ դաշտի մշակմամբ եւ կոռուպցիայի, կիբեռհանցագործության եւ ապօրինի թրաֆիքինգի դեմ պայքարում արդարադատության բարելավված որակով եւ արդյունավետությամբ:	
Արդյունքներ	**Ցուցանիշներ**
2.1. Իրավունքի գերակայության վրա հիմնված կառույցներ	
Արդարադատության համակարգի անկախություն եւ արդյունավետություն ✔ Դատական համակարգի վերաբերյալ ներպետական իրավական ակտերն ընդունվել եւ կիրարկվել են Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ: ✔ Դատական ինքնակառավարվող մարմինները, ներառյալ՝ Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ) ավելի թափանցիկ, արդյունավետ եւ գործուն են, ինչը հանգեցնում է հանրային վստահության բարձրացման: ✔ Սահմանադրական դատարանը գործում է բարեփոխված արտաքին եւ ներքին օրենսդրական դաշտերին համապատասխան, եվրոպական չափանիշներին համահունչ: ✔ Արդարադատության հավասար մատչելիությունը բարելավված է՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների լավագույն գործելակերպերին համահունչ: ✔ Արբիտրաժի եւ հաշտարարության ավելի լայն մասշտաբով արդյունավետ կիրառումն օգնում է նվազեցնել դատարանների կուտակումները եւ ընդլայնել արդարադատության մատչելիությունը: ✔ Իրավաբաններն իրենց գործառույթներն իրականացնում են անկախ եւ պրոֆեսիոնալ ձեւով:	• Այն, թե որքանով է դատական իշխանության հետ կապված իրավական շրջանակը համապատասխանում եվրոպական չափանիշներին: • Դատական ինքնակառավարվող մարմինների գործելակերպերի՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների եւ լավագույն գործելակերպերի հետ համապատասխանության մակարդակը: • Դատական ակտերի որակի մակարդակը: • Դատական իշխանության թափանցիկության եւ հանրային հաշվետվողականության աստիճանը: • Դատական իշխանության նկատմամբ Հայաստանի քաղաքացիների վստահության մակարդակը: • Հայաստանի դատական համակարգում Սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենսդրության՝ լավ գործելակերպերի հետ համապատասխանության մակարդակը, ինչպես նաեւ այլ պետական գերատեսչությունների եւ քաղաքացիների հետ Դատարանի փոխգործակցության ձեւը (արտաքին կարգավորող շրջանակ): • Սահմանադրական դատարանի վարչական, կազմակերպչական, ֆինանսական եւ կառուցվածքային հարցերը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի՝ լավ գործելակերպերի հետ համապատասխանության մակարդակը (ներքին կարգավորող շրջանակ): • Սահմանադրական դատարանի սարքավորումների, ռեսուրսների եւ ենթակառուցվածքների որակը: • Ստեղծվելիք արբիտրաժային կենտրոնի անձնակազմի, նյութերի եւ

	սարքավորումների որակը: • Գործերի թիվը, որոնցով կիրառվել են Վեճերի այլընտրանքային լուծումներ:
2.2. Հանցավորության դեմ պայքար, քաղաքացիների անվտանգություն եւ պաշտպանություն	
Կոռուպցիայի, փողերի լվացման եւ կիբեռհանցագործությունների դեմ պայքար ✔ Առկա են անկախ եւ արդյունավետ հակակոռուպցիոն մարմինների միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական եւ քաղաքականության շրջանակներ, եւ գործում են հարակից ինստիտուտներ: ✔ Կիբեռհանցագործությունների վերաբերյալ ազգային օրենսդրությունը համահունչ է Բուդապեշտի կոնվենցիային, իսկ համապատասխան ինստիտուտների կարողությունները համապատասխանում են իրենց լիազորություններին: ✔ Բարելավվել է միջգերատեսչական համագործակցությունը եւ կիբեռհանցագործությունների քննության համար անհրաժեշտ տվյալների փոխանակումը: ✔ Համացանցային ծառայություններ մատուցողների հետ համագործակցության մշակույթը բարելավվել է համագործակցության իրավական հիմքերի միջոցով (ուշադրություն դարձնելով ընթացակարգային լիազորությունների եւ երաշխիքների, ինչպես նաեւ լրամշակված/ընդլայնված համագործակցության համաձայնագրերի վրա):	• Եվրոպական եւ միջազգային չափանիշներին կոռուպցիայի եւ կիբեռհանցագործության դեմ պայքարի գործող օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակների ու գործելակերպերի համապատասխանության մակարդակը: • Կիբեռհանցագործությունների ոլորտում ֆինանսական հետախուզության, թվային դատաբժշկական փորձաքննության եւ համագործակցության գործելակերպերի բնագավառում դատական իշխանության, դատախազների, քննիչների կարողությունների մակարդակը: • Կիբեռհանցագործության դեմ պայքարում իրավապահ մարմինների շահերի եւ մարդու հիմնարար իրավունքների ու իրավունքի գերակայության սկզբունքների նկատմամբ հարգանքի միջեւ հավասարակշռությունը: • Կիբեռհանցագործության դեմ պայքարին առնչվող քրեական գործերում միջազգային համագործակցության մակարդակն ու որակը: • Համացանցային ծառայություններ մատուցողների հետ համագործակցության մակարդակն ու որակը:
Քրեակատարողական հիմնարկներ եւ ոստիկանություն ✔ Քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների տրամադրման օրենսդրական և իրավակիրառ շրջանակները համահունչ են եվրոպական չափանիշներին եւ կիրառվում են համապատասխան շահառուների կողմից: ✔ Ազատությունից զրկված անձիք, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձիք եւ այլ խոցելի խմբեր օգտվում են վերականգնողական ծրագրերից, ինչպես նաեւ քրեակատարողական հիմնարկներում ավելի լավ առողջապահական ծառայություններից:	• Եվրոպական չափանիշներին եւ լավ գործելակերպերին քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների օրենսդրական և իրավակիրառ շրջանակների համապատասխանության մակարդակը: • Ազատությունից զրկված անձնանց հասանելի առողջապահական ծառայությունների (ներառյալ՝ մասնագիտացված առողջապահական ծառայությունները) մակարդակը: • Քրեակատարողական հիմնարկի վարչակազմից քրեակատարողական

✔ Ազատությունից զրկված անձանց հասանելի են մասնագիտացված առողջապահական ծառայությունները, ներառյալ՝ հոգեկան առողջության եւ թմրամիջոցների հետ կապված ծառայությունները: ✔ Քրեակատարողական համակարգում բժշկական անկախությունն ամրապնդված է: ✔ Պրոբացիան ավելի կայուն դեր է ստանում Հայաստանի դատական համակարգում: ✔ Պրոբացիայի ծառայության աշխատակազմը կատարելագործել է իր կարողությունները՝ իր նոր պարտականությունները կատարելու նպատակով: ✔ Համապատասխան բարեփոխումների արդյունքում ոստիկանությունը գործում է եվրոպական չափանիշներին համահունչ:	հիմնարկների բժշկական անձնակազմի անկախության մակարդակը: • Քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի եւ «Քրեակատարողական բժշկության կենտրոնի» (ՔԲԿ) անձնակազմի կոմպետենտության մակարդակը: • Պրոբացիայից օգտվող հանցագործություն կատարած անձանց թիվը: • Պրոբացիայի ծառայության անձնակազմի կոմպետենտության մակարդակը: • Ոստիկանության հաշվետվողականության մակարդակը:
Ժողովրդավարություն **Թեմատիկ արդյունք.** Հասարակության ժողովրդավարացումը խթանվում է արդար ընտրությունների, տեղական ժողովրդավարության ամրապնդման, ժողովրդավարական որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության եւ կրթության միջոցով:	
Արդյունքներ	**Ցուցանիշներ**
3.1. Ժողովրդավարական կառավարում	
Լավ կառավարման եւ տեղական կառավարման ոլորտի բարեփոխումների խթանում ✔ Տեղական ժողովրդավարության վերաբերյալ օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակը համահունչ է եվրոպական չափանիշներին: ✔ Ֆինանսական համահարթեցման շրջանակն ապահովում է ռեսուրսների ավելի անաչառ բաշխում՝ օրենսդրությանը համապատասխան՝ տարածաշրջանային անհավասարությունները եւ համայնքապետարանների բազմազան ֆինանսական կարողությունները հակակշռելու համար: ✔ Կենտրոնական կառավարությունը տեղական իշխանություններին շնորհել է հանրային գործառույթների եւ ծառայությունների մասով ավելի բարձր լիազորություններ եւ պատասխանատվություն: ✔ Տեղական եւ ԲԿԳ անդամ համայնքներն ու ՔՀԿ գործընկերներն	• Եվրոպական չափանիշներին եւ լավ գործելակերպերին տեղական ժողովրդավարության հետ կապված իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի համապատասխանության մակարդակը: • Ապակենտրոնացման մակարդակը: • Ֆինանսական համահարթեցման շրջանակի միջոցով տեղական կառավարման մարմիններին հատկացված ռեսուրսների մակարդակը: • Կենտրոնական եւ տեղական իշխանությունների միջեւ երկխոսության որակը: • Քաղաքականության մշակմանն առնչվող խորհրդակցություններին մասնակցող քաղաքացիների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների թիվը: • Տեղական իշխանությունների թափանցիկության եւ հանրային

ինստիտուցիոնալացրել են լավ կառավարման եւ ներառման սկզբունքները: ✔ Տեղական իշխանություններն ավելի շատ են քաղաքացիներին, այդ թվում՝ երիտասարդներին եւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ներառում քաղաքականության հետ կապված որոշումների կայացման գործընթացում: ✔ Տեղական իշխանություններն ակտիվորեն մասնակցում են տեղական տնտեսության զարգացման քաղաքականությանը: ✔ Կառավարության բարձրաստիճան մարմիններն իրենց ազգային միավորումների միջոցով պատշաճ կերպով խորհրդատվություն են տրամադրում տեղական իշխանություններին՝ անմիջականորեն նրանց առնչվող հարցերի հետ կապված: ✔ Տեղական իշխանություններն ավելի թափանցիկ են, հաշվետու եւ գործում են էթիկայի նորմերին համապատասխան, ինչպես նաեւ խթանում են տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացի նկատմամբ քաղաքացիների ընդլայնված վերահսկողությունը: ✔ Ընտրությունների հարցերով վարչական մարմինների անկողմնակալությունն ու պրոֆեսիոնալիզմը բարձրացված է բոլոր մակարդակներում: ✔ Ընտրությունների վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանումն իրականացվում է ավելի արդյունավետ եւ պրոֆեսիոնալ կերպով: ✔ Ընտրական գործընթացներն ավելի ներառական են, գենդերային առումով հավասարակշռված եւ թափանցիկ: ✔ Ընտրական կոռուպցիան (ձայներ գնելը, ընտրողների վրա ճնշումները), այդ թվում՝ գյուղական վայրերում, նվազել է: ✔ Իրավիճակը մոնիթորինգի ենթարկելու ՄԻՊ գրասենյակի կարողությունները կատարելագործվել են եւ աջակցում են ավելի լավ կառավարմանը:	հաշվետվողականության մակարդակը: • Ընտրական օրենսդրության մեջ եւ գործելակերպում եվրոպական չափանիշների ներդրման ծավալը: • Ընտրությունների հարցերով վարչական մարմինների պրոֆեսիոնալիզմի մակարդակը: • Ընտրական գործընթացի նկատմամբ վստահության մակարդակը: • Ընտրությունների վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանման ընդհանուր որակը: • Ընտրական գործընթացների ներառականության եւ թափանցիկության մակարդակը: • Ընտրական գործընթացներին գենդերային մասնակցության մակարդակը: • Կոռուպցիայի մակարդակն ընտրական գործընթացներում: • Ընտրությունների հետ կապված վեճերի լուծման համակարգի արդյունավետության մակարդակը:

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի նկարագրություն	Մեղմացնող գործողություններ
Քաղաքական ռիսկեր	
• **Կառավարության առաջնահերթությունների փոփոխությունը կամ բարեփոխումների մասով իրական քաղաքական կամքի բացակայությունը,** ինչը հանգեցնում է ծրագրերի իրականացմանը ցածր մակարդակի քաղաքական աջակցության եւ բարեփոխումների համար մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների հատկացումների կրճատման:	Քաղաքական ամենաբարձր մակարդակով տեղեկացնել այն պարտավորությունների մասին, որոնք պետությունը ստանձնել է Եվրոպայի խորհրդին անդամակցելիս: Խթանել չափանիշների կիրառման վերաբերյալ իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ երկխոսությունը: Միջազգային գործընկերների (հատկապես ԵՄ-ի) հետ քննարկել մեղմացման ռազմավարությունները:
• **Հասարակության աճող բեւեռացումը,** որը ստեղծում է մի միջավայր, որում բարեփոխումների համար աջակցություն չի ցուցաբերվում, ինչպես նաեւ հանգեցնում է Հայաստանի քաղաքացիների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) շրջանում Եվրոպայի խորհրդի դերի եւ լիազորությունների հետ կապված խառը ընկալման:	Բարձրացնել թիրախային խմբերի շրջանում իրազեկության մակարդակը, որպեսզի նրանք ընկալեն Կազմակերպության չափանիշների կիրառման կարեւորությունը: Խթանել չափանիշների կիրառման վերաբերյալ իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ երկխոսությունը: Ուշադրություն դարձնել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը: Միջազգային գործընկերների (հատկապես ԵՄ-ի) հետ քննարկել մեղմացման ռազմավարությունները:
• **Դոնորների առաջնահերթությունների փոփոխությունը,** ինչը հանգեցնում է Հայաստանի օգտին կատարվող կամավոր ներդրումների կրճատմանը:	Քաղաքական ամենաբարձր մակարդակով ամրապնդել դոնորների հետ հաղորդակցությունը:
• **Երեւանյան գրասենյակում հիմնական ղեկավար պաշտոնների թափուր մնալու երկար տեւողությունը,** ինչը հանգեցնում է Հայաստանում Եվրոպայի խորհրդի վերահսկողության նվազմանը, Գործողությունների ծրագրի ֆինանսավորման ցածր մակարդակի եւ ծրագրի իրականացմանը ցածր մակարդակի	Նախապես սկսել պատրաստվել հաստիքի համալրմանը՝ հնարավորինս սահմանափակելու աշխատատեղերի թափուր մնալու տեւողությունը: Անհրաժեշտության դեպքում տրամադրել լրացուցիչ աջակցություն գլխամասային գրասենյակից:

քաղաքական աջակցության:	
Նախագծի/ծրագրի իրագործման հետ կապված ռիսկեր	
• **Գործողությունների ծրագրի կարեւոր ոլորտների իրականացման համար բավարար ֆինանսավորման բացակայություն,** ինչը հանգեցնում է մի շարք ոլորտներում համագործակցության դադարեցման, շարժման արագության կորստի՝ ազդելով Հայաստանում բարեփոխումների իրականացման տեմպի եւ արդյունավետության եւ Եվրոպայի խորհրդի ենթադրյալ համապատասխանության վրա:	Ապահովել ռեսուրսների արդյունավետ ներգրավմանն ուղղված ջանքերի գործադրում՝ համագործակցելով գլխամասային գրասենյակի եւ Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակի հետ: Պահպանել բաց հաղորդակցման ուղիներն ավանդական դոնորների հետ եւ փնտրել ֆինանսավորման նոր աղբյուրներ: Կազմակերպել միջոցառումներ հիմնական դոնորների հետ: Մշակել ռեսուրսների բաշխման ռազմավարություն՝ հաշվի առնելով փոխկապակցվածությունների ներուժը եւ ընդհանուր արդյունավետությունը: Շարունակել արձագանքել գործընկերների եւ դոնորների դիտարկումներին՝ ծրագրերի պլանավորումը, իրականացումը, արդյունքահեն մոնիթորինգն ու հաշվետվությունների ներկայացման գործելակերպերը բարելավելու նպատակով, որպեսզի հնարավոր լինի ներգրավել եւ պահել դոնորներին:
• **Անարդյունավետ համակարգում ազգային եւ միջազգային գործընկերների հետ,** ինչը հանգեցնում է կրկնությունների, փոխկապակցվածության կորստի, ռեսուրսների վատնման եւ հեղինակության հետ կապված խնդիրների:	Ավելացնել համակարգմանն ուղղված ջանքերն ազգային մակարդակում: Ապահովել ծրագրերի եւ համակարգված իրականացման մասով համապատասխան հաղորդակցություն շահագրգիռ կողմերի միջեւ՝ ըստ անհրաժեշտության: Կատարելագործել համատեղ/համակարգված գործունեության եւ հաղորդակցության գործելակերպը:
• **Պետական եւ ոչ պետական անձնակազմի եւ այլ հիմնական գործընկերների՝ բարձր մակարդակի հոսունություն,** ինչը հանգեցնում է նոու-հաուի եւ ցանցային կապերի կորստի եւ գործողությունների ծրագրի իրականացման խափանումների:	Անձնակազմի փոփոխությունների մանրամասն մոնիթորինգ եւ կապերի արագ վերականգնում: Աջակցություն ցուցաբերել երկարաժամկետ ինստիտուցիոնալ հաջորդականությանը գործընկեր հաստատությունների մակարդակով եւ նպաստել գիտելիքի կառավարման կայուն գործելակերպերին: Խրախուսել ծրագրի իրականացման հարցում համատեղ առաջնորդության մոտեցումը՝ բարձրացնելու շահառուների պատասխանատվության եւ արդյունքների մասով հանձնառության մակարդակը:

• **Անարդյունավետ համագործակցություն Հայաստանի ՔՀԿ-ների հետ,** ինչը հանգեցնում է իրականացվող ծրագրերի նկատմամբ ազգային պատասխանատվության, Հայաստանի բնակչության կողմից աջակցության ցածր մակարդակի, ծրագրերի ցածր արդյունավետության եւ հեղինակության հետ կապված խնդիրների:	Ինչպես գործողությունների ծրագրի, այնպես էլ ծրագրի մակարդակով ընդունել ՔՀԿ-ների հետ կապված ներառական մոտեցում եւ՛ պլանավորման, եւ՛ իրականացման փուլերում: Ակտիվորեն փնտրել ՔՀԿ-ների հետ համագործակցության նոր հնարավորություններ՝ հիմնվելով մասնագիտական եւ թափանցիկ ընտրական ընթացակարգերի վրա: Շարունակել զարգացնել ՔՀԿ-ի մասնագիտական կարողությունները՝ կարողությունների զարգացմանն ուղղված հատուկ միջոցառումների եւ ծրագրի իրականացման հարցում համագործակցության միջոցով:
Հաղորդակցության հետ կապված ռիսկեր	
• **Անբավարար կամ անարդյունավետ հաղորդակցություն,** ինչը հանգեցնում է հիմնական միջազգային եւ ազգային գործընկերների, թիրախային խմբերի եւ ընդհանուր բնակչության շրջանում բարեփոխումների առավելությունների եւ Հայաստանում իրականացվող բարեփոխումների հետ կապված Եվրոպայի խորհրդի կատարած ներդրումների մասին գիտելիքների ցածր մակարդակի:	Ապահովել, որ յուրաքանչյուր ծրագրի համար մշակվի դրա մասով հաղորդակցման ռազմավարություն՝ շահագրգիռ կողմերին տեղեկացնելու եւ Հայաստանում Կազմակերպության գործունեության նկատմամբ հետաքրքրությունը խթանելու նպատակով: Ապահովել արդյունքահեն հաղորդակցություն, որում ներգրավված կլինեն տարբեր թիրախային խմբեր՝ Հայաստանում իրականացվող բարեփոխումների հետ կապված Եվրոպայի խորհրդի կատարած ներդրումների եւ Հայաստանի քաղաքացիների առօրյա կյանքի վրա դրա ազդեցության վերաբերյալ հստակ ուղերձներով: Բարձրացնել տեղեկատվության փոխանակման արագությունը: Շարունակել հաղորդակցվել ինչպես անգլերենով, այնպես էլ հայերենով՝ ապահովելու համար հնարավորինս լայն հանրայնացում:
Առողջական վիճակի հետ կապված ռիսկեր	
• **Հայաստանում սոցիալական հեռավորության կանոնների եւ հավաքների սահմանափակումների կիրառում՝** անհնարին դարձնելով ոչ առցանց միջոցառումների անցկացումը:	Հիմնվել անցյալի փորձի եւ Քովիդ-19 համավարակի շրջանակներում իրականացված միջոցառումների վրա. • հիմնվել հանդիպումներ եւ վերապատրաստման դասընթացներ անցկացնելու այլընտրանքային մեթոդների վրա (տեսակոնֆերանսներ, վեբինարներ). • ուշադիր հետեւել առողջապահական իրավիճակին՝ կարողանալու համար

	հնարավորինս շուտ անցկացնել ոչ առցանց միջոցառումներ, որոնք թեմայի զգայունության պատճառով չեն կարող անցկացվել առցանց (ամբողջությամբ իրականացնելով սոցիալական հեռավորության հետ կապված միջոցառումները):
• **Ազգային գործընկերների առաջնահերթությունների փոփոխություններ՝** հավանաբար կոչ անելով վերանայել ծրագրերը եւ նրանց աշխատանքային պլանները:	Պահպանել սերտ հաղորդակցություն ազգային իշխանությունների հետ եւ արձագանքել փոփոխվող կարիքներին՝ շահառուների կարիքները լավագույնս լուծելու համար՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքներին: Թարգմանել եւ տարածել Եվրոպայի խորհրդի չափանիշները եւ հատուկ հանձնարարականները՝ ապահովելու համար, որ մարդու իրավունքների պաշտպանությունը, իրավունքի գերակայությունը եւ ժողովրդավարությունը շարունակեն լինել իշխանությունների օրակարգում:
• **Միջազգային եւ տեղական ճամփորդությունների նկատմամբ սահմանափակումների կիրառում՝** անհնարին դարձնելով ոլորտում գործունեություն ծավալելը:	Հիմնվել անցյալի փորձի եւ Քովիդ-19 համավարակի շրջանակներում իրականացված միջոցառումների վրա. • ուշադրություն դարձնել այնպիսի գործողությունների վրա, որոնք կարող են իրականացվել հեռակա կարգով՝ մինչեւ սահմանափակումների չեղարկումը, ինչպիսիք են կարճաժամկետ հետազոտությունները եւ գրասենյակային աշխատանքը. • պարբերաբար վերանայել աշխատանքային պլանները (ֆինանսական միջոցների հնարավոր վերաբաշխմամբ)՝ դրանք կիրառելի սահմանափակումներին համապատասխանեցնելու համար. • ուսումնասիրել աշխատանքի այլընտրանքային մեթոդները՝ վիդեոկոնֆերանս, առցանց վերապատրաստման դասընթացներ եւ ուսումնասիրություններ եւ այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

(բոլոր գումարները եվրոյով)

	Ոլորտներ	Ընդհանուր բյուջե
1	**Մարդու իրավունքներ**	**10,516,904**
	1. ՄԻԵԿ-ի արդյունավետ իրականացում	7,027,440
	2. Հավասարություն եւ մարդու արժանապատվություն	1,876,333
	3. Խտրականության բացառում, բազմազանություն եւ ներառում	865,312
	4. Սոցիալական իրավունքներ	747,819
2	**Իրավունքի գերակայություն**	**5,601,968**
	1. Իրավունքի գերակայության վրա հիմնված կառույցներ	2,319,762
	2. Հանցավորության դեմ պայքար, քաղաքացիների անվտանգություն եւ պաշտպանություն	3,282,206
3	**Ժողովրդավարություն**	**2,550,000**
	1. Ժողովրդավարական կառավարում	2,550,000
	Համակարգում, կառավարում եւ պաշարներ	**331,128**
	1. ԼԿԳ II համակարգում. Պահուստ. Արագ արձագանքման մեխանիզմ	24,982
	2. Ընդհանուր կառավարման ծախսեր	306,146
	ԸՆԴԱՄԵՆԸ	**19,000,000**

ՀԱՎԵԼՎԱԾ IV. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ/ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր

1. Տեխնիկական համագործակցություն Հայաստանի հետ

- *Հայաստանի համար իրականացվող Եվրոպայի խորհրդի 2019-2022 թվականների գործողությունների ծրագիր*
- *2019-2022 թվականների առաջընթացի գնահատման զեկույց*
- *Հայաստանի համար իրականացվող Եվրոպայի խորհրդի 2015-2018 թվականների գործողությունների ծրագիր*
- *2015-2018 թվականների վերջնական զեկույց*
- *2015-2018 թվականների առաջընթացի գնահատման զեկույց*
- *Հայաստանի համար իրականացվող Եվրոպայի խորհրդի 2012-2014 թվականների գործողությունների ծրագիր*
- *2012-2014 թվականների վերջնական զեկույց*
- *2012-2014 թվականների առաջընթացի գնահատման զեկույց*

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարան

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ Հայաստանի հետ կապված նախադեպային իրավունքը, մասնավորապես՝ ոստիկանության կողմից արգելանքի վերցված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի եւ (կամ) խոշտանգումների դեպքերի, ժամկետային զինծառայողների մահվան դեպքերի արդյունավետ քննության բացակայության, ազատազրկման մեջ գտնվող անձանց համապատասխան բժշկական օգնություն չտրամադրելու առնչությամբ:
- *ՄԻԵԿ-ի հետ կապված փաստեր եւ թվեր՝ ըստ պետությունների*

3. Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար

- *Հայաստանի վերաբերյալ ազգային զեկույց, 2018 թվական*
- *Հայաստանի վերաբերյալ ազգային զեկույց, 2011 թվական*

4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե

- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի որոշումներ

o *CM/Del/Dec(2022)1428/H46-3 որոշումը ոստիկանության կողմից արգելանքի վերցված անձանց մահվան կամ խոշտանգումների եւ արդյունավետ քննությունների պակասի հետ կապված ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վերաբերյալ*

o *CM/Notes/1377/H46-2-ը իշխանությունների կողմից 2008 թվականի նախագահական ընտրությունների արդյունքների դեմ ընդդիմության լայնածավալ բողոքի ցույցերը ցրելու, այդ թվում՝ վատ վերաբերմունքի եւ անարդյունավետ քննությունների, կալանքի վատ պայմանների, խաղաղ հավաքների նկատմամբ հսկողության հետ կապված ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վերաբերյալ*

o *CM/Del/Dec(2019)1340/H46-1 որոշումը կալանքի տակ պահվող եւ լուրջ հիվանդություններով տառապող անձանց համար համապատասխան բժշկական օգնության հասանելիության բացակայության հետ կապված ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վերաբերյալ*

- Նախարարների կոմիտեի հանձնարարականներ

o *CM/Rec(2022)13 հանձնարարականը արտահայտվելու ազատության վրա թվային տեխնոլոգիաների ազդեցությունների վերաբերյալ*

o *CM/Rec(2022)11 հանձնարարականը լրատվամիջոցների եւ հաղորդակցման կառավարման սկզբունքների վերաբերյալ*

o *CM/Rec(2022)6 հանձնարարականը երիտասարդական քաղաքացիական հասարակությունը եւ երիտասարդներին պաշտպանելու եւ ժողովրդավարական գործընթացներում նրանց մասնակցությանն աջակցելու վերաբերյալ*

o *CM/Rec(2018)4 հանձնարարականը տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցության վերաբերյալ*

o *CM/Rec(2018)2 հանձնարարականը համացանցային միջնորդների դերերի եւ պատասխանատվությունների վերաբերյալ*

o *CM/Rec(2018)1 հանձնարարականը լրատվության միջոցների բազմակարծության եւ լրատվության միջոցների նկատմամբ սեփականության իրավունքների թափանցիկության վերաբերյալ*

o *CM/Rec(2015)1 հանձնարարականը միջմշակութային ինտեգրման վերաբերյալ*

o *CM/Rec(2010)5 հանձնարարականը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ*

o *CM/Rec(2010)4 հանձնարարականը զինված ուժերի անդամների՝ մարդու իրավունքների վերաբերյալ*

o *Rec(2000)21 հանձնարարականը փաստաբանական գործունեություն իրականացնելու ազատության վերաբերյալ*

5. Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրես

- *Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա* (ԵՊՇ թիվ 122)

- *Տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունքի վերաբերյալ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրություն (ԵԽՊՇ թիվ 207)*

- *Հայաստանում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառման մոնիթորինգ,* Հանձնարարական թիվ 456 (2021)

- *Հայաստանում տեղի ունեցած մասնակի ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ տեղեկատվական զեկույց* (2021 թվականի դեկտեմբերի 5)

6. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

- *Թիվ 2209 (2021) հանձնարարականը «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության/Լեռնային Ղարաբաղի հակամարտության մարդասիրական հետեւանքների վերաբերյալ»*

- *Թիվ 1742 (2006) հանձնարարականը «Զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին»*

- *Թիվ 2427 (2022) բանաձեւը «Հայաստանում ժողովրդական ինստիտուտների գործունեության մասին»*

- *Թիվ 2418 (2022) բանաձեւը «Հարավային Կովկասում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ»*

- *Թիվ 2077 (2015) բանաձեւը «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններում նախնական կալանքի չափաշահման վերաբերյալ»*

- *Թիվ 15432 զեկույցը «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին»* (2022 թվականի հունվարի 10)

- *Թիվ 15352 զեկույցը «Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկման մասին» (2021 թվականի հունիսի 20)*

- *Թիվ 14801 զեկույցը «Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկման մասին» (2018 թվականի դեկտեմբերի 9)*

- *Թիվ 15352 զեկույցը «Հայաստանում խորհրդարանական ընտրությունների դիտարկման մասին» (2021 թվականի հունիսի 20)*

7. Մոնիթորինգի եւ փորձագիտական խորհրդատվական մարմիններ

- «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով). Հայաստանի վերաբերյալ կարծիքներ

o *Կարծիք թիվ 1026/2021. «Ընտրական օրենսգրքի եւ հարակից օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ հրատապ համատեղ կարծիք»*

o *Կարծիք թիվ 844/2016. «Հանրաքվեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ համատեղ կարծիք»*

o *Կարծիք թիվ 843/2016. «Կուսակցությունների մասին սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ համատեղ կարծիք»*

o *Կարծիք թիվ 835/2016. «Ընտրական օրենսգրքի վերաբերյալ երկրորդ համատեղ կարծիք»*

- Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (ՌԱԵՀ)

o *CRI(2019)39, ՌԱԵՀ եզրակացությունները «Հայաստանի վերաբերյալ միջանկյալ ուսումնասիրության ենթակա առաջարկությունների կատարման մասին», 2019 թվականի հունիս*

o *CRI(2016)37, Հայաստանի վերաբերյալ ՌԱԵՀ-ի զեկույցը (մոնիթորինգի հինգերորդ շրջափուլ), 2016 թվականի հունիս*

- Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (ՏՓԼԵԽ)

o *CM/Del/Dec(2021)1420/10.2. Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույցում պարունակվող՝ անհապաղ գործողություններ պահանջող առաջարկությունների իրականացման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի գնահատումը (2021 թվականի դեկտեմբերի 8)*

- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի հարցերով խորհրդատվական կողմիտե (ՇԿԽԿ)

o *ACFC/OP/IV(2016)006, Հայաստանի վերաբերյալ չորրորդ կարծիք, 2016 թվականի մայիսի 26*

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե (ՍԻԵԿ)

o *Հայաստանի վերաբերյալ 2020 թվականի եզրակացություններ*

o *Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ CP/Rec(2022)01 հանձնարարական*

o *«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (ԵԽՊՇ թիվ 197)*

- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) կարծիքները դատավորների անկախության, անկողմնակալության եւ կոմպետենտության վերաբերյալ, ներառյալ՝

o *CM(2022)4-add. Կարծիք թիվ 24 (2021). Դատական համակարգի խորհուրդների էվոլյուցիան եւ նրանց դերը անկախ եւ անաչառ դատական համակարգերում, 2022 թվականի հունիսի 17*

- Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (ԱԱԵՀ). Եվրոպական դատական համակարգեր

o *2020 թվականի գնահատման շրջափուլ. Մաս 1 (աղյուսակներ, գծապատկերներ եւ վերլուծություններ)*

o *2020 թվականի գնահատման շրջափուլ. Մաս 2 (Երկրների նկարագիրը)*

o *Հայաստան. Դատական համակարգի գնահատումը (2018 - 2020 թվականներ)*

- «Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիա (ԽԿԿ)

o *CPT/Inf (2021) 10, Հայաստանի կառավարությանը ներկայացված՝ Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի՝ Հայաստան կատարած այցի վերաբերյալ զեկույց, 2021 թվականի մայիսի 26*

- Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ (ԳՐԵԿՈ)

o *GrecoRC4(2021)15. Պահանջների կատարման վերաբերյալ միջանկյալ զեկույց: Գնահատման չորրորդ փուլ: Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում, 2021 թվականի սեպտեմբերի 22*

o *GrecoRC4(2019)21. Հայաստանի կողմից պահանջների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույց: Գնահատման չորրորդ փուլ: Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում, 2019 թվականի դեկտեմբերի 6*

o *GrecoRC4(2017)15. Հայաստանի կողմից պահանջների կատարման վերաբերյալ զեկույց: Գնահատման չորրորդ փուլ: Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում, 2017 թվականի դեկտեմբերի 8*

o *Greco Eval IV Rep (2015) 1E. Հայաստանի վերաբերյալ գնահատման զեկույց: Գնահատման չորրորդ փուլ: Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում, 2015 թվականի հոկտեմբերի 16*

- Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների հանձնաժողով (ՄԱՆԻՎԱԼ)

o *MONEYVAL(2015)34. Հինգերորդ փուլի փոխադարձ գնահատման զեկույց, «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցներ», Հայաստան, 2015 թվականի դեկտեմբեր*

8. Ուղեցույցներ

- *Գենդերային մեյնսթրիմինգի մասով Եվրոպայի խորհրդի գործիքակազմ համագործակցային ծրագրերի համար*

- *Եվրոպայի խորհրդի՝ գենդերային հավասարության 2018-2023 թվականների ռազմավարություն*

- *Եվրոպայի խորհրդի՝ երեխաների իրավունքների 2016-2021 թվականների ռազմավարություն*

- *Եվրոպայի խորհրդի համագործակցային գործողություններին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության վերաբերյալ ուղեցույց*

- *Քաղաքական որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության վերաբերյալ ուղեցույց*
- *Ծրագրերի կառավարման առնչությամբ Եվրոպայի խորհրդի մեթոդաբանությունը*
- *Ռիսկերի կառավարման մասով Եվրոպայի խորհրդի քաղաքականությունը*
- *Ռիսկերի կառավարման մասով Եվրոպայի խորհրդի ուղեցույցը*

Հայաստանի ազգային քաղաքականության փաստաթղթեր

- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն
- Հայաստանի դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարություն
- Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն
- Հայաստանի Հանրապետության 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարություն
- 2020 թվականին ընդունված՝ Ազգային անվտանգության ռազմավարության 6-րդ գլուխ՝ «Ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության ապահովումը»
- Հայաստանի Հանրապետության քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարություն

Այլ

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելություն, 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ *Նախնական եզրահանգումների եւ եզրակացությունների վերաբերյալ հայտարարությունը* եւ *Վերջնական զեկույցը:* 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ *Վերջնական զեկույցը* եւ 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ *Վերջնական զեկույցը:*

Եվրոպայի խորհուրդ
Ծրագրերի համակարգման տնօրինություն

Եվրոպայի պողոտա
F-67075 Ստրասբուրգ
Էլ-հասցե՝ dpc@coe.int
www.coe.int/programmes

Եվրոպայի խորհրդի
Գրասենյակ Երևանում

Էլիտ Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ
Խորենացի 15
Երևան 0010, Հայաստան
Հեռ.՝ +374 10 54 63 22 կամ +374 60 46 00 52
Ֆաքս՝ +374 10 54 63 19
Էլ-հասցե՝ coe.yerevan@coe.int
www.coe.int/yerevan

PREMS 145422 – Լուսանկարը՝ © Դավիթ Հակոբյան

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների պաշտպանության առաջատար կազմակերպություն է Եվրոպայում: Այն ներառում է 46 անդամ պետություն, ներառյալ՝ Եվրոպական միության բոլոր անդամ երկրները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ երկրները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ պայմանագիր, որը նախատեսված է պաշտպանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումը անդամ երկրներում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE